

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԻՆԵ ԿԱՐԼԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՇԱՆԱՅԻՆ

ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԵԶՎՈՒՄ ԵՎ ԽՈՍՔՈՒՄ

Ժ. 02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ք. Գասպարյան

ԵՐԵՎԱՆ – 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ I	
ԱՐԴԻ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՇԱՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	
1.1 Ժամանակախց անգլերենի նշանային բաղադրությունները և դրանց հարաբերակցությունը	12
1.2 Լեզվական նշանի կարգային իմաստները	21
ԳԼՈՒԽ II	
ԱԾԱՆՑԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (բազմահատկանիշ դասակարգում)	49
ԳԼՈՒԽ III	
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱՌԱԶԵՎԵՐԻ ԵՎ ՎԵՐԲԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	
3.1 Բաղադրական և ձևակազմական հիմքերի նշանային արժեքը	88
3.2 Նշանային բաղադրությունները վերբառային մակարդակներում	103
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	126
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	129
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	131

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նշանների բնույթը վաղուց է հետաքրքրել մարդկությանը, և դրանց ուսումնասիրությունը դարավոր պատմություն ունի: Սակայն նշանագիտությունը՝ որպես հետազոտության ինքնուրույն և համապարփակ բնագավառ, կազմավորվել և բուռն զարգացում է ապրել 19-20-րդ դարերում: Ընդհանուր նշանագիտության հիմքերը գցել է ամերիկացի փիլիսոփա և տրամաբան Չառլզ Փիրսը, որի կատարած բազմաբնույթ դասակարգումներից այսօր առավելապես հիշատակվում են նշանի երեք տեսակները՝ **ցուցանշաններ, պատկերանշաններ, խորհրդանշաններ** [Пирс 2000, II, 75-97, Fisch, Max H, Kenneth L. Ketner, and Christian J. W. Kloesel. 1986]: Նշանագիտության ձևավորման հարցում դեր է ունեցել նաև գերմանացի փիլիսոփա Գոթլոբ Ֆրեգեն, որն առաջինն է անդրադարձել նշանի **նշանակության** և **իմաստի** տարբերակման խնդրին [Фреге 2000, 215-246]: Չառլզ Փիրսի՝ նշանների դասակարգմանը մոտ խմբավորում է կատարել գերմանացի հոգեբան և լեզվաբան Կարլ Բյուլերը, ըստ որի՝ ունենք **արտահայտման գործառույթով** օժտված **հայտանշաններ, հաղորդման գործառույթով** օժտված **ազդանշաններ** և **վերաբերման գործառույթով** օժտված **խորհրդանշաններ** [Bühler 1934, 30-49]:

Նշանագիտության ձևավորման մեջ առաջնային է և անուրանալի լեզվաբանության դերը: Ավելին՝ նշանագիտական հիմնարար դրույթները տվել և այսօր էլ առավելապես տալիս են լեզվաբանները: Այսպես՝ ժամանակագրորեն Կ. Բյուլերի ուսումնասիրություններին նախորդել է (1913-ին) Ֆ. դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը» [Սոսյուր 2008], որտեղ հեղինակն այն կարծիքն է հայտնում, թե հասարակական հոգեբանության, հետևաբար ընդհանուր հոգեբանության ներսում հարկ է ձևավորել մի համապարփակ գիտություն՝ **նշանաբանություն** (սեմիոլոգիա), որի բաժիններից մեկը լինի լեզվաբանությունը [Սոսյուր 2008, 32]: Փաստորեն, ըստ Ֆ. դը Սոսյուրի, նշված գիտությունները ենթաստորադաս հարաբերության մեջ են: Այսօր ապացուցման կարիք չունի և կասկածից վեր է, որ նշանագիտությունը (ըստ Սոսյուրի՝ նշանաբանությունը) առավել ընդգրկուն գիտություն է, քան մյուս երկուսը, սակայն փաստ է նաև, որ նշված երեք գիտակարգերը, փոխկապվածությամբ հանդերձ, անկախ

գիտություններ են: Թե՛ Կ. Բյուլերի, թե՛ Ֆ. դը Սոսյուրի անուրանալի դերն այն է, որ լեզվաբանության զարգացումը մի նոր աստիճանի հասցրին՝ շնորհիվ լեզվական միավորների ու երևույթների նշանային բնույթի համակարգային բացահայտման: Հիմնվելով Կարլ Բյուլերի առանձնացրած գործառույթների վրա՝ կառուցվածքային լեզվաբանության Պրահայի գործառական դպրոցի ներկայացուցիչ Ռ. Յակոբսոնը ևս մի քանի գործառույթ է հավելում [Якобсон 1975 (համացանց)]՝ **խոսքապահովման** կամ **շփման** (ֆատիկ) **գործառույթ**, որի էությունը համապատասխան արտահայտություններով հաղորդակցման ընթացքն ապահովելն է միջավայր, տրամադրություն ստեղծելու համար («բարև», «ինչպե՞ս ես», «ի՞նչ կա- չկա», «դե լավ, հաջողություն» և այլն), **անդրլեզվական գործառույթ** (լեզվի լեզվաբանական գործառույթն է), **բանաստեղծական գործառույթ** (ուշադրության կենտրոնում նշանն է, այսինքն՝ ոչ թե **ինչ**-ը, այլ **ինչպես**-ը), **ցուցման** կամ **իրադրային գործառույթ** («ես – հիմա – այստեղ» կանխենթադրույթներով [Աթայան 1981, 215-216]):

Նշանագիտության հետագա զարգացման համար կարևոր դեր ունեցավ ամերիկացի նշանագետ Չառլզ Մորիսի տեսությունը՝ հիմնված իր մեծ նախորդի՝ Չառլզ Փիրսի հայեցակարգի վրա, որի դրույթների եռատման սկզբունքով առաջնորդվելով՝ Չ. Մորիսը հստակորեն տալիս է նշանագիտության բաժինները՝ իմաստաբանություն (սեմանտիկա), շարաբանություն (սինտակտիկա), գործաբանություն (պրագմատիկա) [Моррис 1983, 37-89, Parret 1983]:

Խորհրդային իրականության մեջ նշանագիտությունը կիրեռնետիկայի, կառուցվածքաբանության, ծագումնաբանության (գենետիկա) պես արգելված գիտակարգ էր տևական ժամանակ: Հետստալինյան շրջանում արգելապատնեշը գլխավոր հաղթահարողները եղան հայ փիլիսոփաներն ու լեզվաբանները: Այս ոլորտում առաջին ուսումնասիրությունը Լ. Հ. Աբրահամյանի «Նշանների տեսության իմացաբանական խնդիրները» մենագրությունն է [Абрамян 1965]: Այնուհետև մեկը մյուսին հաջորում են Է. Ավետյանի, Ս. Վարդազարյանի, Է. Աթայանի թե՛ «զուտ» նշանագիտական, թե՛ լեզվանշանագիտական քննախոսությունների հրապարակումները [Аветян 1968, 1979, 1989, Вартазарян 1973, Атаян 1976, Աթայան 1981]: Մեր օրերում նույնպես չեն դադարել լեզվանշանագիտական

հետազոտությունները Հայաստանում: Այսօր դրանք շարունակողները հիմնականում Է. Աթայանի և Է. Ավետյանի սաներն են [Աբրահամյան 1988, 34-44, 2011, 2017 (ԲԵՀ), 2017 (Միջազգային գիտաժողով), Մուսայելյան 2011, Գյուլգատյան 2015, 2017 (ԲԵՀ), Абрамян 2011]:

Նշանագիտությունը անչափ մեծ հնարավորություն է տալիս մինչև իսկ սպառիչ համարված բացահայտումները նորովի մեկնաբանելու: Սա պայմանավորված է այս գիտակարգի՝ նշանների բնույթն ու հարաբերություններն առավելապես դիալեկտիկական մեթոդաբանությամբ վեր հանելու թելադրանքով: Սրանով է պայմանավորված նաև նշանագիտության մեջ բազմաթիվ հոսանքների առաջացումը թե՛ արտերկրում, թե՛ Հայաստանում: Մասնավորապես Հայաստանում լեզվանշանագիտությունը բեկումնային մակարդակի հասցրեց Է. Աթայանը՝ դիալեկտիկական բազմաչափության և հակադրամիասնության խորքով հիմք դնելով լեզվաբանության պատմության նորագույն (չորրորդ) փուլին [Գյուլգատյան 2017 (Միջազգային գիտաժողով), 7-20]: Ռուս գիտական իրականության մեջ նշանագիտության մարզում ինքնատիպություն բերեցին Ալեքսեյ Լոսևն ու Յուրի Ստեպանովը [Лосев 1982, Степанов 1971]:

Թեև հետագայում մեծ ընդգրկում է ունեցել լեզվանշանագիտությունը Եվրոպայում և ԱՄՆ-ում, բայց ամբողջը հնարավոր չէ թվարկել այստեղ, ուստի կանդրադառնանք մի քանի հեղինակի միայն, որոնք մեր կարծիքով նույնպես կարևոր դերակատարում են ունեցել լեզվանշանագիտության կայացման գործում: Նախ նշենք ֆրանսիացի լեզվաբան Էմիլ Բենվենիստի «Լեզվի նշանաբանություն» և «Լեզվական նշանի բնույթը» հոդվածները, որտեղ այդ նշանը բնորոշելիս հեղինակը վիճարկում է Ֆ. դը Սոսյուրի՝ լեզվական նշանի գերազանցապես պայմանական լինելու դրույթը [Бенвенист 1974, 69-96]: Եվրոպայում և ԱՄՆ-ում նույնպես տարբեր հոսանքներ են ձևավորվում [Copeland 1984, Deledalle 1989, Eschbach 1983, Hamel Steven 2011, Hawkes Terence 1977]: Նշված տարածքում ևս հատուկ ուշադրություն են դարձրել նշանագիտության և դիալեկտիկայի փոխհարաբերությանը, դրանց անբակտելի կապին [Zima 1981]:

Ամենից տարածված տեսակետի համաձայն՝ նշանը երկալան կազմություն է՝ նշանակյալի (բովանդակության) և նշանակչի (արտահայտության) բևեռներով

[Michaels 2004]: Այդ բևեռները կոչվում են նաև պլաններ՝ բովանդակության պլան և արտահայտության պլան [Martin 1978, 15-22]:

Լեզվական նշանները լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ նշանները ձևային են՝ նվազագույն երկպլան միավորները: Բաղադրյալ նշաններն առնվազն երկբաղադրիչ կազմություններ են՝ բաղադրյալ բառ, շարույթ, առնվազն երկանդամ ասույթ, գերասույթ (բարդ ստորադասական նախադասություն), վերասույթ (տեքստ): Սրանք էլ հենց կոչվում ենք նշանային բաղադրություններ:

Նշանը և նշանային բաղադրությունն ընդհանրական հասկացություններ են և հատուկ են բոլոր լեզուներին [Sebeok 2001]: Չնայած դրան՝ յուրաքանչյուր լեզու թելադրում է իր կառուցվածքային տիպին հատուկ նշանային մասնավոր դրսևորումներ: Հասկանալի է, որ անգլերենը ևս, լինելով անջատական տիպի լեզու, նշանների և նշանային բաղադրությունների արտահայտության յուրակերպություններ ունի, որոնք փորձելու ենք բացահայտել մեր աշխատանքում:

Սույն աշխատանքում, այսպիսով, **ուսումնասիրության առարկան** ժամանակակից անգլերենի ստորակարգային տարբեր մակարդակներում տեղակայված, բայց միասնական սկզբունքով դիտարկվող նշանային բաղադրությունների բազմությունն է:

Աշխատանքի նպատակն է արդի անգլերենի նշանային բոլոր մակարդակների համար նշանային բաղադրությունների ընդհանրական կաղապարի մշակումը: Նպատակին հասնելու գլխավոր **խնդիրներն** են՝

ա) ապահովել քայլերի հաջորդականությունը՝ հետազոտությունը սկսելով նշանային նվազագույն բաղադրությունների՝ ձևային համակցության, այսինքն՝ բառային ու բառաձևային մակարդակից, հասնելով առավելագույն՝ վերասույթային մակարդակին,

բ) բոլոր մակարդակների նշանային բաղադրությունները դիտարկել միասնական սկզբունքով,

գ) նշանային բաղադրությունների բնույթը բացահայտել լեզվական, խոսքային և լեզվախոսքային կամ, այլ կերպ, նշանակյալի, նշանակչի և նշանակման շերտերի համամասնությամբ:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է մասնավոր լեզվաբանության, տվյալ դեպքում՝ անգլերենագիտության մեջ նշանային բաղադրությունների՝ վերջին շրջանի հայ լեզվաբանության օրինակով լեզվական հորինվածքի եռաշերտ ներկայացմամբ, որը, անգլերենագիտությունից բացի, համընդհանուր լեզվաբանական հետաքրքրություն ու կարևորություն ունի: Կարևորությունը կրկնապատկվում է մեր ժամանակներում՝ պայմանավորված անգլերենի առաջնայնորեն միջազգային լեզու լինելու իրողությամբ և դրանով միջմշակութային հաղորդակցության գործիքի լիարժեք դերակատարությամբ, որով գնահատելի ներդաշնակություն է ապահովվում միասնական աշխարհի տարալեզու և բազմամշակույթ ժողովուրդների ընկալումներում, բազմաբնույթ շփումներով հիմնավորվում է մարդկության համակեցության անհրաժեշտությունը:

Աշխատանքի նորույթը մի մասով աղերսվում է արդիականությանը. առաջին անգամ ժամանակակից անգլերենի նշանային բաղադրությունները, բացի նշանակյալ և նշանակիչ բևեռներից, բացահայտվում են նաև դրանք իրար կապող հոգեբանական միջնաշերտով՝ նշանակմամբ: Բացի այդ՝ առաջին անգամ վերացարկված հասկացական դասերի հիման վրա կառուցված ընդհանրական կաղապարը հետևողականորեն գործադրվում է բաղադրյալ բառից մինչև վերաստութային մակարդակ՝ վերջինիս մեջ տեղայնացված հասկացությունը՝ վերաստույթը, փոխակերպել-հանգեցնելով նախ՝ ստորոգային կառուցվածքի, ապա՝ անվանականացման: Նորություն է նաև իմաստաբանական վերլուծության համար առաջարկված հետազոտության մեր եղանակը:

Փաստական նյութի համար հիմք են ծառայել անգլերենի բացատրական բառարանները, Ջեյմս Ջոյսի «**Arabia**» ստեղծագործությունը, Ջին Էդվարդսի «Երեք արքաների պատմությունը» (Gene Edwards, **Tale of Three Kings: Sixteen**), ինչպես նաև Օ. Մեշկովի «Ժամանակակից անգլերենի բառակազմությունը» ուսումնասիրությունը [Мешков 1976], որը, գիտական աշխատությունից զատ, մեզ համար փաստական աղբյուր է եղել նրանում պարունակված բառակազմական կաղապարների հարուստ հարացույցներով, որոնք, սակայն, մեխանիկորեն չենք օգտագործել, այլ անհրաժեշտության դեպքում, ելնելով նյութի հետազոտության մեր

մեկնակետից, հարացույցներում կատարել ենք նշանների տեղայնացման համապատասխան սրբագրումներ և տեղաշարժեր:

Գործնական նշանակությունը երկակի կարևորություն ունի: Նախ՝ աշխատանքում բերված կադապարներն ընդհանրական են և կիրառելի թեքական, կցական և անջատական լեզուների համար: Այս՝ հետազոտության՝ աշխատանքում առկա եղանակները հաջողությամբ կիրառելի են ուսումնական գործընթացում՝ թե՛ դասավանդման ծրագիր իրականացնելիս, թե՛ ուսանողների՝ ավարտաճառեր, կուրսային կամ այլ հետազոտական աշխատանքներ կատարելիս:

Տեսական նշանակությունը բխում է աշխատանքում արծարծված դրույթները հիմնավորելու, ծավալելու և խորացնելու, անգլերենի ասպարեզում կիրառած մեր մոտեցումները ենթադրաբար նաև այլ լեզուների նկատմամբ գործադրելու հնարավորությունից:

Աշխատանքի մեթոդը: Ուսումնասիրությունը կատարել ենք մի քանի մեթոդների համատեղությամբ: Նկարագրական մեթոդին զուգահեռ լայնորեն կիրառել ենք **կադապարման, փոխակերպման և լեզվաբանաստեղծական մեթոդները:** Ածանցների իմաստաբանական վերլուծության համար առաջ ենք քաշել **հաջորդական արտածումների եղանակը**, որի օգնությամբ առավել ամբողջական է դարձել նշանների և նշանային բաղադրությունների բովանդակության պլանի քննությունը: Դիմել ենք նաև **զննական մեթոդի** օգնությանը՝ նշանային բաղադրությունների ներնշանային և միջնշանային հարաբերությունների օրինաչափություններն ակնառու դարձնելու նպատակով աշխատանքում ներկայացնելով բազմաթիվ աղյուսակներ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է երեք գլխից, ունի ներածություն, եզրակացություն, ծանոթագրություն և մատենագիտական ցանկ (ծավալը՝ 141 էջ):

Առաջին գլխի վերնագիրն է «Արդի անգլերենի նշանային բաղադրությունների և լեզվական նշանի բովանդակային կարգերի ընդհանուր բնութագիրը»: Այս գլխում տալիս ենք լեզվանշանային նվազագույն և առավելագույն բաղադրությունները: Լեզվանշանային նվազագույն բաղադրությունը ձևայինների երկանդամ համակցությունն է: Հասկանալի է, որ նշանային առավելագույն բաղադրությունը՝

վերասույթը, տեսականորեն անվերջ է: Մեր հետազոտության մեջ աչքի առաջ ենք ունենում լեզվական համակարգը՝ գրեթե ամբողջությամբ: Իսկ սա նշանակում է, որ մեր ուշադրության կենտրոնում է լեզու/խոսք երկատումը: Սակայն աշխատանքում չենք բավարարվում երկատման սկզբունքով, որը լեզվաբանության մեջ շրջանառվում է՝ սկսած Ֆերդինանդ դը Սոսյուրից: Նորագույն շրջանի հայ լեզվաբանությունը, ի դեմս Է. Աթայանի, լեզվական հորինվածքի եռատված քննության դրույթ է առաջ քաշել՝ ներառելով նաև հոգեբանական շերտը: Սույն աշխատանքում հետևում ենք հայ լեզվաբանության ձեռքբերումներին: Նշանային տարամակարդակ բաղադրությունները դիտարկում ենք համասեռության սկզբունքով՝ բառակազմական սերող և բաղադրող հիմքերի դրույթը տարածելով նաև ասույթի վրա, իսկ շարահյուսական արժեթայնության և համակցաբանության դրույթները՝ նաև բաղադրյալ բառերի վրա: Շարահյուսական արժեթայնությունը նախադասության անդամների ձգողականությունն է (անցողական բայը դեպի իրեն է ձգում ուղիղ խնդիր (օբյեկտ)), բառակազմական արժեթայնությունը բնորոշվում է տվյալ ածանցի՝ տվյալ խոսքի մաս ձևավորելու առանձնահատկությամբ (հմմտ. գոյականակերտ, ածականակերտ, բայակերտ և այլ ածանցներ): Բառակազմական ելակետով կարող ենք քննել ասույթի գլխավոր անդամները՝ ենթական դիտելով որպես սերող, իսկ բայ-ստորոգյալը՝ որպես բաղադրող հիմք, ինչպես նաև գերադաս նախադասությունը համարելով սերող, ստորադասը՝ բաղադրող հիմք: Խոսքի մասերի խմբավորման դրույթը գործադրել ենք նաև բաղադրյալ բառերի բաղադրիչների ոլորտում՝ հետևելով մի շարք լեզվաբանների հայեցակարգին (Բլոխ, Մեշկով և այլք): Ածանցներն ու նախադասության անդամները համակցաբանական համանման դրսևորումներ ունեն. օրինակ՝ հնարավոր է [-ly + ness], բայց անհնար է [-ly + ism] համակցությունը, ինչպես որ հնարավոր է [որոշիչ + ենթակա], բայց անհնար է [ենթակա + ժամանակի պարագա] համակցություն: Այս նույն գլխում բացահայտում ենք նաև ածանցավոր բառերի նշանասերման օրինաչափությունը: Քննում ենք ածանցավոր բառերը՝ դրանց խոսքամասային հնարավորությամբ:

Իր հասկացական բովանդակությամբ բառային նշանը տրամաբանական չորս ճյուղավորմամբ է դրսևորվում՝ առարկայական, հատկանշային, ընթացային, մակադրահատկանշային, որոնք Մանուկ Աբեղյանը, Լյուսիեն Տենիերը, Էդուարդ

Աթայանը, Մարկ Բլոխը լեզվական համակարգի մեջ արտահայտում են չորս խոսքի մասով՝ գոյական, ածական, բայ, մակբայ: Հասկացական դասերի, հասկացությունների և խոսքի մասերի հարաբերակցությունը ներկայացնում ենք որոշակի աստիճանավորմամբ՝ տալով նախ՝ վերացարկված հասկացական դասերը՝ ըստ ա) **առարկայնության**, բ) **հատկանշայնության**, գ) **ընթացայնության**, դ) **մակադրահատկանշայնության** խմբերի, ապա՝ բուն հասկացական կարգերը՝ ա) **առարկա**, բ) **հատկանիշ**, գ) **գործողություն/եղելություն**, դ) **մակադրահատկանիշ** խմբերով, և հետո՝ սրանց համապատասխանող խոսքի մասերը՝ ա) գոյական, բ) ածական, գ) բայ, դ) մակբայ՝ փոխակերպումային և փոխանցումային հնարավորություններով: Սրանցից յուրաքանչյուրը մի վերացական թաղանթ է, որ ընդգրկում է համապատասխան հասկացությունն ու դրան համարժեք խոսքի մասը:

Երկրորդ գլուխը վերնագրել ենք «Ածանցային նշանակերտների տիպաբանությունը՝ ըստ բովանդակային ընդհանրությունների ու տարբերությունների»: Այս գլխում քննում ենք ածանցները զուտ նշանակյալի՝ բովանդակության տեսանկյունից և կատարում իմաստաբանական տիպաբանություն: Իմաստային դաշտերի տիպաբանությանը հասնելու համար դիմում ենք, այսպես կոչված, հաջորդական արտածումների եղանակին: Նախ՝ կատարում ենք ածանցների իմաստային առանձնակի բացահայտումներ՝ ըստ նախորդ գլխում բերած կաղապարային բանաձևերի, ապա՝ համեմատում և խմբավորում ենք դրանք՝ ըստ նույնական հատկանիշների, այնուհետև՝ դուրս ենք բերում նախորդ գլխում ներկայացված կաղապարներին համապատասխանող ածանցները՝ իրենց իմաստներով, և ապա՝ բոլոր կաղապարների իմաստային դաշտերը կազմավորող ածանցները: Սա թույլ է տալիս վեր հանել այդ դաշտերի տիպաբանությունը՝ ըստ վերացարկված հասկացական դասերի:

Երրորդ գլխի վերնագիրն է «Բարդությունների, բառաձևերի և վերբառային նշանային բաղադրությունների բնութագիրը»: Այս գլխում անդրադարձել ենք բառակազմական և ձևակազմական հիմքերի նշանային արժեքին՝ ըստ նշանասերման կաղապարների: Տալիս ենք արդի անգլերենի բարդ բառերի և բայական ժամանակաձևերի հիմքերի նշանային բնութագիրը ըստ է. Աթայանի գոյամակարդակների: Երկանդամ բարդության բաղադրիչների կաղապարային

հարաբերությունները ներկայացնում ենք նույն սկզբունքով, ինչպես վարվել էինք ածանցական բաղադրությունները ներկայացնելիս:

Գալով բառաձևերի դիտարկմանը՝ անդրադարձել ենք միայն բայաձևերի բաղադրիչներին, քանի որ անգլերենն անջատական լեզու է և հարուստ չէ ձևակազմության առումով: Իսկ բայաձևերի բաղադրիչների հարաբերությունները գործում են բայական հիմքերի և վերջավորական ցուցանշանների միջև:

Բայական հիմքերը լինում են համադրակազմ և վերլուծակազմ: Բոլոր համադրական ձևերը կազմվում են անորոշի (infinitive) հիմքից: Այս նույն հիմքից կազմվում են նաև վերլուծական ձևեր, իսկ մնացած վերլուծական ձևերը կազմվում են երկու այլ հիմքերից:

Այնուհետև ներկայացնում ենք վերբառային մակարդակների նշանասերման բնութագիրը, այսինքն՝ դիտարկում ենք շարույթը, ասույթը, գերասույթը, վերասույթը 4 խոսքի մասերի հարաբերակցությամբ: Նախքան առարկայական տեքստի քննությունը աշխատանքում տալիս ենք վերասույթի ոճական շերտավորված քննությունը վերացական եղանակով, այսինքն լեզվական համակարգում ունենք ոճավորելի (ոճավորման ենթակա) ասելիք, շարակարգային մակարդակում՝ ոճավորման գործնթաց, իսկ գծակարգային մակարդակում գործ ունենք դրսևորված ոճի հետ: Այս վերացարկված դիտարկումը առարկայնացնում ենք 2 տեքստերի քննությամբ՝ ամբողջ տեքստը հանգեցնելով $A+N+V+Nv+D$ կաղապարին, որն էլ հանգեցրել ենք անվանականացման, այսինքն՝ տեքստի համար հիմնավորել ենք պայմանական վերնագրերը:

ԳԼՈՒԽ I

ԱՐԴԻ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՇԱՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Ժամանակակից անգլերենի նշանային բաղադրությունները և դրանց հարաբերակցությունը

Նշանային բաղադրությունները լեզվական այն երկպլան կազմություններն են, որոնք առնվազն երկբաղադրիչ են. դրանք են ածանցումները, բարդությունները, բաղադրյալ բառաձևերը, շարույթները, ասույթները, վերասույթները: Լեզվանշանային նվազագույն բաղադրությունը երկձևույթ կազմ ունեցող բառն է կամ բառաձևը: Հասկանալի է, որ նշանային առավելագույն բաղադրությունը՝ վերասույթը, տեսականորեն անվերջ է:

Եթե խոսում ենք այս բաղադրությունների հարաբերակցության մասին, ապա աչքի առաջ պետք է ունենանք լեզվական համակարգը՝ գրեթե ամբողջությամբ: Իսկ սա նշանակում է, որ մեր ուշադրության կենտրոնում է լինելու լեզու/խոսք երկատումը՝ ըստ վերոնշյալ բաղադրյալ կազմությունների համակարգային ձևավորման և խոսքային համապատասխան դրսևորման:

Լինելով անջատական տիպի լեզու՝ ժամանակակից անգլերենը, ի տարբերություն ժամանակակից հայերենի կամ ռուսերենի, ձևակազմական սահմանափակ հնարավորություններ ունի անվանական խոսքի մասերի տիրույթում: Ինչ վերաբերում է մի կողմից՝ բաղադրյալ բառերին, մյուս կողմից՝ շարահյուսական բաղադրություններին կամ կառույցներին, ապա դրանք հիմնականում հեշտությամբ հարաբերակցվում են և փոխանցելի (transposable), փոխարկելի (substitutable) ու փոխակերպելի (transformable) կազմություններ են: Այսպես՝ համասեռության (isomorphism)¹ սկզբունքով առաջնորդվելով՝ պարզում ենք, որ շարահյուսական (շարույթ, ասույթ) և բառակազմական բաղադրություններն ընդհանրություն ունեն: Շարահյուսական ելակետով դիտարկելի են ածանցավոր և բարդ բառերի շարահասակային, արժույթային դրսևորումները. ածանցները կարող են նախադաս կամ հետադաս լինել սերող հիմքի նկատմամբ (հմմտ. նախաձանց և վերջաձանց

բաժանումը), իսկ բարդության մեջ սերող հիմքը սովորաբար նախադաս է բաղադրող հիմքի նկատմամբ (հմմտ. նաև անգլերեն ասույթի ենթակայի և բայ-ստորոգյալի շարահասությունը): Ներկայացնենք հիշատակված բաղադրությունների համապատասխան օրինակներ՝ հարացուցային կարգով (տե՛ս Աղյուսակ 1 և 2): Աղյուսակներից առաջինում պատկերված է ածանցումների ներքին շարահյուսական արժեքը՝ ըստ շարահասական և շարութաբանական մեկնակետերի, իսկ երկրորդում՝ նախադասությունների և շարույթների բառակազմական համարժեքությունը:

Աղյուսակ 1

Ածանցման նշանային բաղադրությունների ներկայացումը՝ ըստ բաղադրական հիմքերի

1	2	3	4	5	6
Նախադաս բաղադրող հիմք՝ նախա- ծանց (Prefix or Constitutive Stem)	Ետադաս սերող հիմք (Generative Stem)	Բաղադրու- թյուն (Compound)	Նախադաս սերող հիմք (Generative Stem)	Ետադաս բաղադրող հիմք՝ վերջածանց (Suffix or constitutive Stem)	Բաղադրություն (Compound)
a-	-rise	arise	read-	-able	readable
arch-	-bishop	archbishop	porter-	-age	portage
de-	-clutch	declutch	phon-	-eme	phoneme
fore-	-arm	forearm	rap-	-ine	rapine
hyper-	-tension	hypertension	long-	-wise	longwise
Շարանդամ	Շարանդամ	Իմաստա- շարույթ	Շարանդամ	Շարանդամ	Իմաստաշարույթ

Բուն շարույթը շարահյուսական կապակցությունն է: Իմաստաշարույթը տվյալ դեպքում ներբառային բաղադրիչների շարակցությունն է: Շարանդամը շարույթի (ըստ մեր օրինակների՝ իմաստաշարույթի) մեկ բաղադրիչն է:

Աղյուսակ 2

Ասույթի և շարույթի նշանային բաղադրությունների ներկայացումը՝ ըստ բաղադրական հիմքերի²

1 ԱԽ // NP	2 ԲԽ // VP	3 Ն // S	4 ԲԽ // VP	5 ԱԽ // NP	6 Ն // S
Ենթակայի (կամ անվանական) խումբը (=ԱԽ)՝ որպես սերող հիմք (the Subject group (or the Subject Noun-phrase = NP) as a Generative Stem)	Ստորոգյալի (կամ բայական) խումբը (=ԲԽ)՝ որպես բաղադրող հիմք (the Predicate group (or the Predicate Verb-phrase = VP) as a Constitutive Stem)	Նախադասությունը (=Ն)՝ որպես բաղադրություն (the Sentence (=S) as a Compound)	Ստորոգյալի (կամ բայական) խումբը (=ԲԽ)՝ որպես բաղադրող հիմք (the Predicate group (or the Predicate Verb-phrase = VP) as a Constitutive Stem)	Ենթակայի (կամ անվանական) խումբը (=ԱԽ)՝ որպես սերող հիմք (the Subject group (or the Subject Noun-phrase = NP) as a Generative Stem)	Նախադասությունը (=Ն)՝ որպես բաղադրություն (the Sentence (=S) as a Compound)
the small lady	listened to me attentively	The small lady listened to me attentively.	there is at the door	a man	There is a man at the door.
ԱԽ-ն՝ որպես անվանական շարույթ	ԲԽ-ն՝ որպես բայական (գեր)շարույթ	Ն-ն՝ որպես ստորոգյալին (գեր)շարույթ	ԲԽ-ն՝ որպես բայական շարույթ	ԱԽ-ն՝ որպես անվանական շարանդամ	Ն-ն՝ որպես գերշարույթ
Սովորական շարադասություն (ենթակա + բայ-ստորոգյալ)			Շրջուն շարադասություն (բայ-ստորոգյալ + ենթակա)		

Ինչ վերաբերում է բառակազմական արժույթայնությանը, ապա այն բնորոշվում է տվյալ ածանցի՝ տվյալ խոսքի մաս ձևավորելու առանձնահատկությամբ (հմմտ. գոյականակերտ, ածականակերտ, բայակերտ և այլ ածանցներ): Բառակազմական ելակետով կարող ենք քննել ասույթի գլխավոր անդամները՝ ենթական դիտելով որպես սերող, իսկ բայ-ստորոգյալը՝ որպես բաղադրող հիմք, ինչպես դա ցույց ենք տվել 2-րդ աղյուսակում, ինչպես նաև գերադաս նախադասությունը համարելով սերող, ստորադասը՝ բաղադրող հիմք և այլն:

Այդպիսի համարժեքություն կա նաև արմատամերձ ածանցների (այսինքն՝ այն ածանցների, որոնք միայն արմատի հետ են հանդես գալիս, օրինակ՝ –y ածանցը՝ story) և ասույթի բայ-ստորոգյալի ու անմիջական բաղադրիչների կապակցության դեպքում, ինչպես նաև զուգահեռաբար ածանցների ու նախադասության անդամների համակցաբանական դրսևորումներում. օրինակ՝ հնարավոր է [-ly + ness], բայց անհնար է [-ly + ism] համակցությունը [Мешков 1976, 33], ինչպես որ հնարավոր է [որոշիչ + ենթակա], բայց անհնար է [ենթակա + ժամանակի պարագա] համակցությունը:

Այդ հնարավորությունն ու անհնարինությունը բացատրելի են լեզու/խոսք հարաբերությամբ՝ թե՛ արժույթայնության, թե՛ համակցաբանության հայեցակետով: Մենք առաջնորդվում ենք է. Աթայանի պարտադիր և երկրորդային արժույթայնության և, սրա համաբանությամբ, նույնաբնույթ համակցությունների հայեցակարգով [Атаян 1968, 220–222]: Պարտադիր արժույթայնությունն ու համակցաբանությունը իրենց պարտադիր իրացումն են ունենում խոսքում:

Ֆերդինանդ դը Սոսյուրից սկսած՝ ընդունված է ասել, որ լեզուն նշանների համակարգ է [Սոսյուր 2008, 31-34, 104–123]: Սոսյուրը, անդրադառնալով լեզվի և նշանային այլ համակարգերի խնդրին, փորձում է պարզել, թե ինչպես է, որ նշանաբանությունը (սեմիոլոգիան) դեռ ճանաչված չէ (բնականաբար, խոսքն իր ապրած ժամանակների մասին է) որպես ինքնուրույն գիտություն: Դրա համար նա մի քանի պատճառ է նշում: Դրանցից մեկը, ըստ Սոսյուրի, լեզվի նկատմամբ հասարակության ունեցած մակերեսային ընկալումն է, որով այդ հասարակությունը սոսկ անվանակարգություն է տեսնում լեզվի մեջ, որը հենց դրանով բացառում է

լեզվի իրական բնույթի վերհանման հնարավորությունը: Մյուս պատճառը հոգեբանի վերաբերմունքն է նշանին, որը դրա մեխանիզմը միայն անհատի մեջ է ուսումնասիրում: Թեև հոգեբանի տեսակետից սա արդարացված մոտեցում է, այնուամենայնիվ այն պատնեշ է առաջացնում անհատի և նշանի հասարակական բնույթի միջև: Իսկ այն հոգեբանները, որոնք գիտակցում են նշանի հասարակական դերի կարևորությունը, հաճախ իրենց ուշադրությունը բևեռում են լեզվի՝ նշանային տեսակետից երկրորդային կողմերի վրա: Կարևորագույն պատճառը, որ բացահայտում է Սոսյուրը հենց սկզբում, արատավոր շրջանն է. «Մի կողմից ոչինչ լեզվից ավելի լավ չի կարող բացատրել նշանաբանության խնդրի էությունը, մյուս կողմից, այդ խնդիրը հարկ եղած ձևով այն ներկայացնելու համար լեզուն պետք է ուսումնասիրել որպես այդպիսին, սակայն առ այսօր այն համարյա միշտ քննվել է այլ հարաբերակցությունների մեջ և այլ տեսակետներից» [Սոսյուր 2008, 33]: Ինչևէ, այսօր արդեն նշանագիտությունը հիմնավորապես հաստատված է որպես հետազոտության ինքնուրույն և համապարփակ ոլորտ, որի մեջ, ինչ խոսք, իր անուրանալի ներդրումն ունեցավ Սոսյուրը, որն ուղղակի հայտարարում է. «Մեզ համար ... լեզվաբանական խնդիրներն ամենից առաջ նշանաբանական խնդիրներ են» [Սոսյուր 2008, 34] : Լեզվի՝ նշանների համակարգ լինելու դրույթից հասկանալիորեն չափտի եզրակացնել, թե այդ նշաններն իրենց համար «ննջած են» այդ համակարգում: Դրանք լեզվի մեջ նախատեսված են հաղորդակցում ապահովելու համար, որն իրականացվում է այդ նշանների համապատասխան հարաբերությունների և համակցությունների շնորհիվ: Հետևաբար կարող ենք ասել, որ **լեզուն նշանների համակցումների հնարավորության համակարգ է:** Ինչպես յուրաքանչյուր ինքնակարգավորող ճկուն համակարգի տարրերը, լեզվական համակարգի և՛ նշանային, և՛ ոչ նշանային միավորները ևս համակցվում-հարաբերակցվում են որոշակի օրինաչափություններով:

Համակցությունը ենթադրում է, որ արտաքին իրականության համապատասխան տարրերի նման լեզվական միավորներին նույնպես հատուկ է արժույթային (վալենտական) փոխհարաբերության հատկությունը: Համակցությունը նաև ենթադրում է համակարգային միավորների համակցաբանական կարգավորվածություն: Կարծում ենք՝ հետաքրքիր կլինի պարզել արժույթայնության և

համակցաբանության փոխհարաբերությունը: Ինչպես գիտենք, արժույթայնության գաղափարը լեզվաբանություն է մտել քիմիայից: Լեզվական իրողությունների նկատմամբ այդ հատկությունն առաջին անգամ կիրառել են մասնագիտությամբ բժիշկներ Ժ. Դամուրետոն ու Է. Պիշոնը, որոնք անցյալ դարասկզբին ֆրանսերենի լիակատար քերականությունը շարադրելիս այդ երևույթը նկատել ու գործադրել են բայի խնդրառությունը բացատրելիս [Damourette et Pichon 1911, 15-119]: Այս գիտնականները արժույթայնությունը բնութագրում են որպես տրամաբանական էություն, որը խոսք է թափանցում որևէ դասի, կարգի տրամաբանական էության միջոցով: Տրամաբանական էությունը, ըստ նրանց պատկերացումների, դասերի (անուն, բայ, գործիք) և կենտրոնական ու հարող կարգերի փոխհարաբերությունն է:

Հետագայում բայի ձգողականությունը դարձյալ արժույթայնությամբ է մեկնաբանել Լ. Տենիերը, ըստ որի. «Ամեն մի բայ ունի անտեսանելի «կեռիկներ», որոնցով դեպի իրեն է ձգում համապատասխան թվով գործորդներ (ակտանտ)» [Tesnire 1959, 250]:

Ավելի ուշ նույն հարցին անդրադարձել է Է. Աթայանը՝ նկատելով, որ արժույթայնությունը հատուկ է ոչ միայն բային, այլև ամեն մի կապակցունակ խոսքի մասի [Атаян 1968, 220–222]: Առաջին անգամ նա արժույթայնությունը քննում է լեզու/խոսք ոլորտների տեսանկյունով՝ լեզվական ոլորտում առանձնացնելով արժույթայնության պարտադիր և երկրորդային տեսակներ և նշելով, որ լեզվականորեն պարտադիր արժույթներն այդպիսին են նաև խոսքում, իսկ երկրորդային արժույթները, հանդես գալով խոսքում, վերաձվելով լեզվական փաստի, հենց այդ փաստով նույնպես դառնում են պարտադիր արժույթներ [Атаян 1968, 220–222]: Թեև այս լեզվախոսքային նուրբ դիտարկումներն առանձնապես տարածում չեն գտել լեզվաբանության մեջ, փոխարենը, սակայն, ընդունվել է առաջին դրույթը՝ այն, որ արժույթայնությունը միայն բային չէ, որ հատուկ է: Ավելին. արժույթային իրողությունների վերաբերյալ համակարգված ուսումնասիրություններ կան բառակազմության մեջ, որոնցից առավել ամբողջականը, մեր կարծիքով, Օ. Մեշկովի հետազոտությունն է [Мешков 1976, 32-33]:

Ինչ վերաբերում է համակցաբանությանը, ապա այն լեզվաբանություն է մուտք գործել մաթեմատիկայից և զբաղվում է բազմության տարրերի օրինաչափ

համակցումների ուսումնասիրությամբ [Քարտաշյան 1983, 32–42. Лаллерман 1985, 189-194]:

Արդ՝ փորձենք պարզել, թե ինչ հարաբերության մեջ են իրար նկատմամբ արժույթայնությունն ու համակցաբանությունը: Պարզելու համար դիմենք Մեշկովի «Ժամանակակից անգլերենի բառակազմությունը» գրքում բերված մի քանի օրինակների: Co- նախածանցը, որ, որպես նշան, ունի *համալրեղման* իմաստը, **արժույթային** զորությամբ կարող է դեպի իրեն ձգել, ասենք, -act, -drive, -author, -star սերող հիմքերը. սրանցից յուրաքանչյուրը նշված նախածանցի **արժույթն** է: Այս արժույթային անխուսափելի ձգողության ուժով **համակցվում** են co- և -act, co- և -drive, co- և -author, co- և -star նշանային բաղադրիչները, որոնցով ունենում ենք coact, codrive, coauthor, costar նշանային **համակցված** բաղադրությունները կամ, ասենք ուղղակի, համակցությունները [Мешков 1976, 117]: Արժույթայնությունը համակցելիությունն է և դրա իրացումը: Ընդհանուր բաղադրիչով միացված համակցությունները կազմում են **համակցական փունջ** կամ պարզապես **համակցաբանություն**: Համակցաբանությունը, ինչպես տեսնում ենք, ընդգրկում է լեզվական համակարգի տվյալ հարացույցը: Համապատասխան համակցումներով ձևավորվում են համակցություններ, որոնց հարացույցն էլ հենց ներկայացնում է համակցաբանությունը: Համակցումներից՝ համակցության և համակցություններից համակցաբանության ձևավորումների հնարավորությունը տրված է լեզվով. ավելին, բերված բոլոր համակցությունները լեզվական պատրաստի միավորներ են: Այդպիսի պատրաստի միավորներ են նաև homework, kitchenette, rainbow, headache, blackboard և այլն: Սրանցից յուրաքանչյուրը միայն գիտական վերացարկմամբ է շարահյուսական բաղադրիչների վերածվում, մինչդեռ իրականում գիտականորեն բացահայտված այդ որոշիչ/որոշյալ կապակցությունները սերտաճած ամբողջություններ են և այդ ամբողջականությամբ են ամրակայված անգլախոսների գիտակցության մեջ որպես համապատասխան հասկացությունների անվանումներ: Այլ է վիճակը բուն շարահյուսական, մասնավորապես որոշիչ/որոշյալ բացահայտ կապակցություններում: Այստեղ արդեն բոլորի գիտակցության մեջ ընդհանրականը հենց որոշիչ/որոշյալ կաղապարն է, որն անսահմանափակ խոսքային իրացումներ կարող է ունենալ. օրինակ՝

a garden wall // a wall of the garden,
a new dress,
a polite young man,
her dress,
my first lesson,
a boy sitting on the bench,
The boy who is sitting on the bench is my brother

Ձևային քերականության տեսակետից նույն որոշիչ/որոշյալ հարաբերությունն է պահպանված մակդիր/մակդրյալ կապակցություններում, և ի տարբերություն դարձվածքների՝ շարահյուսական կանոնավոր վերլուծությունն այդ որոշիչ/որոշյալ կապակցություններում անհեթեթության չի հանգեցնում: Ահա մի քանի օրինակ՝

a heart of stone,
God Almighty,
blood-red sky,
gray-eyed Athena (Homer),
Abraham our father,
Moses our teacher,
David the king և այլն:

Այս թռուցիկ համեմատությունն իսկ բավական է պարզելու համար բաղադրյալ նշանների կամ նշանային բաղադրությունների բաղադրիչների կապակցման միասնական՝ շարահյուսական սկզբունքը, որը, սակայն, տարբեր մակարդակներում դրսևորվելիս երկու այլ սկզբունքներով է իրացվում: Շարահյուսական սկզբունքը, տվյալ դեպքում, պայմանական անվանում է, և բառակազմության համար գործածվելիս նկատի է առնվում բացահայտված շարահյուսական բաղադրիչների միացությունը տվյալ բառակազմում: Այսպես՝ homework բառը home և work բառերի՝ որպես որոշիչ/որոշյալ բառակապակցության անդամների պարզ կցումով է մեկ բառային ու բառարանային միավոր դարձել, և բառակապակցության օրինակով հեշտությամբ վերականգնելի են հասկացական և կարգային (խոսքամասային) նշանները: Հասկացական առումով ունենք հատկանշայնացված առարկայի (1) և առարկայի (2) համակցություն, կարգային առումով՝ ածականացված գոյականի (1)

(home-ն այստեղ ունի «տնային» իմաստը) և գոյականի (2) համակցություն, շարահյուսական առումով՝ որոշի (1) և որոշյալի (2) համակցություն [Dietrich Th. and Andler A. 310-316]:

Միշտ չէ, իհարկե, որ այսպես հեշտ է լինում մակերեսային կառուցվածքի վերականգնումը կամ ոչ բացահայտ (իմպլիցիտ) կառուցվածքը բացահայտ (էքսպլիցիտ) տեսքի բերելը: Բաղադրյալ բառը երբեմն այնպիսի կազմություն է ունենում, որ նրա բաղադրիչների արտաքին ձևավորվածությամբ անհնար է դառնում նշանային բաղադրության մեկնաբանությունը՝ որպես շարահյուսական թաքնված կապակցություն: Այդպիսի օրինակները շատ են տարբեր լեզուներում: Ասվածի լավագույն նմուշ է, օրինակ, հայերենի *սեղանատուն* բառը, որ նշանակում է ճաշասենյակ, և անհեթեթ կացության առաջ կկանգնենք, եթե փորձենք նրա բաղադրությունը մեկնաբանել որպես հատկացուցիչ/հատկացյալի կապակցություն՝ **սեղան(ներ)ի տուն*: Նույնը վերաբերում է և անգլերեն *somebody, sunflower* և այլ բաղադրություններին, որոնց համար ևս «մարդկային լեզվով» անթույլատրելի է շարահյուսական մակերեսային կառուցվածքների փոխակերպումը: Այս առումով բառային բաղադրությունները նույնաբնույթ են դարձվածքների հետ: Սրանցում ևս կանոնավոր շարահյուսական վերլուծությունը հանգեցնում է անհեթեթության: Այսպես՝ մակերեսային վերլուծությամբ *նա գլուխը կորցրեց* դարձվածային նախադասության մեջ *կորցրեց* բայ-ստորոգյալի ուղիղ խնդիրն է *գլուխը* գոյականը, որը, սակայն, այդպիսին է սոսկ ձևայնորեն: Այդպես է նաև հետևյալ անգլերեն դարձվածքներում.

a broken heart – կոտրված սիրտ՝ զղջացող, հեզ մարդ

an eye for an eye, a tooth for a tooth – ակն ընդ ական, ախամն ընդ ախաման

good Samaritan – բարի սամարացի՝ բարեգործ, գթասիրտ մարդ

dead wood – մեռած փայտ՝ անպեղք, ոչ պիտանի աշխատակից

big cheese – մեծ պանիր՝ ազդեցիկ անձնավորություն

to sleep – ննջել՝ մահանալ

know/show the ropes – իմանալ, ցույց տալ պարանները՝ գործի մանրամասները

Վիճակն ավելի է բարդանում, երբ գործ ենք ունենում ստորակարգությամբ ավելի ցածր մակարդակների հետ, թեև երբեմն հնարավոր է լինում նույնիսկ այդ

դեպքերում «վերականգնել» շարահյուսական կապակցությունը. այսպես՝ հայերեն *տինակ*, ռուսերեն *домик*, անգլերեն *kitchenette* բառերի «որոշիչ/որոշյալ» բաղադրիչները դժվար չէ բացահայտելը (*տինակ* = *փոքր տուն*, *домик* = *մալեկույ՝ ծոմ* և այլն): Չնայած շարահյուսական և ստորին մակարդակների բաղադրիչների համակցության այս ընդհանրությանը՝ այնուամենայնիվ ակներև է դրանց էական տարբերությունը, որը պայմանավորված է համեմատվող նշանային բաղադրությունների բաղադրիչների ազատության չափով: Ստորին մակարդակների բաղադրություններում դրանց բաղադրիչների ազատությունը սեղմված-սահմանափակված է՝ ի հակադրություն շարահյուսական բաղադրությունների: **Բառակազմության մեջ գերիշխողը անհրաժեշտության սկզբունքն է, և ազատությունը նրանում առկա է նոր բառեր ձևավորելու հնարավորությամբ: Շարահյուսության մեջ գերիշխողն ազատությունն է, որը սահմանափակված է տվյալ լեզվի շարահյուսական անհրաժեշտ կաղապարներով:** Պետք է նկատել, որ մակարդակից մակարդակ «բարձրանալիս» մեծանում է ազատության սկզբունքի հնարավորությունը:

1. 2 Լեզվական նշանի կարգային իմաստները

Անգլերենի նշանային բաղադրությունների դիտարկումը, կարծում ենք, նպատակահարմար է սկսել բառային մակարդակից: Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ այս մոտեցումը, որովհետև ստորակարգային մակարդակների մատնանշումը հուշում է նյութին մոտենալու աստիճանական՝ մակաձական կամ արտաձական եղանակ, այլ կերպ ասած՝ բաղադրությունների ուսումնասիրություն՝ մակարդակային հաջորդականությամբ՝ վարից վեր կամ վերից վար ուղղվածությամբ: Ավելորդ է ասել, որ ի վերջո անդրադառնալու ենք տրամաբանական այդ մոտեցման պահանջներին և վերլուծությունն ամբողջացնելու ենք նշված թե՛ մեկ, թե՛ մյուս եղանակով: Սակայն արդարացված է նաև նյութի քննությունը, եթե կարելի է այսպես ասել, նշանային հարաբերական ավարտվածությունն իր մեջ խտացրած լեզվի կենտրոնական միավորից՝ բառից սկսելը, որը մյուս միավորների համեմատությամբ լեզվական հորինվածքի միակ ինքնուրույն և մարդկային լեզվագիտակցության մեջ ամրագրված ամենից կայուն

տարրն է: Բառն այդ կայունությունն ու ինքնակայությունը ձեռք է բերել և՛ նշանակյալի հասկացական ու պատկերացումային նշանակությամբ, և՛ սրանց ներթափանցմամբ անվանողական և վերաբերողական գործառույթներով իմաստային կազմավորմամբ, և՛ նշանակչի հնչական ու շարահյուսական արտահայտվածությամբ: Այսպես՝ բառից մակարդակային առումով ցած գտնվող նշանը՝ ձևույթը, ունենալով իմաստ, չունի **անվանողական գործառույթ**. այն նպաստում է այդ գործառույթի ձևավորմանը բառային բաղադրության կազմում: Սա նշանակում է, որ նույնիսկ արմատը չունի բառային տարբերակված իմաստ և ինքնակայություն: Մինչդեռ բառն ինքնին հասկացություն բովանդակող միավոր է և դրանով իսկ՝ օժտված հիշյալ գործառույթով: Անվանողական գործառույթ ունի նաև շարույթը (տվյալ դեպքում՝ բառակապակցությունը), ասենք, որպես առարկան իր անքակտելի հատկանիշով մեկ հասկացություն ներկայացնելու պայմանավորվածությամբ: Կառուցվածքային առումով ևս բառը տարբեր նշանային միավորների խաչաձևման կենտրոնում է: Նախադասության կազմում բառը շարահյուսական կառուցվածքի միավոր է՝ շարահյուսական նվազագույն կառույցի անմիջական բաղադրիչ՝ մի բան, որից զուրկ է ձևութային նշանը: Բացի այդ՝ բառային նշանն ինքնին կարող է ոչ միայն նախադասություն, այլև ավարտուն խոսք լինել: Մի այլ տեսանկյունից՝ բառի կարգային (հասկացական) իմաստները՝ իրենց ողջ փոխակերպական, փոխանցական հնարավորություններով, հեշտությամբ կարելի է տարածել թե՛ նրանից ներքև, թե՛ վերև տեղակայված նշանների վրա:

Իր հասկացական բովանդակությամբ բառային նշանը տրամաբանական չորս ճյուղավորմամբ է դրսևորվում՝ առարկայական, հատկանշային, ընթացային, մակադրահատկանշային, որոնք Լյուսիեն Տենիերը, Էդուարդ Աթայանը, Մարկ Բլոխը լեզվական համակարգի մեջ արտահայտում են չորս խոսքի մասով՝ գոյական, ածական, բայ, մակբայ [Теньер 1988, 74-78, Атаян 1968, 176, Blokh 1983, 46]: Դրանց հնարավոր փոխանցումները, որոնք տասնվեցն են, իրենց համապատասխան իրացումներն ունեն տարբեր լեզուների, այդ թվում՝ ժամանակակից անգլերենի մեջ: Խոսքամասային փոխակերպումների և փոխանցումների պատկերը տալու համար հարկ է ներկայացնել բառային նշանների հասկացական տեղաշարժերը՝ որոշակի հաջորդականությամբ: Քանի որ նշված հասկացությունները կարող են բովանդակել

ոչ միայն տվյալ բուն հասկացությունը, այլև որպես այդպիսին դիտվող հարակից հասկացություններ, ուստի հասկացական բարձրագույն դասային կարգերը նախընտրում ենք կոչել առավել բարձր վերացարկված կարգանվանումներով՝ դրանց համապատասխանող ենթախմբերում տալով նախ՝ տվյալ բուն հասկացությունը, ապա՝ որպես այդպիսին ներկայացվողը, հետո՝ տվյալ հասկացության հարակցելիությունը (հնարավոր ներքին հարակցավորումը): Ըստ այդմ՝ կունենանք հետևյալ հասկացական խմբերը՝

1-ին աստիճան՝ վերացարկված հասկացական դասեր.

ա) առարկայնություն, բ) հատկանշայնություն, գ) ընթացայնություն, դ) մակադրահատկանշայնություն.

2-րդ աստիճան՝ բուն հասկացական կարգեր.

ա) առարկա, բ) հատկանիշ, գ) գործողություն/եղելություն, դ) մակադրահատկանիշ.

3-րդ աստիճան՝ հասկացական կարգերի մասնավորումներ՝ ըստ բուն, ենթադրվող և փոխակերպա-փոխանցումային շերտավորվածության.

ա) առարկայական հասկացության շերտավորումները.

1. բուն առարկա, 2. որպես թե առարկա (**առարկայացված** հատկանիշ/ընթացք/ մակադրահատկանիշ), 3. փոխակերպելի կամ փոխանցելի առարկա (առարկան՝ որպես **հնարավոր** հատկանիշ/ ընթացք/ մակադրահատկանիշ).

բ) հատկանշային հասկացության շերտավորումները.

1. բուն հատկանիշ, 2. որպես թե հատկանիշ (**հատկանշացված** առարկա/ ընթացք/մակադրահատկանիշ), 3. փոխակերպելի կամ փոխանցելի հատկանիշ (հատկանիշը՝ որպես **հնարավոր** առարկա/ընթացք/մակադրահատկանիշ).

գ) ընթացային հասկացության շերտավորումները.

1. բուն ընթացք, 2. որպես թե ընթացք (**ընթացայնացված** առարկա/հատկանիշ/ մակադրահատկանիշ), 3. փոխակերպելի կամ փոխանցելի ընթացք (ընթացքը՝ որպես **հնարավոր** առարկա/հատկանիշ/մակադրահատկանիշ).

դ) մակադրահատկանշային (մակընթացային) հասկացության շերտավորումները.

1. բուն մակադրահատկանիշ, 2. որպես թե մակադրահատկանիշ (**մակադրահատկանշացված** առարկա/հատկանիշ/ընթացք), 3. փոխակերպելի կամ փոխանցելի մակադրահատկանիշ (մակադրահատկանիշը՝ որպես **հնարավոր** առարկա/հատկանիշ/ընթացք):

Վերոբերյալ տրամաբանական (հասկացական) կարգերին ու նրանց հնարավոր տեղաշարժերին համապատասխան համարժեքություն է գործում լեզուների մեջ: Այսպես՝ առարկայնության դասի առարկայական կարգի բուն և ենթադրվող առարկայանիշ բառերը գոյականական խումբն են կազմում, հատկանշայնության դասի հատկանշային կարգի բուն և ենթադրվող հատկանշիչ բառերն ածականական խումբն են կազմում, ընթացայնության դասի ընթացային կարգի բուն և ենթադրվող ընթացանիշ բառերը բայական խումբն են կազմում, մակադրահատկանշայնության դասի մակադրահատկանշային կարգի բուն և ենթադրվող մակադրահատկանշիչ բառերը մակբայական խումբն են կազմում: Ինչ վերաբերում է հասկացական կարգերի մասնավորումներից երրորդ՝ փոխակերպային և փոխանցումային շերտերին, ապա դրանք իրենց իրացվելիությամբ (լեզվական համակարգում) դեռևս տվյալ խոսքի մասի տիրույթում են, իսկ իրացվածությամբ (խոսքում) դուրս են այդ տիրույթից և ներկայանում են հարաբերակցելի խոսքի մասերից որևէ մեկի դաշտում, այսինքն՝ գոյականը փոխակերպելի-փոխանցելի է ածական-բայ-մակբայ կարգերի, ածականը՝ գոյական-բայ-մակբայ կարգերի, բայը՝ գոյական-ածական-մակբայ կարգերի, մակբայը՝ գոյական-ածական-բայ կարգերի: Ինչպես տեսնում ենք, չորս խոսքի մասերին հատուկ է երեքական փոխակերպման ու փոխանցման հնարավորություն, ընդհանուր թվով՝ տասներկու փոխակերպում-փոխանցում: Սակայն խոսքի մասերից յուրաքանչյուրը կարող է ունենալ նաև ներքին փոխակերպումներ, այն է՝ գոյականից գոյականակերտում, ածականից ածականակերտում, բայից բայակերտում և մակբայից մակբայակերտում՝ ածանցական ձևույթների օգնությամբ: Ըստ այսմ՝ խոսքի մասերի փոխակերպման ու փոխանցման տասնվեց դեպք է հնարավոր, որոնցից չորսը **ինքնակերպ** է (autogene), և այստեղ գործ ունենք ինքնանցման հետ, իսկ տասներկուսը՝ **այլակերպ** (allogene)³, որտեղ առկա է այլանցում: Ստորև բերում

ենք Մարկ Բլոխի ներկայացրած խոսքի մասերի այլակերտ փոխակերպման հարացույցներից մեկը⁴.

N – power – to empower – powerful – powerfully

V – to suppose – supposition – supposed – supposedly

A – clear – clarity – to clarify – clearly

D – out – outing – to out – outer

Ասենք, որ խոսքի մասերի այս խմբավորումը բնավ չի անտեսում թվականներն ու դերանունները: Պարզապես սրանք իրենց գործառական բնույթով բաշխված են տարբեր խոսքի մասերի վրա, թվականը՝ գոյականի և ածականի, դերանունը՝ գոյականի, ածականի և մակբայի: Այս մոտեցումը վաղուց է հայտնի լեզվաբանության մեջ: Այդպիսի դասկարգման առաջին հեղինակներից էր Մանուկ Աբեղյանը, որն իր խմբավորումը կատարել է վերը նշված լեզվաբաններից շատ առաջ [Աբեղյան 1965, 129-130]:

Բերված բառային խմբերը՝ համապատասխան փոխանցումներով, ինչպես նշվեց վերը, իրենց զուգահեռությունն ունեն նշանային մյուս մակարդակներում, և հեշտությամբ դա կարելի է բացահայտել համասեռության սկզբունքով: Այսպես՝ ուսումնասիրելով ժամանակակից անգլերենի բառակազմությունը՝ պարզում ենք, որ նրանում առկա բոլոր կաղապարները՝ որպես բառային նշանների բաղադրությունների ընդհանրական ընդօրինակումներ, ներկայացնում են նշված չորս խոսքի մասերը: Ավելին. ածանցավոր բաղադրությունների ոչ ածանցական՝ սերող բաղադրիչների դերում էլ այդ չորս խոսքի մասերն են հանդիպում, որոնց համակցությամբ գոյանում է բառային նոր նշան՝ դարձյալ այդ նույն խոսքի մասերից մեկի ելքով: Այդպես է նաև բարդությունների դեպքում: Ասվածի հիմնավորումը գտնում ենք Օլեգ Մեշկովի «ժամանակակից անգլերենի բառակազմությունը» գրքում, որտեղ բերված ածանցական կաղապարներն ուղղակի ապացույցն են մեր պնդման [Мешков 1976, 117]: Ջննելով այդ աշխատության մեջ արձանագրված ածանցական կաղապարները՝ բացի նշված չորս խոսքի մասերից՝ վերջաձանցմամբ բառային նշանասերման կազմում գտնում ենք նաև թվականական և նախդրային բաղադրիչներ, որոնք, սակայն, ըստ դրանց գործառման, նույնացման սկզբունքով հեշտությամբ կարող ենք հանգեցնել չորս խոսքի մասերից որևէ մեկին: Ստորև

ներկայացնում ենք նշանասերման՝ հիշյալ գրքից քաղած կաղապարները: Պայմանական նշաններից Num-ը նշանակում է թվական, Prep-ը՝ նախդիր, Pron-ը՝ դերանուն, P II-ը՝ երկրորդ դերբայ [Мешков 1976, 117]: Մակբայի տարածված պայմանական նշաններից է Adv-ը, որ և առկա է O. Մեշկովի գրքում, սակայն քանի որ արդեն մեկ այլ պայմանանիշ ենք տվել մակբայի համար՝ ըստ Մ. Բլոխի վերոհիշյալ աշխատության, նշանների միօրինակությունը չխախտելու նպատակով այստեղ ևս թողնում ենք մակբայի նույն պայմանական նշանը՝ D:

O. Մեշկովի արտածած վերջածանցական կաղապարների հարացույցը

1. Հիմքի նկատմամբ այլակերտ նշանասերում

Ա. Գոյականական նշանասերում

1) $A + \text{Suf} = N$

2) $V + \text{Suf} = N$

3) $\text{Num} + \text{Suf} = N$

4) $\text{Prep} + \text{Suf} = N$

Բ. Ածականական նշանասերում

1) $N + \text{Suf} = A$

2) $V + \text{Suf} = A$

3) $\text{Num} + \text{Suf} = A$

Գ. Բայական նշանասերում

1) $N + \text{Suf} = V$

2) $A + \text{Suf} = V$

Դ. Մակբայական նշանասերում

1) $N + \text{Suf} = D$

2) $A + \text{Suf} = D$

3) $\text{Num} + \text{Suf} = D$

4) $\text{Pron} + \text{Suf} = D$

5) $P\ II + \text{Suf} = D$

2. Հիմքի նկատմամբ ինքնակերտ նշանասերում

Ա. Գոյականական նշանասերում

$N + \text{Suf} = N$

Բ. Ածականական նշանասերում

$$A + \text{Suf} = A$$

Գ. Բայական նշանասերում

$$V + \text{Suf} = V$$

Դ. Մակբայական նշանասերում

$$D + \text{Suf} = D$$

Քանի որ խոսքի մասերի դասակարգման գործառական և իմաստաշարահյուսական մոտեցմամբ ենք առաջնորդվում, պարտավոր ենք միևնույն սկզբունքը պահպանել նաև ձևաբանական-ձևակազմական և շարահյուսական մակարդակներում: Վերոբերյալ լեզվական կաղապարներում արտահայտված են նաև դերանունը, թվականը և նախդիրը՝ որպես խոսքի մասեր: Նշանային բոլոր մակարդակներում միասնական սկզբունքով առաջնորդվելու նպատակադրմամբ պարտավոր ենք այդ «խոսքի մասերի» գործառական վերաբաշխում կատարել: Ըստ խոսքի մասերի գործառական և իմաստաշարահյուսական դասակարգման դրույթների՝ նախդիրներն ու հետադիրներն առանձին բառեր չեն, այլ նյութական իմաստ ունեցող բառերի, մասնավորապես՝ գոյականների վերլուծական թեքույթներ: Բաղադրյալ բառային նշանի կազմում, սակայն, տարբեր լեզուներում դրանք քերականական տարբեր իմաստներ կարող են ունենալ: Ժամանակակից անգլերենի ածանցական բաղադրություններում առկա է մեկ նախդրային լեզվական կաղապար, որի ներսում ծագմամբ նախդրային սերող հիմքը, միանալով վերջածանցին, կազմում է գոյական: Ինդրո առարկա լեզվական կաղապարի խոսքային իրացումն է՝ *betweenity*: Նկատի ունենալով *between-* սերող հիմքի «միջակայք» իմաստույթը՝ դժվար չէ տվյալ դեպքում կատարել տեղանիշ նախդրի և տեղորոշ մակբայի նույնացում (*identification*): Սակայն մեր կարծիքով այստեղ, ըստ էության, նույնացում մենք չէ, որ կատարում ենք: Ելնելով այն դրույթից, որ, ինչպես քիչ առաջ ասվեց, նախդիրը գործառական շարահյուսության տեսակետից քերականական-վերլուծական թեքույթ է, իսկ բերված նշանային բաղադրության մեջ սերող հիմքը ակնհայտորեն չունի այդպիսի իմաստ, երբեմնի նախդիրն ինքնին արդեն մակբայացված է *betweenity* բաղադրության մեջ. նրա վերաբերական իմաստն այդ բառի կազմում ձեռք է բերել

նյութական իմաստ: Այսպիսով՝ այլակերտ նշանասերման 1-ին բաժնի **U** կետի 4-րդ ենթակետի Prep + Suf = N կաղապարը վերակաղապարում ենք որպես D + Suf = N կաղապար, որը ձևայնացված կարտահայտվի հետևյալ կերպ՝ (Prep + Suf = N) = (D + Suf = N):

Դերանվամբ և թվականներով սերող հիմքերի դեպքում կատարում ենք դրանց և համապատասխան խոսքի մասի նույնացում՝ դիմելով տվյալ բաղադրության ներքին ձևի օգնությանը: Ըստ այդմ՝ մակբայական նշանային բաղադրություն սերող Pron + Suf = D լեզվական կաղապարը, որի խոսքային իրացումը O. Մեշկովի գրքում մեկ նմուշով է ներկայացված՝ anywise, շարահյուսական ներքին վերլուծությամբ համարժեք է սերող հիմքի որոշչային իմաստին, ուստի any- դերանվանական սերող հիմքին վերագրում ենք ածականի քերականական իմաստ. նշանակում է՝ կատարում ենք դերանվան և ածականի նույնացում՝ (Pron + Suf = D) = (A + Suf = D) վերակաղապարմամբ: Վերը բերված կաղապարային հարացույցում թվականական սերող հիմքով երեք կաղապար ունենք, որոնցից մեկը՝ գոյականական, մյուսը՝ ածականական, երրորդը մակբայական նշանասերման ընդօրինակումն է՝ Num + Suf = N, Num + Suf = A, Num + Suf = D: Հայտնի է, որ թվականը կարող է ունենալ թե՛ գոյականի, թե՛ ածականի գործառական ու քերականական իմաստներ: Պարզելու համար, թե մեզ հետաքրքրող վերջին կաղապարներում թվականական սերող հիմքերից յուրաքանչյուրն այդ իմաստներից որի՛ կրողն է, առաջնորդվում ենք Մ. Պանովի վարկածով, ըստ որի՝ քանակական թվականները՝ գոյականի, դասականներն ածականի քերականական և գործառական իմաստներ ունեն [Панов 1966, 71–102]: Արդ՝ վերջին կաղապարներին համապատասխանող մեկական նմուշ է բերում O. Մեշկովը հիշյալ աշխատության մեջ՝ five – Num + Suf = N, sixfold – Num + Suf = A, secondly – Num + Suf = D: Five- և six- բաղադրիչները քանակական թվական են, ուստի դրանք կնույնացնենք գոյականի հետ, second- բաղադրիչը դասական թվական է, ուստի սրա նույնացումը տեղի կունենա ածականի հետ: Վերակաղապարումները կդրսևորվեն հետևյալ կերպ՝ (Num + Suf = N) = (N + Suf = N), (Num + Suf = A) = (N + Suf = A), (Num + Suf = D) = (A + Suf = D):

P II + Suf = D կաղապարում P II-ն ինքնին բայածն է, և որևէ դժվարություն չի ներկայացնում այդ դերբայի (O. Մեշկովի բերած օրինակում՝ fixedly մակբայի fixed-

բաղադրիչը) [Мешков 1976, 88] և լայն առումով բայի նույնացումը, ուստի 1-ին բաժնի 7 կետի 5-րդ ենթակետը վերակադապարում ենք որպես $V + Suf = D$ կադապար:

Վերակադապարումները ցույց են տալիս, որ Օ. Մեշկովի կադապարային հարացույցում հիմքի նկատմամբ այլակերտ համարված $Num + Suf = N$ կադապարը մեր համակարգում դիտվում է ինքնակերտ՝ ըստ դրա հետ նույնացված $N + Suf = N$ կադապարի, ուստի այն տեղափոխվում է ինքնակերտ նշանասերման **Ա** ենթատիրույթ՝ գոյականական նշանասերման հարացույցից բացառելով 3-րդ բաղադրիչը: Երկրորդ փոխկադապարմամբ թվականի և գոյականի նույնացումը պահպանում է կադապարի այլակերտությունը՝ թվականական հիմքով ածականական նշանասերումը տեղափոխելով այդ նույն նշանասերման գոյականական հիմքով կադապարային դաշտ: Իսկ թվականական և ածականական հիմքերի նույնացմամբ հիշյալ հարացույցում առանձնացված թվականահիմք ենթատեսակն է դուրս մղվում՝ քանակապես համալրելով մակբայական նշանասերման ածականական հիմքով բաղադրությունների շարքը: Եվ այսպես՝ ստորև ներկայացնում ենք նշանասերման մեր կադապարային հարացույցը, որը թեև գլխավորապես հիմնվում է Օլեգ Մեշկովի արտածած վերջածանցական կադապարների վրա, սակայն այդուհանդերձ պարունակում է մասնակի փոփոխություններ:

1. Հիմքի նկատմամբ այլակերտ նշանասերում

Ա. Գոյականական նշանասերում

1) $A + Suf = N$

2) $V + Suf = N$

3) $D + Suf = N$

Բ. Ածականական նշանասերում

1) $N + Suf = A$

2) $V + Suf = A$

Գ. Բայական նշանասերում

1) $N + Suf = V$

2) $A + Suf = V$

Դ. Մակբայական նշանասերում

$$1) N + Suf = D$$

$$2) A + Suf = D$$

$$3) V + Suf = D$$

2. Հիմքի նկատմամբ ինքնակերտ նշանասերում

Ա. Գոյականական նշանասերում

$$N + Suf = N$$

Բ. Ածականական նշանասերում

$$A + Suf = A$$

Գ. Բայական նշանասերում

$$V + Suf = V$$

Դ. Մակբայական նշանասերում

$$D + suf = D$$

Ինչպես և սպասելի էր, այլակերտ նշանասերման տիրույթում նույնացումները հանգեցրել են կաղապարների քանակի նվազման. գոյականական նշանասերման ենթահարացույցում Օ. Մեշկովի ներկայացրած չորս կաղապարի դիմաց ունենք երեք կաղապար, ածականական նշանասերման ենթահարացույցի երեք կաղապարի դիմաց՝ երկուսը, բայական նշանասերման կաղապարների քանակը՝ երկու, պահպանվել է, իսկ մակբայական հինգ կաղապարի դիմաց ունենք ընդամենը երեք կաղապար:

Ածանցական բաղադրություններում **նշանակյալի** (բառային իմաստի) կազմավորման ծանրությունը հե՛նց ածանցների վրա է կենտրոնացած. սրանցո՛վ է, որ ձևավորվում է այս կամ այն խոսքի մասը, ուստի ածանցները եթե նեղ լեզվաբանական առումով բառակերտ ձևույթներ են, ապա նշանագիտական տեսակետից դրանք **նշանասերիչ ցուցիչներ** են, որոնցով հագեցած է լեզվի **ցուցադաշտը** [Bühler 1934, 366]: Այս քերականական ձևույթների առկայությունը միաժամանակ ազդարարում է լեզվի մեջ բառակերտման հնարավորությունը, ուստի դրանք, իրենց հաղորդման դերով պայմանավորված, նաև **ազդանշան** են: Վերը խոսքի մասերի սերումը փորձեցինք վերարժարժել՝ ելնելով նրանց հասկացական կարգերից: Նշանագիտական հայեցակետով անդրադառնալով ածանցներին՝ դրանք

այժմ կներկայացնենք հասկացական խմբեր ձևավորելու իրենց ազդանշանային և ցուցանշանային դերերով: Ըստ այդմ՝ նշանասերման գործընթացում ածանցներն **ազդանշում** են բառային նշանների առարկայացույց, հատկանշացույց, ընթացացույց և մակադրացույց հասկացական կարգեր: Քանի որ մեր կարծիքով արդի անգլերենի բառակազմության ամենից ամբողջական քննությունը տրված է Օ. Մեշկովի նշված աշխատության մեջ, ածանցները՝ բառակերտման համապատասխան կաղապարներով, ներկայացնում ենք ըստ այդ գրքում եղած ցուցակի՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան հղումներ:

Ածանցական այլակերպ նշանասերում: Առարկայական ազդանշաններ:

Առարկայացույց ազդանշանների հարացույցն են ներկայացնում բոլոր գոյականակերտ ածանցները: Նախ՝ պարտավոր ենք ներկայացնել ածանցները՝ այբբենական կարգով, ապա՝ դրանցով բաղադրվող կազմությունները՝ ըստ լեզվախոսության երեք շերտերի, որոնք են տրամաբանական լիակաղապարները, հոգեբանական մասնակաղապարները, այդ երկբնույթ կաղապարներին համապատասխանող նյութական (խոսքային) իրացումները: Ինչպես հայտնի է, Է. Աթայանը լեզվախոսքային ամբողջությունը, ի հակադրություն տարածված մոտեցման, ներկայացնում է ոչ թե լեզու/խոսք երկատմամբ, այլ եռակի շերտավորմամբ [Աթայան 1981, 35. Աթայան 1988]: Լեզվի տրամաբանական շերտը նա անվանում է *լեզվական համակարգ*, հոգեբանական շերտը՝ *լեզվախոսքային շարակարգ*, նյութական շերտը՝ *խոսքային գծակարգ* [Աթայան 1988]: Հարկ է նկատել, որ չեն նույնանում Ֆ. դը Սոսյուրի և Է. Աթայանի առանձնացրած շարակարգերը: Է. Աթայանի հայեցակետով պարզորոշ է, որ շարակարգը լեզուն խոսքին կամրջող օղակն է, մինչդեռ Ֆ. Սոսյուրի տեսության համաձայն՝ շարակարգայինը խոսքային հարաբերություն է [Սոսյուր 2008, 188-192]:

Վերջածանցում: Այժմ անցնենք առարկայնության դասի առարկայական ազդանշաններով գոյականական այլակերտ նշանասերման վերջածանցական կաղապարների քննությանը:

1) **A + Suf = N կաղապար:** Ածականական հիմքով գոյականակերպ վերջածանցները, ավելանալով ածականական հիմքին, կազմում են գոյականներ, ուստի դրանք այլ բան չեն, եթե ոչ առարկայացույց ազդանշաններ: Բերենք դրանց

ցանկը՝ -acy, -age, -an, -ard, -ase, -dom, -en, -er, -ery, -hood, -ia, -ion, -ism, -ist, -itude, -ity, -ling, -ment, -ness, -ster, -th, -um, -ure, -y: Այս առարկայացույց ազդանշաններով սերվող հասկացությունները կարող ենք ներկայացնել հետևյալ աղյուսակով (տե՛ս աղյուսակ 3).

Աղյուսակ 3

A + Suf = N լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. A + Suf = N	A + acy = N	intimacy
2. A + Suf = N	A + age = N	shortage
3. A + Suf = N	A + an = N	politician
4. A + Suf = N	A + ard = N	drunkard
5. A + Suf = N	A + ase = N	invertase
6. A + Suf = N	A + dom = N	freedom
7. A + Suf = N	A + en = N	bittern
8. A + Suf = N	A + er = N	westerner
9. A + Suf = N	A + ery = N	finery
10. A + Suf = N	A + hood = N	falsehood
11. A + Suf = N	A + ia = N	inertia
12. A + Suf = N	A + ion = N	profusion
13. A + Suf = N	A + ism = N	realism
14. A + Suf = N	A + ist = N	realist
15. A + Suf = N	A + itude = N	aptitude
16. A + Suf = N	A + ity = N	humidity
17. A + Suf = N	A + ling = N	hireling
18. A + Suf = N	A + ment = N	basement

Աղյուսակ 3-ի շարունակությունը

19. A + Suf = N	A + ness = N	curableness
20. A + Suf = N	A + ster = N	youngster
21. A + Suf = N	A + th = N	depth
22. A + Suf = N	A + um = N	aquarium
23. A + Suf = N	A + ure = N	moisture
24. A + Suf = N	A + y = N	brownie

2) **V + Suf = N կաղապար:** Բայական հիմքով գոյականակերտ ածանցները՝ առարկայացույց ազդանշանները, գոյականներ սերելիս պահպանում են վերջիններիս մեջ ընթացային հասկացական իմաստույթը: Այս հիմքին ավելացող ածանցներն են՝ -acy, -ade, -age, -al, -ance, -ant, -ard, -ee, -er, -ess, -ice, -ics, -ine, -ing, -ion, -is, -ling, -ment, -oon, -ster, -th, -ure, -y: Ստորև ներկայացնում ենք բայական հիմքից առարկայացույց ազդանշաններով սերվող հասկացությունների աղյուսակը.

Աղյուսակ 4

V + Suf = N լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. V + Suf = N	V + acy = N	conspiracy
2. V + Suf = N	V + ade = N	blockade
3. V + Suf = N	V + age = N	usage
4. V + Suf = N	V + al = N	arrival
5. V + Suf = N	V + ance = N	avoidance
6. V + Suf = N	V + ant = N	assistant
7. V + Suf = N	V + ard = N	drunkard

Աղյուսակ 4-ի շարունակությունը

8. V + Suf = N	V + ee = N	draftee
9. V + Suf = N	V + er = N	worker
10. V + Suf = N	V + ess = N	hostess
11. V + Suf = N	V + ice = N	notice
12. V + Suf = N	V + ics = N	significs
13. V + Suf = N	V + ine = N	routine
14. V + Suf = N	V + ing = N	reading
15. V + Suf = N	V + ion = N	organization
16. V + Suf = N	V + is = N	analysis
17. V + Suf = N	V + ling = N	hireling
18. V + Suf = N	V + ment = N	statement
19. V + Suf = N	V + oon = N	spittoon
20. V + Suf = N	V + ster = N	throwster
21. V + Suf = N	V + th = N	stealth
22. V + Suf = N	V + ure = N	mixture
23. V + Suf = N	V + y = N	discovery

3) **D + Suf = N կաղապար:** Ինչպես նշեցինք վերը, մակբայական հիմքով գոյական սերող միակ վերջածանցը *-ity*-ն է, որն ավելանում է ծագմամբ նախդիր *between-* բաղադրիչին: Սակայն գործառական տեսակետից, ինչպես արդեն նկատել ենք, տեղի է ունեցել նախդրի մակբայացում: Այնպես որ, $D + Suf = N$ լեզվական (համակարգային) կաղապարի գործունեութենական (շարակարգային՝ աթայանական ըմբռնմամբ) համարժեքն է $D + ity = N$ մասնակաղապարը, գծակարգային իրացումը՝ *betweenity* գոյականը:

Իսկ հիմա դիտարկման արժանացնենք հատկանշայնության դասի հատկանշային ազդանշանները՝ վերլուծությունը սկսելով ածականական նշանասերումից:

N + Suf = A, V + Suf = A կաղապարեր: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ածականական վերջածանցային այլակերտ նշանասերման երկու կաղապար է գործում արդի անգլերենում՝ գոյականական և բայական հիմքերով. դրանք են՝ N + Suf = A, V + Suf = A: Ըստ մեր հարացույցի՝ ածականական նշանային բաղադրության քանակական թվական հիմքով բաղադրիչը նույնացված է գոյական հիմքով բաղադրիչին: Դրանցից առաջինը ներկայացված է 21, իսկ երկրորդը՝ 11 մասնակաղապարով: Ինչպես գոյականական կաղապարների դեպքում, ածականական ընդհանրական-լեզվական կաղապարների մասնավորումն իրացվում է դրանց ներսում համապատասխան (այս դեպքում՝ հատկանշացույց) ազդանշանի՝ ածականակերտ ածանցի առկայացմամբ:

Գոյականական հիմքով ածականական նշանասերման վերջածանց ազդանշաններն են՝ -able, -aceous, -al, -(i)an, -ar, -ary, -ate, -ed, -esque, -fold, -ful, -ic, -ile, -ine, -ish, -ive, -less, -ly, -ous, -some, -y: Ժամանակակից անգլերենի գոյական հիմքով վերջածանցման միջոցով ածականական նշանասերման բնույթի պատկերումը՝ լեզվախոսքային ոլորտների հարաբերակցությամբ, ներկայացված է 5-րդ աղյուսակով:

Աղյուսակ 5

$N + Suf = A$ **լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները**

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. $N + Suf = A$	$N + able = A$	comfortable
2. $N + Suf = A$	$N + aceous = A$	olivaceous
3. $N + Suf = A$	$N + al = A$	differential
4. $N + Suf = A$	$N + (i)an = A$	newtonian
5. $N + Suf = A$	$N + ar = A$	capsular
6. $N + Suf = A$	$N + ary = A$	elementary
7. $N + Suf = A$	$N + ate = A$	fortunate
8. $N + Suf = A$	$N + ed = A$	winged
9. $N + Suf = A$	$N + esque = A$	picturesque
10. $N + Suf = A$	$N + fold = A$	sixfold
11. $N + Suf = A$	$N + ful = A$	beautiful
12. $N + Suf = A$	$N + ic = A$	carbonic
13. $N + Suf = A$	$N + ile = A$	mercantile
14. $N + Suf = A$	$N + ine = A$	adamantine
15. $N + Suf = A$	$N + ish = A$	foolish
16. $N + Suf = A$	$N + ive = A$	massive
17. $N + Suf = A$	$N + less = A$	friendless
18. $N + Suf = A$	$N + ly = A$	brotherly
19. $N + Suf = A$	$N + ous = A$	mountainous
20. $N + Suf = A$	$N + some = A$	laboursome
21. $N + Suf = A$	$N + y = A$	icy

$V + Suf = A$ կաղապարով ածականներ են ձևավորվում հետևյալ վերջածանցների օգնությամբ՝ -able, -ant, -ary, -ed, -ful, -ic, -ile, -ive, -less, -ly, -some: Արդի անգլերենի՝ ածական հիմքով վերջածանցման միջոցով ածականական նշանասերման պատկերը՝ լեզվախոսքային ոլորտների հարաբերակցությամբ, ներկայացված է 6-րդ աղյուսակով:

Աղյուսակ 6

$V + Suf = A$ **լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները**

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. $V + Suf = A$	$V + able = A$	eatable
2. $V + Suf = A$	$V + ant = A$	radiant
3. $V + Suf = A$	$V + ary = A$	tributary
4. $V + Suf = A$	$V + ed = A$	professed
5. $V + Suf = A$	$V + ful = A$	forgetful
6. $V + Suf = A$	$V + ic = A$	pacific
7. $V + Suf = A$	$V + ile = A$	servile
8. $V + Suf = A$	$V + ive = A$	active
9. $V + Suf = A$	$V + less = A$	drainless
10. $V + Suf = A$	$V + ly = A$	seemly
11. $V + Suf = A$	$V + some = A$	quarrelsome

$N + Suf = V$, $A + Suf = V$ կաղապարներ: Անդրադառնալով **ընթացայնության դասի** ընթացային ազդանշաններին՝ հիշեցնենք, որ բայական նշանասերման վերջածանցավոր այլակերտ բայերի կաղապարման հարցում ընդունում ենք 0. Մեշկովի կաղապարման դրույթը, որի համաձայն՝ նշված բայերը դրսևորվում են նշված երկու ընդհանրական կաղապարով՝ $N + Suf = V$ և $A + Suf = V$, այսինքն՝ բայական այլակերտ նշանասերմունը կատարվում է գոյականական և ածականական

հիմքերով: Քանի որ այս կաղապարներն ընդամենը չորսական մասնակաղապարով են ներկայանում, ավելորդ ենք համարում դրանց իրացումներն աղյուսակներով ներկայացնելը:

$N + Suf = V$ ընդհանրական կամ լեզվական կաղապարի իրացվելիությունը տեղի է ունենում հետևյալ վերջածանց-ազդանշանների առկայացմամբ՝ -ate, -en, -ify, -ize:

$A + Suf = V$ կաղապարի ազդանշան-առկայացուցիչները ճիշտ և ճիշտ նույն վերջածանցներն են՝ -ate, -en, -ify, -ize. հասկանալի է, որ այս դեպքում միջկաղապարային տարբերությունը հիմքային պայմանավորվածություն ունի, այսինքն՝ հակադրության ցուցանշանների դեր են ստանձնում նշված կաղապարների հիմքերը՝ մի դեպքում ածական, մյուս դեպքում գոյական կարգային բաղադրությամբ:

$N + Suf = V$ ընդհանրական կաղապարի շարակարգային մասնակաղապարումը՝ -ate ազդանշանով, կլինի $N + ate = V$, որի խոսքային իրացումներից է, օրինակ, vaccinate ածանցումը: Նույն կաղապարի շարակարգային մասնակաղապարումը՝ -en ազդանշանով, գծակարգում (խոսքում) ունի, օրինակ, frighten իրացումը, -ify ազդանշանով՝ glorify իրացումը, իսկ -ize ազդանշանով՝ jargonize դրսևորումը: $A + Suf = V$ ընդհանրական կաղապարի շարակարգային մասնակաղապարումները՝ -ate, -en, -ify, -ize ազդանշաններով, կունենան, համապատասխանաբար, այսպիսի գծակարգային իրացումներ՝ pacificate, darken, purify, activize:

$N + Suf = D$, $A + Suf = D$, $V + Suf = D$: Մակադրահատկանշայնության դասի մեջ հիմքերի նույնացումների հետևանքով մակադրահատկանշային ազդանշաններով մակբայական նշանասերման հինգ կաղապարի դիմաց արդի անգլերենի համար արձանագրեցինք երեք ընդհանրական կաղապարի գոյություն: Դրանք են՝ $N + Suf = D$, $A + Suf = D$, $V + Suf = D$: Գոյական հիմքով մակբայացման շարակարգային մասնակաղապարման մակբայակերտ ազդանշաններն են -wise, -ward, -ways, ածական հիմքով ազդանշանները՝ -ly, -wise, բայական հիմքով ազդանշանը՝ -ly: Ներկայացնենք, արդ, շարակարգային ձևատիպարները և դրանց խոսքային (գծակարգային) իրացումները: $N + Suf = D$ լեզվական կաղապարի

շարակարգային արտացոլումներն են՝ N + wise = D, N + ward = D, N + ways = D, որոնց խոսքային իրացումներն են՝ նույն հաջորդականությամբ՝ clockwise, seaward, endways: A + Suf = D լեզվական կաղապարի շարակարգային արտացոլումներն են՝ A + ly = D, A + wise = D: Նույն հաջորդականությամբ դրանց խոսքային իրացումներն են՝ clearly, longwise: V + Suf = D լեզվական կաղապարի շարակարգային արտացոլումն է՝ V + ly = D՝ խոսքային այսպիսի դրսևորմամբ՝ fixedly:

Նախաձանցում: Այլակերտ նշանասերման նախաձանցական կաղապարներին անդրադառնալիս հարկ է ուշադրության առնել Կ. Պիոտտուխի «Նախաձանցների համակարգն արդի անգլերենում» [Пиотух 1971] ուսումնասիրությունը, որի մեջ ամփոփված տվյալների համաձայն՝ 42 բառակազմական նախաձանցներից 5-ը (be-, de-, en-, out-, un₁-) միայն բայակերտ է, 1-ը (cis-)՝ միայն ածականակերտ, 5-ը (ex-, arch-, ana-, dys-, per-)՝ միայն գոյականակերտ, 1-ը (a₁-)՝ միայն մակբայակերտ. 14-ը (a₂-, anti-, demi-, api-, he-, mi-, hypo-, hyper-, im / in-, non-, pro-, pan-, subter-, supra-, un₂-) գոյականակերտման և ածականակերտման զուգիմաստություն ունի, 3-ը (for-, sur-, re-)՝ բայակերտման և գոյականակերտման զուգիմաստություն, 1-ը (circum-)՝ բայակերտման և ածականակերտման զուգիմաստություն, 12-ը (co-, contra-, counter-, dis-, intra-, mis-, post-, pre-, sub-, trans-, over-, under-)՝ բայակերտման, գոյականակերտման և ածականակերտման եռիմաստություն [Пиотух 1971]: Թվային ցուցչով նախաձանցները, արտահայտության նույնությամբ հանդերձ, տարիմաստ են, հետևաբար տարբեր (համանուն) ածանցներ են: Ինչպես տեսնում ենք, Կ. Պիոտտուխը իր բերած նախաձանցների շարքում միայն մեկն է մակբայակերտ համարում՝ a₁-ը: Մեշկովն իր կաղապարային հարացույցում 3 մակբայակերտ նախաձանց է ներկայացնում՝ a₁-, over-, per-՝ a₁-ի գործառություններից մեկը, սակայն, համարելով վիճակակերտումը (St համառոտագրությամբ) [Мешков 1976, 96–98]: Նկատի առնելով մի կողմից՝ այն, որ ածանցների կարգային անվանումները տալիս ենք՝ համապատասխան նրանց խոսքամասային իմաստների, մյուս կողմից՝ այն, որ հանրահայտ ու վստահելի բառարաններում հիշյալ նախաձանցով «asmoke» բառահոդվածում՝ այդ բառի դիմաց, կա մակբայական «adv» նշումը [Անգլերեն-հայերեն բառարան 1984, 60: Мюллер 1990, 48], մենք ևս կատարում ենք

համապատասխան նույնացում՝ O. Մեշկովի առաջարկած հարացույցից զանց առնելով $a + V = St$ կաղապարը՝ այն ևս համարելով մակբայակերտ: O. Մեշկովի հարացույցը զննելիս պարզում ենք, որ նախաձանցավոր գոյականների կաղապարներն ամբողջությամբ ինքնակերտ նշանասերման ոլորտին են պատկանում [Мешков 1976, 96 – 98], ուստի կդիտարկվեն համապատասխան գլխում: Նախաձանցավոր մակբայները, ընդհակառակը, միայն այլակերտ նշանասերման տիրույթում են, իսկ նախաձանցավոր բայերն ու ածականները հանդես են բերում թե՛ այլակերտ, թե՛ ինքնակերտ նշանասերման հատկություններ [Мешков 1976, 96 – 98]: Քննենք, արդ, այլակերտ նշանասերման կաղապարները՝ սույն գլխի սկզբունքին համապատասխան:

Ընթացային ազդանշաններով բայական նշանասերումը, ըստ հիմքային արտահայտության, երկու ընդհանրական (լեզվական/համակարգային) կաղապար ունի՝ գոյական հիմքով նշանային կազմավորում ($Pref + N = V$) և ածական հիմքով նշանային կազմավորում ($Pref + A = V$): Դիտարկեք դրանք հերթականությամբ:

Գոյական հիմքով բայական նշանասերման համակարգային կաղապարի շարակարգային մասնակաղապարմանը մասնակցում են be-, de-, dis-, en-/em-, out-, un₁- նախաձանցները: $Pref + N = V$ ընդհանրական (համակարգային) կաղապարը նշանային բաղկացության նշանակյալն է, որի նշանակման շարակարգային մասնակաղապարումներն են՝ $be + N = V$, $de + N = V$, $dis + N = V$, $en / em + N = V$, $out + N = V$, $un_1 + N = V$: Այս նշանակումների վերջնական արտահայտությունը կլինի տվյալ մասնակաղապարման գծակարգային (խոսքային) իրացումը, այն է՝ $be + N = V - (to) becloud$, $de + N = V - (to) depasture$, $dis + N = V - (to) disjoint$, $en / em + N = V - (to) entrain$, $(to) embus$, $out + N = V - (to) outirod$, $un_1 + N = V - (to) unhorse$:

Ածական հիմքով բայական նշանասերման համակարգային կաղապարի մասնակաղապարմանը մասնակցում են նախորդ կաղապարի միայն առաջին չորս նախաձանցները (առանց out- և un₁- աձանցների): $Pref + A = V$ նշանակյալին շարակարգային շերտի նշանակումներով համապատասխանում են $be + A = V$, $de + A = V$, $dis + A = V$, $en / em + A = V$ մասնակաղապարումները, որոնց գծակարգային արտահայտության հարաբերակցությունը իրացված ենք գտնում նշանակումից դեպի

նշանակիչ ուղղորդվող հետևյալ օրինակներում՝ be + A = V – (to) belittle, de + A = V – (to) denude, dis + A = V – (to) disable, en / em + A = V – (to) enfeeble, embitter:

Հատկանշային ազդանշաններ: Ածականական նախածանցային նշանասերման չորս լեզվական կաղապար կա արդի անգլերենում, բոլորն էլ՝ գոյական հիմքով [Мешков 1976, 103]: Pref + N = A համակարգային կաղապարի շարակարգային մասնակաղապարումները ձևավորվում են anti-, ex-, over-, post- նախածանցներով: Բերենք օրինակներ սրանց համապատասխանող գծակարգային իրացումներից. anti + N = A – antifriction, ex + N = A – exnest, over + N = A – overage, post + N = A – post-war:

Մակադրահատկանշային ազդանշաններ: Մակբայական նախածանցով մակբայական նշանասերման երկու լեզվական կաղապար ենք ընդունում (սրանցից մեկը, ըստ, Օ. Մեշկովի, վիճակային ածանցում է [Мешков 1976, 103 - 104]), որոնցից մեկը ձևավորվում է՝ գոյական, մյուսը՝ բայական հիմքով՝ ա) Pref + N = D, բ) Pref + V = D: Ներկայացնենք միանգամից այս կաղապարները՝ ըստ լեզվախոսության համակարգ/ շարակարգ/գծակարգ շերտանցումների.

ա) Pref + N = D = a₁ + N = D – abed,

բ) Pref + V = D = a₁ + V = D – asmoke:

Ածանցական բաղադրությունների ինքնակերտ նշանասերում: Ժամանակակից անգլերենի առարկայական ազդանշաններով գոյականական ինքնակերտ նշանասերման՝ գոյական հիմքով վերջածանցական լեզվական կաղապարն է N + Suf = N, որի շարակարգային մասնակաղապարումը գործառում է հետևյալ վերջածանցների միջոցով՝ -asy, -ade, -age, -an, -ana, -ance, -ant, -ase, -aster, -ate, -cide, -dom, -drome, -ee, -een, -eme, -en, -enne, -er, -ese, -ess, -ette₁, -ette₂, -ful, -hood, -i, ice, -ics, -ide, -ifer, -ina, -ine, -is, -ism, -ist, -ity, -kin, -let, -ling, -ment, -ock, oid, -(e)ry, -oon, -ship, -ster, -ule, -um, -ure, -us, -y: Լեզվական կաղապարի հոգեբանական և նյութական անցումները պատկերված են 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7

N + Suf = N լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային հրացումները

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. $N + Suf = N$	$N + asy = N$	presidency
2. $N + Suf = N$	$N + ade = N$	lemonade
3. $N + Suf = N$	$N + age = N$	coverage
4. $N + Suf = N$	$N + an = N$	physician
5. $N + Suf = N$	$N + ana = N$	Americana
6. $N + Suf = N$	$N + ance = N$	alliance
7. $N + Suf = N$	$N + ant = N$	contestant
8. $N + Suf = N$	$N + ase = N$	amylase
9. $N + Suf = N$	$N + aster = N$	poetaster
10. $N + Suf = N$	$N + ate = N$	doctorate
11. $N + Suf = N$	$N + cide = N$	homocide
12. $N + Suf = N$	$N + dom = N$	kingdom
13. $N + Suf = N$	$N + drome = N$	airdrome
14. $N + Suf = N$	$N + ee = N$	refugee
15. $N + Suf = N$	$N + een = N$	canteen
16. $N + Suf = N$	$N + eme = N$	morpheme
17. $N + Suf = N$	$N + en = N$	brethren
18. $N + Suf = N$	$N + enne = N$	comedienne
19. $N + Suf = N$	$N + er = N$	gardener
20. $N + Suf = N$	$N + ese = N$	Chinese
21. $N + Suf = N$	$N + ess = N$	poetess
22. $N + Suf = N$	$N + ette_1 = N$	etiquette

Աղյուսակ 7-ի շարունակությունը

23. N + Suf = N	N + ette ₂ = N	cigarette
24. N + Suf = N	N + ful = N	handful
25. N + Suf = N	N + hood = N	childhood
26. N + Suf = N	N + i = N	Pakistani
27. N + Suf = N	N + ice = N	cowardice
28. N + Suf = N	N + ics = N	mathematics
29. N + Suf = N	N + ide = N	ozonide
30. N + Suf = N	N + ifer = N	conifer
31. N + Suf = N	N + ina = N	sonatina
32. N + Suf = N	N + ine = N	cobaltine
33. N + Suf = N	N + is = N	appendicitis
34. N + Suf = N	N + ism = N	simbolism
35. N + Suf = N	N + ist = N	pianist
36. N + Suf = N	N + ity = N	seniority
37. N + Suf = N	N + kin = N	lambkin
38. N + Suf = N	N + let = N	booklet
39. N + Suf = N	N + ling = N	manling
40. N + Suf = N	N + ment = N	basement
41. N + Suf = N	N + ock = N	hillock
42. N + Suf = N	N + oid = N	meteoroid
43. N + Suf = N	N + oon = N	cartoon
44. N + Suf = N	N + (e)ry = N	forestry, jewellery
45. N + Suf = N	N + ship = N	friendship
46. N + Suf = N	N + ster = N	roadster
47. N + Suf = N	N + ule = N	spherule
48. N + Suf = N	N + um = N	ligamentum
49. N + Suf = N	N + ure = N	prefecture
50. N + Suf = N	N + us = N	poiypus
51. N + Suf = N	N + y = N	daddy

Հատկանշային ազդանշաններ: Ածականական ինքնակերտ նշանասերում:

Ածականական ինքնակերտ նշանասերման վեց կաղապար է բերում Օ. Մեշկովը

[Мешков 1976, 84], որոնք այստեղ ևս ներկայացնում ենք լեզվախոսքային հարաբերությունների կտրվածքով: $A + Suf = A$ լեզվական կաղապարի հոգեբանական (լեզվախոսքային/շարակարգային) մասնակաղապարումն իրականացվում է հետևյալ վերջածանցների միջոցով՝ -able, -ful, -ish, -ly, -some, -y: Հոգեբանական (շարակարգային) շերտի մինորդությամբ լեզվից խոսք կամ համակարգից գծակարգ անցումը կաղապարային աստիճանական իրացման հետևյալ դրսևորումներն է ունենում. $A + Suf = A = A + able = A - commonable$, $A + Suf = A = A + fold = A - manyfold$, $A + Suf = A = A + ful = A - darkful$, $A + Suf = A = A + ish = A - coldish$, $A + Suf = A = A + ly = A - sickly$, $A + Suf = A = A + some = A - darksome$, $A + Suf = A = A + y = A - greeny$:

Ընթացային և մակադրահատկանշային ազդանշաններ: Բայական և մակբայական ինքնակերտ նշանասերումներ: Վերջածանցմամբ ինքնակերտության տեսակետից ժամանակակից անգլերենը բայական նշանասերման՝ մեկ և մակբայական նշանասերման երկու կաղապար ունի: Ներկայացնենք, նախ, ընդհանրական կաղապարները՝ $V + Suf = V$, $D + Suf = D$: Նշված կաղապարներից բայական նշանասերման մասնակաղապարումը կատարվում է -ify վերջածանցի, իսկ մակբայական նշանասերումը՝ -ward և -wards վերջածանցների միջոցով: Բերենք դրանց՝ լեզվից հոգեկան շերտի միջնորդությամբ իրականացվող խոսքային իրացումները՝ որպես բառային միավորներ.

$V + Suf = V = V + ify = V - argufy$.

1) $D + Suf = D = D + ward = D - downward$, 2) $D + Suf = D = D + wards = D - onwards$:

Նախածանցում (ինքնակերտ նշանասերման նախածանցական կաղապարները): Ժամանակակից անգլերենի նախածանցական ինքնակերտ կաղապարների մեջ գոյություն չունի մակբայական նշանասերում: Նախածանցմամբ ինքնակերտ նշանասերման կաղապարներն իրացված են գոյականակերտմամբ, ածականակերտմամբ և բայակերտմամբ: Այս երեքը մոտավորապես նույն քանակությամբ մասնակաղապարումներ ունեն՝ 28 գոյականակերտ, 25 ածականակերտ և 23 բայակերտ:

Առարկայական ազդանշաններ: Գոյականական ինքնակերտ նշանասերում:

Գոյականական ինքնակերտ նշանասերմանն օժանդակում են հետևյալ նախածանցները՝ a-, anti-, arch-, co-, contra-, counter-, demi-, dis-, dys-, epi-, ex-, fore-, hemi-, hyper-, hypo-, in1-, mis-, non-, out-, over-, post-, pre-, pro-, sub-, super-, sur-, un1-, under- [Мешков 1976, 104-109]: Սրանք Pref + N = N լեզվական կաղապարից հոգեկան շերտի անցման առկայացուցիչներն են, որոնցով սերվում են գոյականական նշաններ: Լեզվական կաղապարից հոգեբանական շերտի միջնորդությամբ գոյականական նշանասերման ազդարարման պատկերը բերված է 8-րդ աղյուսակում:

Աղյուսակ 8

Pref + N = N լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. Pref + N = N	a + N = N	atheism
2. Pref + N = N	anti + N = N	anti-bacteria
3. Pref + N = N	arch + N = N	arch-father
4. Pref + N = N	co + N = N	cooperator
5. Pref + N = N	contra + N = N	contra-rotation
6. Pref + N = N	counter + N = N	counter-attraction
7. Pref + N = N	demi + N = N	demi-circle
8. Pref + N = N	dis + N = N	disadvantage
9. Pref + N = N	dys + N = N	dysfunction
10. Pref + N = N	epi + N = N	epithet
11. Pref + N = N	ex + N = N	ex-champion

Աղյուսակ 8-ի շարունակությունը

12. Pref + N = N	fore + N = N	forefather
13. Pref + N = N	hemi + N = N	hemisphere
14. Pref + N = N	hyper + N = N	hypercriticism
15. Pref + N = N	hypo + N = N	hypochondria
16. Pref + N = N	in ₁ + N = N	inmixture
17. Pref + N = N	mis + N = N	mistrust
18. Pref + N = N	non + N = N	non-ability
19. Pref + N = N	out + N = N	outfield
20. Pref + N = N	over + N = N	overman
21. Pref + N = N	post + N = N	postposition
22. Pref + N = N	pre + N = N	pre-election
23. Pref + N = N	pro + N = N	prowar
24. Pref + N = N	sub + N = N	substandard
25. Pref + N = N	super + N = N	supermarket
26. Pref + N = N	sur + N = N	surface
27. Pref + N = N	un ₁ + N = N	unemployment
28. Pref + N = N	under + N = N	undersecretary

Հատկանշային ազդանշաններ: Ածականական ինքնակերտ նշանասերում:

Նախաձանցներով ածականական ինքնակերտ նշանասերման ցուցանշանները կամ ազդանշաններն են՝ a-, anti-, circum-, cis-, co-, demi-, dis-, dys-, epi-, ex-, hyper-, hypo-, in₂-, inter-, non-, over-, pan-, post-, pre-, pro-, sub-, super-, trans-, un₁-, under-: Սրանք առկայացուցիչներն են հոգեկան շերտի, որոնց միջնորդությամբ Pref + A = A լեզվական կաղապարը խոսքում ունենում է իր առարկայական վերաբերությունը: Նախաձանցներով ածականական ինքնակերտ նշանասերման բնույթը պարզորոշ արտացոլված է 9-րդ աղյուսակում:

Աղյուսակ 9

***Pref + A = A* լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները**

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. Pref + A = A	a + A = A	amoral
2. Pref + A = A	anti + A = A	antigrammatical
3. Pref + A = A	circum + A = A	circum-lunar
4. Pref + A = A	cis + A = A	cisatlantic
5. Pref + A = A	co + A = A	co-extensive
6. Pref + A = A	demi + A = A	demiofficial
7. Pref + A = A	dis + A = A	discontinuous
8. Pref + A = A	dys + A = A	dysinterested
9. Pref + A = A	epi + A = A	epicentral
10. Pref + A = A	ex + A = A	excentral
11. Pref + A = A	hyper + A = A	hyperacoustic
12. Pref + A = A	hypo + A = A	hypodermic
13. Pref + A = A	in ₂ + A = A	incarable
14. Pref + A = A	inter + A = A	intercontinental
15. Pref + A = A	non + A = A	non-human
16. Pref + A = A	over + A = A	over-delicate
17. Pref + A = A	pan + A = A	pan-American
18. Pref + A = A	post + A = A	postpalatal
19. Pref + A = A	pre + A = A	pre-human
20. Pref + A = A	pro + A = A	profascist
21. Pref + A = A	sub + A = A	subterraneous
22. Pref + A = A	super + A = A	superfine
23. Pref + A = A	trans + A = A	transalpine
24. Pref + A = A	un ₁ + A = A	uncommon
25. Pref + A = A	under + A = A	underclad

Ընթացային ազդանշաններ: Բայական ինքնակերտ նշանասերում:
Բայական ինքնակերտ նշանասերումը՝ նախաձանց-ազդանշաններով,

լեզվախոսքային հակադրությունների համակարգում Pref + V = V լեզվական համընդհանուր կաղապարի փոխանցումն է տվյալ ածանցով իրացվելիք հոգեկան շերտին և վերջինիս՝ բայական հիմքով համակցմամբ խոսքային համապատասխան դրսևորումը: Բայակերտ առկայացուցիչներ են հետևյալ նախածանցները՝ a₂-, be-, circum-, co-, contra-, counter-, de-, dis-, en-, fore-, in₁-, inter-, mis-, out-, over-, pre-, re-, sub-, super-, sur-, trans-, un₂-, under-: Նշանասերման այս տեսակն արտացոլված է 10-րդ աղյուսակում:

Աղյուսակ 10

Pref + V = V լեզվական կաղապարը և նրա

հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. Pref + V = V	a ₂ +V= V	arise
2. Pref + V = V	be +V = V	beset
3. Pref + V = V	circum+V= V	circumvent
4. Pref + V = V	co +V = V	cooperate
5. Pref + V = V	contra +V = V	contracept
6. Pref + V = V	counter +V = V	counteract
7. Pref + V = V	de +V=V	declutter
8. Pref + V = V	dis + V =V	disjoin
9. Pref + V = V	en + V =V	enclose
10. Pref + V = V	fore +V = V	foresee
11. Pref + V = V	in ₁ +V = V	incorporate
12. Pref + V = V	inter + V =V	interblend
13. Pref + V = V	mis +V = V	misinform
14. Pref + V = V	out +V = V	outpour
15. Pref + V = V	over + V= V	overreact
16. Pref + V = V	pre + V = V	pre-establish
17. Pref + V = V	re +V = V	redo

18. Pref + V = V	sub +V = V	sublet
19. Pref + V = V	super + V = V	superimpose
20. Pref + V = V	sur +V = V	surmount
21. Pref + V = V	trans +V = V	transplant
22. Pref + V = V	un ₂ + V = V	unarm
23. Pref + V = V	under + V = V	underline

I գլխի ամփոփում

Այսպիսով՝ նշանային բաղադրությունները նշանային երկպլան կազմավորումներն են՝ ածանցումներից ու բառաձևերից սկսած, վերաստյալով (տեքստով) ավարտած: Այս բաղադրյալ նշանների ընդհանրականությունը, ի թիվս այլոց, բացահայտվում է նաև համասեռության սկզբունքով: Տարամակարդակ բաղադրյալ նշանները ենթակա են նույնաբնույթ գործողությունների՝ իրենց իսկ ներքին բնույթով պայմանավորված: Այսպես կոչված ստուգողական գործողություններն են արժույթային ձգողականության սահմանների որոշումը և այդ սահմաններում տեղակայված միավորների համակցային օրինաչափությունների պարզորոշումը:

Ժամանակակից անգլերենի նշանային բաղադրությունների բացահայտման ուղիներից մեկը լեզվական նշանների կարգային իմաստների՝ ըստ հնարավորին սպառիչ բնութագրության հասնելն էր, որն ատենախոսության այս գիտում իրականացվեց աստիճանաբար, նախ՝ վերացարկված հասկացական դասերի (առարկայնություն, հատկանշայնություն, ընթացայնություն և մակադրահատկանշայնություն) առանձնացմամբ, ապա՝ նախորդներին հարաբերակցվող բուն հասկացական կարգերի (առարկա, հատկանիշ, ընթացք (գործողություն/եղելություն), մակադրահատկանիշ) տարանջատմամբ, որին հաջորդեցին տրամաբանական կարգերի մասնավորումները՝ ըստ բուն, ենթադրվող և փոխակերպա-փոխանցումային շերտավորումների: Դրանք էլ բաշխելով ժամանակակից անգլերենի խոսքի մասերի վրա՝ պարզեցինք, որ այդ խոսքի

մասերի փոխակերպման ու փոխանցման 16 դեպք է հնարավոր: Անգլերենում դրանցից 4-ը՝ ինքնակերտ, 12-ն այլակերտ դրսևորում ունեն: Կարգային իմաստները նախածանցային և վերջածանցային ինքնակերտ և այլակերտ նշանասերման բևեռներով քննելով՝ տվեցինք դրանցից յուրաքանչյուրի գոյամակարդակային պատկերը՝ ըստ լեզու/խոսք հարաբերակցության և դրանց փոխներթափանցումն ապահովող հոգեբանական շերտի պայմանավորվածության:

ԳԼՈՒԽ II

ԱԾԱՆՑԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(բազմահատկանիշ դասակարգում)

Իմաստաբանական վերլուծության դժվարությունները: Մինչև այժմ բերված կադապարները և նրանց իրացումները արդի անգլերենի նշանային բաղադրությունների մի մասի կառուցվածքային արտահայտության պատկերն էին ներկայացնում, մինչդեռ նշանը, ինչպես գիտենք, այդպիսին է հենց նրանով, որ ներհյուսումն է արտահայտության և բովանդակության: Ուստի ուսումնասիրության այս հատվածում քննության առարկա կդարձնենք նշանակերտի (տվյալ դեպքում՝ ածանցային նշանակերտի) բովանդակային կողմը, որի թելադրանքով է ձևավորվում համապատասխան նշանային բաղադրությունը:

Վերջին տասնամյակներում լեզվաբանության մեջ զգալի տեղ է տրվում իմաստաբանական ուսումնասիրություններին: Չնայած ուսումնասիրությունների առատությանը՝ այնուամենայնիվ, կարելի է ասել, որ, ի տարբերություն նշանի արտահայտության կողմի, որը մանրակրկիտ վերլուծության է ենթարկվում՝ անկախ իմաստից, բովանդակային կամ իմաստային կողմը նույն հեշտությամբ դիտարկման չի ենթարկվում՝ անկախ տվյալ նշանի հնչյունական կամ կառուցվածքային արտահայտությունից: Եվ սա բնական է, որովհետև լեզվական նշանի հնչյունական կազմն ու կառուցվածքը թանձրացապես ընկալելի և պատկերելի իրողություններ են, մինչդեռ իմաստը պայմանական վերացարկում է, որը բառային իմաստի դեպքում պատմականորեն է վերագրվում տվյալ բառին, որի իմաստափոխությունը հնարավոր է նրա ամեն մի գործածությամբ [Goldberg 2005, 215-230]: Նույնիսկ կանոնարկիչ բառարաններում բառարանային միավորների իմաստները և տարբեր նշանակությունները սահմանելիս, ինչպես նկատում է լեռ լեզվաբան Վիտոլդ Դորոշևսկին, լուրջ դժվարությունների առաջ է կանգնում մասնագետը [Дорошевский 1973, 249–267]: Հետևաբար, է՛լ ավելի դժվար է առավել տարողունակ

նշանների՝ շարահյուսական կառույցների, ասույթների ու վերասույթների զուտ բովանդակային դիտարկման լեզվաբանական ելակետն ու հանգակետը հայտնաբերելը: Ահա սա է պատճառը, որ մեր օրերում էլ, չնայած նկատելի ձեռքբերումներին, իմաստաբանությունը հետազոտության միասնական մեթոդների ընդունման առումով դեռևս որոնումների փուլում է [Мамудян 1985, 165–185]:

Ձեռնամուխ լինելով ածանցային նշանակերտների իմաստային վերլուծությանը՝ իհարկե, աչքի առաջ ունենք այդպիսի հետազոտության ոչ այնքան կատարյալ լինելու հանգամանքը, որը պայմանավորված է տվյալ նշանակերտին վերագրվելիք իմաստի կամ իմաստների անխուսափելի սուբյեկտիվությամբ [Bolinger 1977, 38-54]: Բայց սա չի նշանակում, թե պակասում է այս կարգի ուսումնասիրության գիտական կարևորությունը: Նախ՝ ինչ էլ լինի, պարտավոր ենք նշանային միավորների և բաղադրությունների երկկողմ՝ և՛ բովանդակային, և՛ արտահայտական դիտարկում կատարել: Ապա՝ անկախ հնարավոր սուբյեկտիվությունից՝ իմաստաբանական հետազոտության ընթացքում, որպես կանոն, այս կամ այն չափով առաջարկվում են դիտարկման համապատասխան եղանակներ, որոնք միշտ էլ այդ կարգի վերլուծությունների ավելի արդյունավետ մեթոդների հայտնաբերման հեռանկարն ունեն: Այս ուսումնասիրության մեջ փորձ է արվում առաջարկելու որոշ եղանակներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

Ածանցային նշանակերտների իմաստային դաշտերը: Վերջածանց-նշանակերտների իմաստաբանական քննության համար ևս, բացի բառարաններից, մեզ համար հիմնական աղբյուրներից մեկը Օ. Մեշկովի՝ բազմիցս հիշատակված ուսումնասիրությունն է, որի իմաստաբանական գնահատականները ոչ թե մեխանիկորեն ենք որդեգրել, այլ իմաստային առաջնությունների բնորոշման հարցում կատարել ենք համապատասխան սրբագրումներ [Мешков 1976, 47–88]: Իմաստային դաշտերի տիպաբանությանը հասնելու համար դիմում ենք, այսպես կոչված, **հաջորդական արտածումների եղանակին:** Նախ՝ կատարում ենք ածանցների իմաստային առանձնակի բացահայտումներ՝ ըստ վերը բերած կաղապարային բանաձևերի, ապա՝ համեմատում և խմբավորում ենք դրանք՝ ըստ նույնական հատկանիշների, այնուհետև՝ դուրս ենք բերում նախորդ գլխում ներկայացված 14 կաղապարներին համապատասխանող ածանցները՝ իրենց

իմաստներով, և ապա՝ բոլոր կաղապարների իմաստային դաշտերը կազմավորող վերջածանցները: Սա թույլ է տալիս վեր հանել այդ դաշտերի տիպաբանությունը՝ ըստ վերացարկված հասկացական դասերի:

1. **A + Suf = N** կաղապարի նշանակետների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, հետևյալ պատկերն է ներկայացնում.

- acy – վիճականիշ, որականիշ (intricacy, intimacy)
- age - վիճականիշ (shortage), նյութանիշ (roughage)
- an - անձնանիշ (politician)
- ard - նվաստացուցիչ անձնանիշ (dullard)
- ase - նյութանուն (invertase)
- dom - վիճականիշ, փաստանիշ (freedom, wisdom)
- en - նյութանիշ (bittern)
- er - անձնանիշ և տեղանիշ (westerner)
- ery - 1. որականիշ/վերացանիշ (bravery). 2. հավաքանիշ (finery)
- hood - վիճականիշ (likelihood)
- ia - վիճականիշ (inertia)
- ion - վերացանիշ, գոյանիշ (լինելություն) (precision)
- ism - դրուբանիշ, ուսմունքանիշ, ոճանիշ (realism, nominalism, vulgarism)
- ist - անձնանիշ (որևէ ուղղության ներկայացուցիչ) (naturalist)
- itude - վերացանիշ (promptitude)
- ity - վիճականիշ, որականիշ, պայմանանիշ (activity, humidity, complexity)
- ling - անձնանիշ, կենդանանիշ, բուսանիշ (softling, youngling)
- ment - շնորհանիշ (օժտվածություն նշող), հատկակրանիշ (merriment)
- ness - վիճականիշ, որականիշ (darkness)
- ster - անձնանիշ, փոքրանիշ (youngster)
- th - որականիշ (warmth)
- um - պարփականիշ (planetarium)
- ure - հատկակրանիշ (moisture)
- y - վերացանիշ, հատկակրանիշ (sweetie)

A + Suf = N կաղապարով հարացույց ձևավորող նշանակերտներն ըստ բերված իմաստային դաշտերի խմբավորելու դեպքում կունենանք հետևյալ պտկերը.

1) *Վիճականիշ* դաշտ են ձևավորում -acy, -age, -dom, -hood, -ia, -ity, -ness նշանակերտները, որոնցից *զուտ վիճականիշ* են -hood, -ia ձևույթները, իսկ մնացյալ նշանակերտները ներառվում են նաև այլ դաշտեր կամ, որ նույնն է, իրենցով ձևավորում են այլ դաշտեր ևս:

2) *Որականիշ* դաշտ են ձևավորում -acy, -ery, -ity, -ness, -th նշանակերտները. բոլորն էլ բազմիմաստ են:

3) *Անձնանիշ* դաշտ են կազմավորում -an, -ard, -er, -ist, -ling, -ster նշանակերտները, որոնցից *զուտ անձնանիշ* են միայն առաջին երկուսը, երկրորդը և երրորդը անձը բնութագրող հավելյալ հատկանիշ են արտահայտում:

4) *Նյութանուն* է ձևավորում միայն -ase ձևույթը. սա պայմանականորեն ենք նշանակերտ համարում, որովհետև ոչ թե հասկացություն կազմելուն է նպաստում, այլ պարզապես նյութի անվանմանը, այսինքն՝ այս ձևույթի մասնակցությամբ ոչ թե տերմին է ստեղծվում, այլ *անվանակարգություն* (nomenclature) [Է. Աղայան 1984, 327-330]: Սա է պատճառը, որ այս նշանակերտին իմաստային դաշտին բնորոշ անվանում չենք տալիս՝ *նիշ* բաղադրիչով:

5) *Ջուտ նյութանիշ* իմաստային դաշտ է ձևավորվում -en նշանակերտով:

6) *Վերացանիշ* իմաստային դաշտ են ձևավորում -ion, -itude, և -y նշանակերտները, որոնցից միայն երկրորդ ձևույթն է *զուտ վերացանիշ*, մյուս երկուսը զուգակցվում են այլ դաշտերի հետ:

7) *Հարկակրանիշ* իմաստային դաշտ են կազմավորում -ment, -ure և -y նշանակերտները, որոնցից դարձյալ միայն երկրորդ ձևույթն է *զուտ հարկակրանիշ*, մյուս երկուսը զուգակցվում են այլ դաշտերի հետ:

8) *Դրութանիշ*, *ուսմունքանիշ*, *ոճանիշ* իմաստային եռադաշտություն է կազմավորում -ism նշանակերտը, որի ձևավորած իմաստները ոչ մի հատում չունեն այլ դաշտերի հետ:

9) *Ջուտ պարփականիշ* իմաստային դաշտ է ձևավորվում -um նշանակերտով:

10) *Հավաքանիշ* դաշտ է ձևավորում -ery նշանակերտը, որ զուգակցվում է նաև այլ իմաստային դաշտի հետ:

11) Վիճականիչ նշանակերտներից -acy-ն և -ness-ը նաև որականիչ դաշտ են ձևավորում, -age-ն՝ նաև նյութանիչ, -dom-ը՝ նաև փաստանիչ, -ity-ն՝ նաև որականիչ և պայմանանիչ:

12) Կենդանանիչ և բուսանիչ իմաստային դաշտեր է ձևավորում -ling նշանակերտը, որ զուգակցվում է անձնանշությամբ:

2. **V + Suf = N** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, ունի հետևյալ պատկերը.

- acy - վիճականիչ, ընթացանիչ (conspiracy)
- ade - ընթացանիչ, վիճականիչ (blockade)
- age - գործանիչ, փաստանիչ (usage, wastage, breakage)
- al - ընթացանիչ (arrival)
- ance - ընթացանիչ (avoidance)
- ant - գործորդանիչ, գործիրանիչ (assistant, inhalant)
- ard - նվաստա(ցուցա)նիչ, անձնանիչ (stinkard)
- ee - անձնուղղորդանիչ (trainee)
- er - գործորդանիչ, անձնանիչ, իրանիչ, կենդանանիչ, տեղանիչ (worker, baker, silencer, pointer, sweater, counter)
- ess - անձնիգանիչ (governess)
- ice - ընթացանիչ (service)
- ine - ընթացանիչ (rapine)
- ing - ընթացանիչ, վիճականիչ (reading, building)
- ion - ընթացանիչ, եղելանիչ, վիճականիչ, որականիչ, վերացանիչ (alteration, organization, occupation, starvation)
- is - ընթացանիչ (analysis)
- ling - կենդանանիչ՝ ձագանիչ (ըստ ձագի ձայնարկման) (gruntling), անձնանիչ՝ բացասական երանգով (scatterling, starveling)
- ment - ընթացանիչ (management)
- oon - տեղիրանիչ (նախատեսված գործողության) (spittoon)
- ster - անձնանիչ, գործորդանիչ (throwster)

-th - վերացանիշ, ընթացանիշ, վիճականիշ, որականիշ (tilth (// tillage), spilth (// spillage))

-ure - ընթացանիշ, վիճականիշ (pressure)

-y - վերացանիշ, ընթացանիշ (discovery)

Խմբավորենք $V + Suf = N$ կաղապարով հարացույց ձևավորող նշանակերտները՝ ըստ բերված իմաստային դաշտերի:

1) *Ընթացանիշ* դաշտ են ձևավորում -acy, -ade, -al, -ance, -ice, -ine, -ing, -ion, -is, -ment, -th, -ure, -y նշանակերտները: Սրանցից *զուտ ընթացանիշ են* -al, -ance, -ice, -ine, -is, -ment ձևույթները, մյուսներն այս կամ այն չափով աղերսվում են նաև այլ դաշտերի:

2) *Վիճականիշ* դաշտ են ձևավորում -acy, -ade, -ing, -ion, -th, -ure նշանակերտները: Այս ձևույթներից ոչ մեկն էլ՝ որպես վիճականիշ, անկախ չէ, այլ զուգակցված է այս կամ այն իմաստային խմբին:

3) *Անձնանիշ* դաշտ են կազմավորում -ard, -ee, -er, -ess, -ling, -ster նշանակերտները: Սրանցից *զուտ անձնանիշ* պետք է համարել *անձնուղղորդանիշ* -ee և *անձնիզանիշ* -ess ձևույթները:

4) *Գործորդանիշ* դաշտ են ձևավորում -ant, -er, -ster նշանակերտները. երեքն էլ զուգակցված են այլ իմաստային դաշտերի հետ, այսինքն՝ չունեն գործառական մենիմաստություն:

5) *Որականիշ* դաշտ են ձևավորում -ion և -th նշանակերտները. այս դաշտը նշված ձևույթների իմաստային դաշտերից յուրաքանչյուրի *ենթադաշտերից* մեկն է միայն:

6) *Տեղանիշ* դաշտ են կազմավորում -er և -oon նշանակերտները: Սրանցից *մենանիշ* կամ *զուտ տեղանիշ* կարելի է համարել երկրորդը, որը, սակայն, ներանցված է *իրանշուօթյանը*. Իրը՝ որպես գոյական, նաև որպես տեղ է ծառայում, ասել է՝ *սերտաճած են* այս ձևույթի մեջ *իրանշուօթյունն ու տեղանշուօթյունը*:

7) *Կենդանանիշ* դաշտ են ձևավորում -er և -ling նշանակերտները. սրանցից ոչ մեկն էլ *մենիմաստ* չէ, այլ աղերսված է այլ իմաստային դաշտերի:

8) *Իրանիշ* իմաստային ենթադաշտեր են ձևավորում -ant, -er և -oon նշանակերտները: Տվյալ դեպքում, ենթադաշտ, հասկացությունը հուշում է, որ խնդրո

առարկա կաղապարում դիտարկվող այս երեք ձևույթները՝ որպես նշանակերտներ, մենիմաստ չեն:

9) *Վերացանիշ* իմաստային ենթադաշտ են ձևավորում -ion, -th և -y նշանակերտները, որոնց գործառական բնույթը հուշում է, որ սրանք ևս զուգակցված են այլ իմաստների հետ:

10) *Գործանիշ* և *փաստանիշ* իմաստային զուգադաշտություն է կազմավորում -age նշանակերտը, որի ձևավորած իմաստները ոչ մի հատում չունեն այլ դաշտերի հետ:

11) *Եղելանիշ* իմաստային ենթադաշտ է ձևավորում միայն -ion նշանակերտը:

12) $V + Suf = N$ կաղապարի հիմքի խոսքամասային բնույթով պայմանավորված՝ բերված նշանակերտների կեսից ավելին՝ 13 ձևույթ, ընթացանիշ իմաստային դաշտ կամ ենթադաշտ ունի:

3. $D + Suf = N$ կաղապարի նշանակերտը, ըստ իմաստային ընդգրկման, մեկն է՝

-ity _ վերացանիշ/եղելանիշ (betweenity):

4. $N + Suf = N$ կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-(a)cy - տիտղոսանիշ/վիճականիշ (captaincy)

-ade - 1. ընթացանիշ (cannonade). 2. արդյունանիշ (lemonade)

-age - 1. վիճականիշ (orphanage). 2. հավաքանիշ (luggage). 3.

անձնանիշ/իրանիշ (personage)

-an - անձնանիշ/մասնագիտանիշ (mathematician)

-ana - վերացանիշ/հավաքանիշ (Shakesperiana)

-ance - վերացանիշ (capacitance)

-ant - գործորդանիշ (անձնանիշ (libellant)/իրանիշ (formant))

-(a)ry - 1. մասնագիտանիշ (forestry). 2. դասանիշ (jewellery)

-ase - իրանիշ՝ տարրանիշ (amylase)

-aster - անձնանիշ/նվաստանիշ (poetaster)

-ate - 1. պաշտոնանիշ, տիտղոսանիշ (cardinalate, doctorate). 2. հավաքանիշ (electorate)

- cide - ներգործանիշ («սպանանիշ»)/անձնանիշ (fratricide)
- dom - վերացանիշ՝ 1. վիճականիշ (boredom). 2. տիտղոսանիշ (earldom). 3. հավաքանիշ/անձնանիշ (kingdom, teacherdom)
- drome - տեղանիշ (airdrome)
- ee - նվազա(ցուցա)նիշ (bootee)
- een - իրանիշ՝ գործվածքանիշ (velveteen)
- eme - հասկացանիշ (տերմինակերտ) (morpheme)
- enne - սեռանիշ (անձնիգանիշ) (comedienne)
- er - անձնանիշ/զբաղումնանիշ, անձնանիշ/(բնակա)տեղանիշ (gardener, Londoner)
- ese - 1. անձնանիշ/ազգանիշ (Japanese). 2. ոճանիշ (telegraphese)
- ess - անձնանիշ (poetess), ազգանիշ (Negress), իգանիշ (ըստ հասարակական դիրքի) (baroness), կենդանանիշ (նույնպես իգական սեռի) (lioness, tigress)
- ette₁ - իգանձնանիշ (farmerette)
- ette₂ - նվազանիշ (kitchenette), իմաստակորույս փոքրանիշ (cigarette), արհեստական ապրանքանիշ (leaterette)
- ful - ներլիանիշ / ներհավաքանիշ (basketful)
- hood - վերացանիշ՝ վիճականիշ/հավաքանիշ/որականիշ (motherhood, manhood)
- i - պետութենանիշ (Pakistani)
- ice - որականիշ, զգայանիշ, ընթացանիշ (cowardice)
- ics - 1. գիտանվանանիշ/ուսմունքանիշ (mathematics). 2. մարզանիշ (athletics):
- ide - տարրանվանանիշ (ozonide)
- i - ընթացանիշ, ախտորոշանիշ (appendicitis)
- ism - վերացանիշ՝ 1. ուսմունքանիշ (Marxizm), 2. արվեստի ուղղություն նշող (symbolism). 3. պատմափուլանիշ (capitalism). 4. որականիշ/վիճականիշ (heroism). 5. որականիշ (բացասական երանգով) (hooliganism)
- ist - անձնանիշ/զբաղումնանիշ (careerist)
- ity - վերացանիշ՝ բացասական երանգով (rascality)
- kin - նվազանիշ (lambkin)

- let - նվազանիշ (cloudlet), նվաստանիշ/իզանձնանիշ (authorlet)
- ling - հուզանվազանիշ (երբեմն՝ նվաստանիշ) (manling)
- ment - հիմնանիշ/ստորանիշ (basement)
- ness - վերացանիշ, հավաքանիշ (onemess)
- ock - նվազանիշ (hillock)
- oid - նմանանիշ (meteoroid)
- oon - շեղանիշ (cartoon)
- ship - վերացանիշ՝ 1. վիճականիշ (friendship). 2. պաշտոնանիշ (ambassdorship). 3. անձնահավաքանիշ (craftsmanship)
- ster - գործորդանիշ/անձնանիշ/բնութագրանիշ (հաճախ՝ բացասանիշ) (rhymester)
- ule - նվազանիշ (animalcule)
- um - հանգուցանիշ (ligamentum)
- ure - վերացանիշ՝ 1. ոլորտանիշ (literature). 2. հավաքանիշ/տեղանիշ (prefecture)
- y - նվազափաղաքշանիշ/անձնանիշ (daddy), իրանիշ (movies (< moving pictures))

Խմբավորենք $N + Suf = N$ կաղապարով հարացույց ձևավորող նշանակերտները՝ ըստ բերված իմաստային դաշտերի:

1) *Վիճականիշ* դաշտ են ձևավորում -acy, -age, -hood, -ism, -ship նշանակերտները, որոնցից ոչ մեկն էլ *մենիմաստ չէ*, հետևաբար բերված ձևույթներով ենթադաշտեր են ձևավորվում:

2) *Ընթացանիշ* դաշտ են ձևավորում -ade, -ice և -is նշանակերտները, որոնք նույնպես *մենիմաստ չեն*:

3) *Անձնանիշ* դաշտ են ձևավորում -an, -ant, -aster, -cide, -dom, -enne, -er, -ese, -ess, -ettei, -ist, -let, -ship, -ster, -y նշանակերտները, որոնցից -an, -aster, -enne ձևույթները *հավելյալ սերտաճած իմաստներ* ունեն, իսկ մնացածները բազմիմաստ են և հատում են այլ իմաստային դաշտեր:

4) *Իրանիշ* դաշտ են ձևավորում -age, -ant, -ase, -een, -ine և -y նշանակերտները, բոլորն էլ՝ այս կամ այն չափով զուգակցված այլ իմաստադաշտերի հետ:

5) *Սեռանիշ* իմաստային դաշտ են ձևավորում -enne, -ess, -ette₁ նշանակերտները: Այս երեք ձևոյթներն էլ միաբևեռ սեռանիշ են՝ *իգանիշ*: Սա նշանակում է, որ սեռանիշ ձևոյթները *նշույթակիր* են միայն իգական սեռը նշելիս. արական սեռն *աննշույթ* է: Բերված ձևոյթներից *զույր անձնիգանիշ* են առաջինը և երրորդը, իսկ -ess նշանակերտն *ընդհանրական իգանիշ* է (հավասարապես վերաբերում է թե՛ անձնանիշ, թե՛ կենդանանիշ գոյականներին): -Ess նշանակերտը բազմադաշտ է, իսկ -enne և -ette₁ նշանակերտները՝ զուգադաշտ, ըստ որում, վերջին երկուսի համար էլ մյուս դաշտն անձնանշությունն է:

6) *Հավաքանիշ* իմաստային դաշտ են կազմավորում -age, -ana, -ate, -dom, -ful, -hood, -ness, -ship, -ure նշանակերտները: Այս բոլոր ձևոյթներն աղերսված են նաև այլ իմաստադաշտերի:

7) *Վերացանիշ* դաշտ են կազմավորում -ana, -dom, -hood, -ism, -ity, -ness, -ship, -ure նշանակերտները: Այս նշանակերտները կամ բազմադաշտ են, կամ իրենց վերացականության դաշտը երանգավորում են այս կամ այն նրբիմաստով:

8) *Որականիշ* դաշտ են ձևավորում -hood, -ice, -ism նշանակերտները: Սրանցից յուրաքանչյուրով կազմավորված որականիշ դաշտը ենթադաշտ է տարիմաստ բազմադաշտության տիրույթներում:

9) *Տիրոջուսանիշ* իմաստային դաշտ են ձևավորում -acy, -ate, -dom նշանակերտները: Այս դաշտը ևս նշված ձևոյթներով կազմավորված իմաստային բազմադաշտության ենթադաշտերից է:

10) *Նվազանիշ* դաշտ են ձևավորում -ee, -ette₂, -kin, -let, -ling, -ock, -ule նշանակերտները, որոնցից *զույր նվազանիշ* են -kin, -ock և -ule ձևոյթները, մնացածը ենթադաշտ են տվյալ ձևոյթով կազմավորված դաշտերի տիրույթում:

11) *Նվաստանիշ* դաշտ են ձևավորում -aster և -let նշանակերտները, որոնցից երկրորդը տարիմաստություն ունի, իսկ առաջինը սերտաճած է անձնանշությանը:

12) *Ազգանիշ* դաշտ են ձևավորում -ese, -ess նշանակերտները, որոնք, ինչպես երևում է վերևի օրինակներից, բազմիմաստ են:

13) *Ուսմունքանիշ* դաշտ են կազմավորում -ice, -ism նշանակերտները, որոնք նույնպես բազմիմաստություն ունեն:

14) *Հիմնանիշ/ստորանիշ* դաշտ է ձևավորում -ment նշանակերտը, որը, թեև զույգ նրբիմաստության համատեղում է, հե'նց այդ սերտաճածությամբ պայմանավորված, կարող ենք մենիմաստ համարել:

15) *Ջուլտ հանգուցանիշ* իմաստային դաշտ է ձևավորում -um նշանակերտը:

16) Մենիմաստ ձևայիններից *զուլտ նմանանիշ* դաշտ է ձևավորում -oid նշանակերտը, *զուլտ շեղանիշ* դաշտ՝ -oo նշանակերտը:

17) Բացի նշվածներից՝ այլ դաշտերի տիրույթներում առկա են իմաստային ենթադաշտերի հետևյալ մասնավոր տիպերը՝ *գործորդանիշ*' -ant, *արդյունանիշ*' -ade, *մասնագիտանիշ*' -an, *մարզանիշ*' -ics, *պաշտոնանիշ*' -ate, -ship, *ներգործանիշ*' -cide, *տեղանիշ*' -drome, *հասկացանիշ*' -eme, *ներլիանիշ*' -ful, *պեպոթեանանիշ*' -i, *տարրանիշ* և *տարրանվանիշ*' -ase, -ide, *դասանիշ*' -(a)ry, *գործվածքանիշ* և *ապրանքանիշ*' -een, -ette, *զբաղումնանիշ*' -er, -ist, *զգայանիշ*' -ice, *ախտորոշանիշ*' -is, *պատմափոլանիշ*' -ism, *հուլանիշ*' -ling, *բնութագրանիշ*' -ster, *ոլորտանիշ*' -ure, *փաղաքանիշ*' -y:

5. **N + Suf = A** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-able - բնութագրանիշ (comfortable)

-aceous - վերաբերանիշ/դասանիշ (liliaceous)

-al - հարաբերանիշ (natural)

-(i)an - վերաբերանիշ (crocodilian)

-ar - հարաբերանիշ (capsular)

-ary հարաբերանիշ (elementary)

-ate - 1. վերաբերանիշ (roseate). 2. ներբաղկացանիշ (proportionate)

-ed - բաղկացանիշ (winged)

-esque - բնութագրանիշ/նմանանիշ (Rembrandesque)

-fold - բազմապատկանիշ (sixfold)

-ful - հատկակրանիշ (beautiful)

-ic - 1. հարաբերանիշ՝ բաղկացանիշ/կառուցվածքանիշ (atomic). 2. վերաբերանիշ (volcanic). 3. նմանանիշ (Byronic)

-ile - նմանանիշ (infantile)

-ine - հատկակրանիշ (adamantine)

-ish վերաբերանիշ (girlish)

-ive - վերաբերանիշ (massive)

-less - վիճականիշ/զրկանիշ (fatherless)

-ly - նմանանիշ (friendly)

-ous - հատկակրանիշ (dangerous)

-some - վիճականիշ (laborsome)

-y - հարաբերանիշ (icy)

Խմբավորենք $N + Suf = A$ կաղապարով հարացույց ձևավորող նշանակերտները՝ ըստ բերված իմաստային դաշտերի:

1) *Բնութագրանիշ* դաշտ են ձևավորում -able, -esque նշանակերտները, որոնցից առաջինը մենիմաստ է:

2) Այս կաղապարային խմբի նշանակերտներն ամենից շատ *վերաբերանիշ* դաշտ են ձևավորում. դրանք են՝ -aceous, -(i)an, -ate, -ic, -ish, -ive, որոնցից մենիմաստ են կամ ինքնաբավ դաշտ են ձևավորում -(i)an, -ish, -ive ձևույթները:

3) Դաշտի իմաստային ընդգրկունությամբ հաջորդ մեծ խումբն են ձևավորում *հարաբերանիշ* նշանակերտները, որոնք են՝ -al, -ar, -ary, -ic, -y: Բացի -ic ձևույթից՝ այստեղ բերված մնացյալ նշանակերտները մենիմաստ են:

4) *Հարկակրանիշ* դաշտ են ձևավորում -ful, -ine, -ous նշանակերտները, բոլորն էլ՝ մենիմաստ:

5) *Բաղկացանիշ* իմաստային դաշտ են ձևավորում -ate, -ed, -ic նշանակերտները, որոնցից *զուտ բաղկացանիշ* է միայն -ed ձևույթը:

6) *Նմանանիշ* դաշտ են ձևավորում -esque, -ic, -ile, -ly նշանակերտները, որոնցից *զուտ նմանանիշ* են վերջին երկուսը:

7) *Վիճականիշ* իմաստային դաշտ են կազմավորում -less, -some նշանակերտները, որոնցից առաջինը սերտաճած է *զրկանիշ* իմաստին, իսկ երկրորդը *զուտ վիճականիշ* է:

8) Կան նաև *մասնավոր* իմաստային դաշտեր, որոնցից *դասանիշը* սերտաճած է *վերաբերանիշին*՝ -aceous նշանակերտով, իսկ *կառուցվածքանիշը* հարաբերանիշի ենթադաշտերից է՝ -ic նշանակերտով:

6. **V + Suf = A** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-able - 1. փոխարկանիշ (անցողական բայահիմքերից) (eatable). 2. բնութագրանիշ (suitable)

-ant - հատկակրանիշ (radiant)

-ary - հակադրանիշ (contrary)

-ed - որականիշ (professed)

-ful - հատկակրանիշ՝ հակումնանիշ (forgetful)

-ic - հատկակրանիշ՝ հակումնանիշ (pacific)

-ile հատկակրանիշ (retractile)

-ive - հարաբերանիշ/ներգործանիշ (active, impressive)

-less - եղանականիշ՝ ժխտանիշ (cureless)

-ly - հատկակրանիշ (seemly)

-ory - հարաբերանիշ (contributory)

-some - հատկակրանիշ՝ միտումնանիշ (troublesome)

Խմբավորենք $V + Suf = A$ կաղապարով հարացույց ձևավորող նշանակերտները՝ ըստ բերված իմաստային դաշտերի:

Ա) Հատկակրանիշ դաշտ են ձևավորում -ant, -ful, -ic, -ile, -ly, -some նշանակերտները, որոնցից *զուտ հատկակրանիշ* են -ant, -ile, -ly ձևույթները: Այս բոլոր նշանակերտները մենիմաստ են. պարզապես սրանցից -ful, -ic ձևույթների հատկակրանշության դաշտը նույնացված է *հակումնանշության* մասնավոր դաշտին, իսկ -some ձևույթի նույն դաշտը՝ *միտումնանշության* մասնավոր դաշտին:

Բ) Հարաբերանիշ դաշտ են ձևավորում -ary, -ive նշանակերտները: *Ձուտ հարաբերանիշ* է -ary ձևույթը, իսկ -ive ձևույթի այս իմաստին սերտաճած է *ներգործանշությունը*:

Գ) *Ձուտ որականիշ* դաշտ է ձևավորում -ed նշանակերտը:

Դ) *Եղանականիշ* դաշտ է ձևավորում *-less* նշանակերտը, որը նույնացված է *ժխտանիշ* մասնավոր դաշտին:

Ե) *Փոխարկանիշ* դաշտ է ձևավորում *-able* նշանակերտը. նշված նշանակերտը հիշյալ իմաստն է ձևավորում բաղադրյալ բառերի այն սերող հիմքերից, որոնք նույնանում են անցողական բայահիմքերի հետ: Փոխարկային դաշտը ենթադաշտ է *-able* նշանակերտով գոյացած իմաստային դաշտի տիրույթում:

Զ) *Բնութագրանիշ* դաշտ է ձևավորվում այս նույն *-able* նշանակերտով: Հասկանալիորեն սա ևս ենթադաշտ է իրենով ստեղծված իմաստային դաշտի տիրույթում:

7. **A + Suf = A** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-able - իրավանիշ/անձնանիշ (*commonable*)

-fold - բազմապատկանիշ (*manyfold*)

-ful - լիանիշ (*darkful*)

-ish - մեղմանիշ (մեղմորականիշ) (*bluish*)

-ly - հատկակրանիշ/հավելանիշ (*sicly*)

-some - որականիշ (*darksome*)

-y - մեղմանիշ (մեղմորականիշ) (*greeny*)

Դիտարկենք **A + Suf = A** կաղապարով հարացույց ձևավորող նշանակերտները՝ ըստ բերված իմաստային դաշտերի:

Նկատենք, որ միայն *մեղմանիշ* (մեղմորականիշ) իմաստային դաշտն է, որ երկու նշանակերտով է ներկայացված՝ *-ish* և *-y*. հաշվի առնելով, սակայն, որականչության առումով *-some* նշանակերտի հետ ունեցած դրանց ընդհանրությունը, կարող ենք նույնացնել երեք ձևույթների կազմավորած իմաստային դաշտերը՝ որականիշ, ընդհանուր բնութագրությամբ, ըստ որում՝ *զույր որականիշ* գնահատմամբ:

իրավանիշ և *անձնանիշ* դաշտերը, ձևավորված *-able* նշանակերտով, սերտաճած են դրսևորվում:

Նույնպիսի սերտաճածություն կա *հատկակրանիշ* և *հավելանիշ* դաշտերի պարագայում՝ ձևավորված *-ly* նշանակերտով:

8. **N + Suf = V** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-ate - 1. բայասեռանիշ՝ ներգործանիշ (vaccinate). 2. փոխարկանիշ (granulate)

-en - բայասեռանիշ՝ ներգործանիշ (threaten)

-ify - բայասեռանիշ՝ ներգործանիշ (beautify)

-ize - 1. կիրառանիշ (jargonize). 2. զետեղանիշ/իրանիշ (journalize)

Դիտարկենք $N + Suf = V$ կաղապարին վերաբերող հարացույցի նշանակերտները

Պայմանավորված այս խմբի նշանակերտների բայակերտությամբ՝ հենց նշանակերտները գերազանցապես ընթացային իմաստ ունեն, և նրանցից միայն մեկը՝ պարագայական իմաստ:

Բայասեռանիշ, մասնավորապես՝ *ներգործանիշ* դաշտ են կազմավորում -ate, -en, -ify նշանակերտները, որոնցից -en, -ify ձևույթները *զուտ ներգործանիշ* են, իսկ -ate ձևույթը՝ նաև *փոխարկանիշ*:

Կիրառանիշ և զետեղանիշ/իրանիշ ենթադաշտեր է ձևավորում -ize նշանակերտը:

9. **A + Suf = V** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-ate - բայասեռանիշ՝ ներգործանիշ (pacificate)

-en - բայասեռանիշ՝ վիճակադարձ (չեզոքանիշ // ներգործանիշ) (darken, deepen)

-ify - բայասեռանիշ՝ ներգործակրավորանիշ (intensify)

-ize - բայասեռանիշ՝ վիճակադարձ-ներգործանիշ (urbanize)

Դիտարկենք $A + Suf = V$ կաղապարին վերաբերող հարացույցի նշանակերտները:

Առաջին բանը, որ գրավում է մեր ուշադրությունը, այս և նախորդ կաղապարի նշանակերտների նույնականությունն է: Նկատելի ընդհանրություն ունեն նաև սրանցով ձևավորված իմաստային դաշտերը նախորդ կաղապարի նշանակերտների դաշտերի հետ: Ընդհանրությունն այն է, որ առաջին երեք նշանակերտները երկու հարացույցում էլ բայասեռանիշ են: Տարբերությունն այն է, որ՝ ա) երկրորդ

հարացույցում բայասեռանիշ է նաև վերջին նշանակերտը. բ) նախորդ հարացույցում առաջին նշանակերտն իմաստային զուգադաշտություն էր ձևավորում, իսկ այստեղ մենադաշտ է. գ) նախորդ հարացույցում բոլոր բայասեռանիշ նշանակերտները ներգործանիշ էին, մինչդեռ այստեղ *զուրկ ներգործանիշ* է միայն առաջին՝ -ate նշանակերտը, -en նշանակերտը նաև չեզոքանիշ է, -ify-ին համատեղում է ներգործանշությունն ու կրավորանշությունը, իսկ վերջին՝ -ize նշանակերտը, որ նախորդ հարացույցում զուրկ էր բայասեռանշությունից, այս հարացույցում հենց ներգործանիշ դաշտ է ձևավորում. դ) նախորդ հարացույցի իմաստային դաշտերից փոխարկանշությունը, կիրառանշությունը և զետեղանիշ-իրանշությունը բացակայում են այս հարացույցում. ե) այս հարացույցում երկրորդ և չորրորդ բայասեռանիշ նշանակերտները վիճակադարձության հավելյալ իմաստ ունեն, որը ևս բային բնորոշ քերականական կարգ է:

10. **V + Suf = V** կաղապարի նշանակերտը, ըստ իմաստային ընդգրկման, դրսևորվում է հետևյալ կերպ. -fy - բայասեռանիշ՝ անդրադարձանիշ (argufy):

11. **N + Suf = D** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-wise - հիմունքանիշ (clockwise, prestigewise)

-ward - տեղանիշ (seaward)

-ways - վիճականիշ (endways)

Ինչպես երևում է հարացույցից, բոլոր նշանակերտներն այստեղ *մենիմաստ* են:

12. **A + Suf = D** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-ly - որականիշ (beautifully)

-wise - ձևանիշ (longwise)

13. **V + Suf = D** կաղապարի նշանակերտը, ըստ իմաստային ընդգրկման, դրսևորվում է հետևյալ կերպ. -ly - վիճականիշ (fixedly):

14. **D + Suf = D** կաղապարի նշանակերտների հարացույցը, ըստ իմաստային ընդգրկումների, բացահայտում է հետևյալ պատկերը.

-ward - տեղանիշ (downward)

-wards - տեղանիշ (onwards):

Այս նշանակերտները նույնպես մենհիմաստություն ունեն, ընդ որում՝ ունեն իմաստային համադաշտություն:

11-14 կաղապարների նշանակերտները, պայմանավորված վերջիններիս մակբայասերման գործառությամբ, անխտիր պարագայական դաշտ են կազմավորում (հմմտ. «հիմունքանիշ», «տեղանիշ», «վիճականիշ», «որականիշ», «ձևանիշ» անվանումները):

Այժմ հաջորդաբար պարզենք նշանակերտների և նրանց ձևավորած իմաստային դաշտերի միջհարացուցային հարաբերությունները:

1. Նշանակերտներով պայմանավորված միջհարացուցային հարաբերություններ: Մինչև հիմա նշանակերտների և նրանցով ձևավորված իմաստային դաշտերի դիտարկում էինք իրականացնում: Այժմ փորձենք պարզել միջհարացուցային կամ, այսպես ասած, «միջդաշտային» հարաբերությունները: Ուսումնասիրության այս հատվածում մեկնակետ կլինեն նշանակերտները: Նշանակերտներով ձևավորված իմաստները տրվում են փակագծերում՝ ըստ վերոբերյալ 14 կաղապարների թվահամարների:

-able

Ձուտ ածականական նշանակերտ է, որով ածականներ են կազմվում գոյականական, բայական և ածականական հիմքերից: Պատկերը հետևյալն է.

(5) N + Suf = A - բնութագրանիշ:

(6) V + Suf = A - փոխարկանիշ, բնութագրանիշ:

(7) A + Suf = A - իրավանիշ, անձնանիշ:

Իմաստային հատում ունեն 5-րդ և 6-րդ կաղապարները՝ բնութագրանշության դաշտով:

-aceous

Այս նշանակերտն ածականներ է սերում գոյականական հիմքից: Ահա պատկերը.

(5) N + Suf = A - վերաբերանիշ, դասանիշ:

-acy

Այս նշանակերտով գոյականներ են ձևավորվում ածականական, բայական և գոյականական հիմքերից:

(1) $A + Suf = N$ - վիճականիշ, որականիշ:

(2) $V + Suf = N$ - ընթացանիշ, վիճականիշ:

(4) $N + Suf = N$ - վիճականիշ, տիտղոսանիշ:

Դիտարկվող կաղապարներում միջհարացուցային ընդհանրություն կա՝ պայմանավորված վիճականչության դաշտով: Որականչությունը, ընթացանչությունն ու տիտղոսանչությունը ինքնաբավ դաշտեր են՝ յուրաքանչյուր կաղապարի համար առանձնաբար:

-ade

Այս նշանակերտով գոյականներ են ձևավորվում բայական և գոյականական հիմքերից:

(2) $V + Suf = N$ - ընթացանիշ, վիճականիշ:

(4) $N + Suf = N$ - ընթացանիշ, արդյունանիշ:

Միջհարացուցային ընդհանրությունը պայմանավորված է ընթացանչության դաշտով:

-age

Բերված նշանակերտով գոյականներ են ձևավորվում ածականական, բայական և գոյականական հիմքերից:

(1) $A + Suf = N$ - վիճականիշ, նյութանիշ:

(2) $V + Suf = N$ - գործանիշ, փաստանիշ:

(4) $N + Suf = N$ - վիճականիշ, իրանիշ, փաստանիշ:

Միջհարացուցային ընդհանրություն ունեն 1-ին և 4-րդ կաղապարները՝ վիճականչության դաշտով:

-a₁

Դիտարկվող նշանակերտի 2-րդ համարի կաղապարով գոյականներ են ձևավորվում ընթացանչության դաշտով, և ածականներ՝ հարաբերանչության դաշտով: Ինչպես տեսնում ենք, միջհարացուցային աղերսներ չկան:

(2) $V + Suf = N$ - ընթացանիշ:

(5) $N + Suf = A$ - հարաբերանիշ:

-an

Այս նշանակերտի 1-ին և 4-րդ համարների կաղապարներով գոյականներ են ձևավորվում, իսկ 5-րդ համարի կաղապարով՝ ածականներ:

(1) $A + \text{Suf} = N$ - անձնանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, մասնագիտանիշ:

(5) $N + \text{Suf} = A$ - վերաբերանիշ:

Ինչպես տեսնում ենք, 1-ին և 4-րդ կաղապարներում առկա է միջհարացուցային ընդհանրություն՝ բեկված անձնանշության դաշտով:

-ana

Բերված նշանակերտը գոյականներ է սերում գոյականական հիմքից:

(4) $N + \text{Suf} = N$ - վերացանիշ, հավաքանիշ:

-ance

Այս նշանակերտը, ստորև բերված կաղապարների համաձայն, գոյականներ է սերում մի դեպքում՝ բայական հիմքից, մյուս դեպքում՝ գոյականական հիմքից:

(2) $V + \text{Suf} = N$ - ընթացանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - վերացանիշ:

Ինչպես երևում է ներկայացված պատկերից, այստեղ միջհարացուցային ընդհանրություններ չկան:

-ant

Այս նշանակերտը գործառական նույն դրսևորումներ ունի, ինչ նախորդը. գոյականներ է սերում նույն կաղապարների նույն հիմքերով, սակայն իմաստային բոլորովին այլ բեռնվածությամբ:

(2) $V + \text{Suf} = N$ - գործորդանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, իրանիշ, գործորդանիշ:

-ar

Միայն մեկ իմաստային դաշտ է կազմավորվում այս նշանակերտով, որն ածական է սերում գոյականական հիմքից:

(5) $N + \text{Suf} = A$ - հարաբերանիշ:

-ard

Այս նշանակերտի մեջ համատեղված է զույգ իմաստային դաշտ. խոսքամասային կերտման առումով հակադարձ համեմատական հարաբերություն ունի նախորդ նշանակերտի նկատմամբ. նախորդի դեպքում, ինչպես ասվեց, ածական էր կազմվում գոյականական հիմքից. այս դեպքում գոյական է կազմվում ածականական հիմքով:

(1) $A + \text{Suf} = N$ - անձնանիշ, նվաստանիշ:

-ary

Այս նշանակերտի 4-րդ համարի կաղապարով գոյական է կազմվում գոյականական հիմքով, իսկ 5-րդ և 6-րդ համարների կաղապարներով՝ ածականներ՝ համապատասխանաբար գոյականական և բայական հիմքերով:

(4) $N + \text{Suf} = N$ - դասանիշ:

(5) $N + \text{Suf} = A$ - հարաբերանիշ:

(6) $V + \text{Suf} = A$ - հարաբերանիշ:

Միջհարացուցային ընդհանրություն ունեն 5-րդ և 6-րդ կաղապարները՝ հարաբերանշության դաշտով:

-ase

Նշանակերտը գոյականներ է կազմում ածականական և գոյականական հիմքերով:

(1) $A + \text{Suf} = N$ - նյութանուն:

(4) $N + \text{Suf} = N$ - իրանիշ, տարրանիշ:

Միջհարացուցային աղերսներ չկան:

-aster

Նշանակերտը գոյական է կազմում գոյականական հիմքով: Համատեղում է երկու իմաստ:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, նվաստանիշ:

-ate

Այս նշանակերտը ձևավորում է քառակաղապար հարացույցներ, որոնցից երկուսի դեպքում՝ բայական, մյուս երկուսի դեպքում՝ մեկական գոյականական և ածականական սերման հնարավորությամբ: Կաղապարներից 4-րդ համարն

ինքնակերտ է, իսկ 5-րդ, 8-րդ և 9-րդ համարները՝ այլակերտ: Բոլոր կաղապարներով էլ տարիմաստ դաշտեր են ձևավորվում:

(4) $N + Suf = N$ - հավաքանիշ, տիտղոսանիշ, պաշտոնանիշ:

(5) $N + Suf = A$ - վերաբերանիշ, բաղկացանիշ:

(8) $N + Suf = V$ - բայասեռանիշ՝ ներգործանիշ, փոխարկանիշ:

(9) $A + Suf = V$ - բայասեռանիշ՝ ներգործանիշ:

Նույնականությամբ՝ իմաստային դաշտերի հատում ունեն վերջին երկու բայակերտ կաղապարները:

-cide

Այս նշանակերտը գոյականական հիմքով գոյականներ է կազմում՝ ձևավորելով երկու տարասեռ իմաստային դաշտեր:

(4) $N + Suf = N$ - անձնանիշ, ներգործանիշ:

-dom

Ածականական և գոյականական հիմքերով գոյականներ է կազմում:

(1) $A + Suf = N$ - վիճականիշ, փաստանիշ:

(4) $N + Suf = N$ - անձնանիշ, վերացանիշ, տիտղոսանիշ:

Ինչպես տեսնում ենք, իմաստային դաշտերի նույնականությամբ պայմանավորված միջհարացուցային աղերսներ չկան:

-drome

Գոյականական հիմքով գոյականներ է կազմում և ձևավորում մեկ իմաստային դաշտ:

(4) $N + Suf = N$ - տեղանիշ:

-ed

Ածականներ է կազմում գոյականական և բայական հիմքերից:

(5) $N + Suf = A$ - բաղկացանիշ:

(6) $V + Suf = A$ - որականիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ չկան:

-ee

Նշանակերտը գոյականներ է կազմում բայական և գոյականական հիմքերից:

(2) $V + Suf = N$ - անձնանիշ:

(4) N + Suf = N - նվազանիշ:

Չկան իմաստային դաշտերի ընդհանրությամբ պայմանավորված միջհարացուցային աղերսներ:

-een

Այս նշանակերտը կազմում է ինքնակերտ գոյականներ և ձևավորում երկու տարասեռ իմաստային դաշտեր:

(4) N + Suf = N - իրանիշ, գործվածքանիշ:

-eme

Գործառական նույնություն ունի նախորդ նշանակերտի հետ ինքնակերտ գոյականակազմության առումով: Այն ձևավորում է եզակի իմաստային դաշտ:

(4) N + Suf = N - հասկացանիշ:

-en

Քառակադապար հնարավորությամբ նշանակերտ է: Կազմում է գոյականներ՝ ածականական և գոյականական հիմքերով, և բայեր՝ գոյականական և ածականական հիմքերով:

(1) A + Suf = N - նյութանիշ:

(4) N + Suf = N - մասնանիշ:

(8) N + Suf = V - բայասեռանիշ՝ ներգործանիշ:

(9) A + Suf = V - բայսեռանիշ՝ վիճակադարձ:

Ձևավորում է մերձիմաստ և տարիմաստ դաշտեր: Իրար նկատմամբ տարիմաստ են 1-ին և 4-րդ համարների կադապարները, և այդպիսին են այդ երկուսը միասին՝ ի հակադրություն 8-րդ և 9-րդ համարների մերձիմաստ կադապարների: Վերջին երկուսը մերձիմաստ են, որովհետև, ճիշտ է, բայասեռանիշ են, սակայն սրանց իմաստային նույնությունը լիակատար չէ, այլ մասնակի, քանի որ մեկի սեռանշությունը մասնավորվում է ներգործականությամբ, իսկ մյուսինը՝ վիճակադարձությամբ:

-enne

Նշանակերտը գոյականներ է կազմում գոյականական հիմքով: Զույգ իմաստային դաշտ է ձևավորում՝ համատեղության սկզբունքով:

(4) N + Suf = N - անձնանիշ, սեռանիշ՝ անձնիզանիշ:

-er

Նշանակերտ է՝ եռակաղապար հնարավորությամբ: Գոյականներ է կազմում ածականական, բայական և գոյականական հիմքերով:

(1) $A + \text{Suf} = N$ - անձնանիշ:

(2) $V + \text{Suf} = N$ - անձնանիշ, գործորդանիշ, տեղանիշ, կենդանանիշ, իրանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, զբաղումնանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային հատումներ կան՝ անձնանշության բեկմամբ: Այս իմաստը մենադաշտ է 1-ին համարի կաղապարի տիրույթում, զուգադաշտ՝ 4-րդ համարի կաղապարի տիրույթում և բազմադաշտ՝ 2-րդ համարի կաղապարի տիրույթում:

-ese

Մենակաղապար հնարավորությամբ նշանակերտ է: Կազմում է գոյականներ գոյականական հիմքից: Կաղապարն ունի իմաստային զուգադաշտություն:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, ազգանիշ:

-esque

Նախորդի նման՝ սա նույնպես մենակաղապար հնարավորությամբ նշանակերտ է: Ածականներ է կազմում գոյականական հիմքից: Զուգադաշտ կաղապար է:

(5) $N + \text{Suf} = A$ - բնութագրանիշ, նմանանիշ:

-ess

Նշանակերտը գոյականներ է կազմում բայական և գոյականական հիմքերով: 2-րդ համարի կաղապարը մենադաշտ է, 4-րդ համարինը՝ բազմադաշտ (եռադաշտ):

(2) $V + \text{Suf} = N$ - անձնանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, սեռանիշ, ազգանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային հատումը անձնանշությամբ է բեկվում:

-ette

Գոյականական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Ունի իմաստային զուգադաշտություն:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, սեռանիշ՝ իգանիշ:

-ette²

Գործառույթով նույնական է նախորդ նշանակերտի հետ: Նույնպես զուգադաշտ է՝ նախորդից տարբեր իմաստներով:

(4) $N + Suf = N$ - նվազանիշ, ապրանքանիշ:

-fold

Ածականներ կազմող նշանակերտ է. կազմում է գոյականական և ածականական հիմքերից:

(5) $N + Suf = A$ - բազմապատկանիշ:

(7) $A + Suf = A$ - բազմապատկանիշ:

Ինչպես տեսնում ենք, երկու կաղապարն էլ մենադաշտ է, ընդ որում՝ նույնադաշտ: Իմաստային դաշտերի միջհարացուցային ընդհանրությունը բեկվում է բազմահատկանշությամբ:

-ful

Քառակաղապար նշանակերտ է: Կազմում է գոյականներ գոյականական հիմքից և ածականներ՝ գոյականական, բայական ու ածականական հիմքերից: Բոլոր կաղապարները մենադաշտ են:

(4) $N + Suf = N$ - հավաքանիշ:

(5) $N + Suf = A$ - հատկակրանիշ:

(6) $V + Suf = A$ - հատկակրանիշ:

(7) $A + Suf = A$ - լիանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային ընդհանրություն ունեն 5-րդ և 6-րդ համարների կաղապարները՝ հատկակրանշության հատմամբ:

-hood

Այս նշանակերտը գոյականներ է կազմում ածականական և գոյականական հիմքերից: 1-ին համարի կաղապարը մենադաշտ է, 2-րդ համարինն օժտված է բազմադաշտությամբ:

(1) $A + Suf = N$ - վիճականիշ:

(4) $N + Suf = N$ - վիճականիշ, վերացանիշ, հավաքանիշ, որականիշ:

Միջհարացուցային աղերսն ապահովված է վիճականշությամբ:

-i

Գոյականակազմ նշանակերտ է՝ գոյականական հիմքով: Եզակի իմաստային դաշտ է ձևավորում:

(4) N + Suf = N - պետութենանիշ:

-ia

Գոյականակազմ նշանակերտ է՝ գոյականական հիմքով: Մենադաշտ է:

(1) A + Suf = N - վիճականիշ:

-ic

Ածականակազմ նշանակերտ է՝ գոյականական և բայական հիմքերով: 6-րդ համարի կաղապարը մենադաշտ է՝ ի տարբերություն 5-րդ համարի բազմադաշտ կաղապարի:

(5) N + Suf = A - վերաբերանիշ, հարաբերանիշ, բաղկացանիշ, նմանանիշ, կառուցվածքանիշ:

(6) V + Suf = A - հատկակրանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ չկան:

-ice

Գոյականակազմ նշանակերտ է՝ բայական և գոյականական հիմքերով: 2-րդ համարի կաղապարը մենադաշտ է, 4-րդ համարինը՝ բազմադաշտ:

(2) V + Suf = N - ընթացանիշ:

(4) N + Suf = N - ընթացանիշ, որականիշ, զգայանիշ:

Միջհարացուցային աղերսը հատվում է ընթացանշության դաշտում:

-ics

Գոյականակազմ նշանակերտ է՝ գոյականական հիմքով: Երկու իմաստային դաշտ է ձևավորում:

(4) N + Suf = N - մարզանիշ, գիտանվանանիշ:

-ide

Գոյականակազմ նշանակերտ է՝ գոյականական հիմքով: Իմաստային առումով մենադաշտ է:

(4) N + Suf = N - տարրանվանանիշ:

-ify

Եռակադապար բայակազմ նշանակերտ է: Բոլոր կադապարները մենադաշտ են:

(8) $N + Suf = V$ - բայասեռանիշ՝ ներգործանիշ:

(9) $A + Suf = V$ - բայսեռանիշ՝ ներգործակրավորանիշ:

(10) $V + Suf = V$ - բայսեռանիշ՝ ամդրադարծանիշ:

Միջհարացուցային ադերսը հատվում է բայական սեռանշության դաշտում՝ ոչ լիակատար նույնացմամբ:

-ile

Ածականակազմ նշանակերտ է՝ գոյականական և բայական հիմքերով: Սրանով իրացվող երկու կադապարն էլ մենադաշտ է:

(5) $N + Suf = A$ - նմանանիշ:

(6) $V + Suf = A$ - հատկակրանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային ադերսներ չկան:

-ine

Եռակադապար գոյականակազմ և ածականակազմ նշանակերտ է: Գոյականներ է կազմում բայական և գոյականական հիմքերով, ածականներ՝ գոյականական հիմքով: Իմաստային առումով բոլոր կադապարները մենադաշտ են:

(2) $V + Suf = N$ - ընթացանիշ:

(4) $N + Suf = N$ - իրանիշ /նյութանիշ:

(5) $N + Suf = A$ - հատկակրանիշ:

Չկան իմաստային դաշտերի միջհարացուցային ընդհանրություններ:

-ing

Բայական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով երկդաշտ է:

(2) $V + Suf = N$ - ընթացանիշ, վիճականիշ:

-ion

Ածականական և բայական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: 1-ին համարի կադապարը մենադաշտ է, 2-րդ համարինը՝ բազմադաշտ:

(1) $A + Suf = N$ - վերացանիշ:

(2) $V + Suf = N$ - ընթացանիշ, վիճականիշ, որականիշ, վերացանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային հատումը տեղի է ունեցել վերացանշության դաշտում:

-is

Բայական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: 2-րդ համարի կաղապարը մենադաշտ է, 4-րդ համարինը՝ զուգադաշտ համատեղություն:

(2) V + Suf = N - ընթացանիշ:

(4) N + Suf = N - ընթացանիշ / ախտորոշանիշ:

Քանի որ գոյականական հիմքով կաղապարի համատեղված իմաստային դաշտերից մեկը ընթացանշությունն է, միջհարացուցային հատումը հենց այդտեղ էլ կատարվում է:

-ish

Գոյականական և ածականական հիմքերով ածականակազմ նշանակերտ է: Յուրաքանչյուր կաղապարով մեկական իմաստային դաշտ է ձևավորվում:

(5) N + Suf = A - վերաբերանիշ:

(7) A + Suf = A - մեղմանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ չկան:

-ism

Ածականական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Երկու կաղապարն էլ աչքի են ընկնում իմաստային բազմադաշտությամբ:

(1) A + Suf = N - դրուֆանիշ, ուսմունքանիշ, ոճանիշ:

(4) N + Suf = N - վիճականիշ, վերացանիշ, որականիշ, պատմափուլանիշ, գիտանվանանիշ/ուսմունքանիշ:

Չկան իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ:

-ist

Ածականական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Կաղապարները մենադաշտ են՝ լրացված իմաստային նրբություններով:

(1) A + Suf = N - անձնանիշ (ուղղության հետևորդ):

(4) N + Suf = N - անձնանիշ/զբաղումնանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային ոչ լիակատար հատում կա անձնանշության դաշտում:

-itude

Ածականական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Կաղապարը մենադաշտ է:

(1) $A + \text{Suf} = N$ - վերացանիշ:

-ity

Գոյականակազմ եռակաղապար նշանակերտ է: Այս կաղապարները կազմված են ածականական, մակբայական և գոյականական հիմքերով: Ածականական հիմքով գոյականական կաղապարն իմաստային առումով եռադաշտ է, իսկ մյուս կաղապարները մենադաշտ են:

(1) $A + \text{Suf} = N$ - վիճականիշ, որականիշ, պայմանանիշ:

(3) $D + \text{Suf} = N$ - վերացանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - վերացանիշ:

Միջհարացուցային կաղապարներից ընդհանրություն ունեն մակբայական և գոյականական հիմքերով (3-րդ և 4-րդ թվահամարներով) բաղադրությունները, որոնք հատվում են վերացանշության իմաստային դաշտում:

-ive

Գոյականական և բայական հիմքերով ածականական նշանակերտ է: Իմաստային առումով կաղապարները մենադաշտ են:

(5) $N + \text{Suf} = A$ - վերաբերանիշ:

(6) $V + \text{Suf} = A$ - հարաբերանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ չկան (թեև մեկ այլ մոտեցման դեպքում թերևս կարելի լիներ վերաբերանշությունն ու հարաբերանշությունը մերձիմաստություն համարել):

-ize

Գոյականական և ածականական հիմքերով բայակազմ նշանակերտ է: Իմաստային առումով 9-րդ համարի կաղապարը մենադաշտ է՝ որպես ներքին երկփեղկ իմաստների համատեղում, 8-րդ համարի կաղապարը զուգադաշտ է, որի անդամներից մեկը նույնպես երկիմաստության միատեղում է:

(8) $N + \text{Suf} = V$ - կիրառանիշ, տեղանիշ/իրանիշ:

(9) $A + \text{Suf} = V$ - բայսեռանիշ՝ վիճակադարձ-ներգործանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային ընդհանրություն չկա:

-kin

Գոյականական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով կաղապարը մենադաշտ է:

(4) $N + Suf = N$ - նվազանիշ:

-less

Գոյականական և բայական հիմքերով ածականակազմ նշանակերտ է: Երկու կաղապարներն էլ մենադաշտ են, որոնք, սակայն, զույգ նրբիմաստների համատեղում են:

(5) $N + Suf = A$ - վիճականիշ/զրկանիշ:

(6) $V + Suf = A$ - եղանականիշ՝ ժխտանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային ընդհանրություն կարծես թե չկա, թեև կա նուրբ մերձիմաստություն. զուրկ լինելը, ի վերջո, ունենալու ժխտումն է:

-let

Գոյականական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով կաղապարը զուգադաշտ է, որի դաշտերից մեկը երկփեղկ տարասեռ իմաստների համատեղում է:

(4) $N + Suf = N$ - նվազանիշ, անձնանիշ/նվաստանիշ:

-ling

Ածականական, բայական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Ածականական հիմքով կաղապարը եռադաշտ է, իսկ բայական և գոյականական հիմքերով կաղապարները զուգադաշտ են:

(1) $A + Suf = N$ - անձնանիշ, կենդանանիշ, բուսանիշ:

(2) $V + Suf = N$ - անձնանիշ, կենդանանիշ:

(4) $N + Suf = N$ - նվազանիշ, հուզանիշ:

Իմաստային դաշտերի առումով միջհարացուցային ընդհանրություն ունեն 2-րդ և 4-րդ համարների, կաղապարները, որոնք հատվում են անձնանշության և կենդանանշության դաշտերում:

-ly

Հնգակադապար ածականակազմ և մակբայակազմ նշանակերտ է: Ածականական բաղադրությունները գոյականական, բայական և ածականական հիմքերով են, մակբայական բաղադրությունները՝ ածականական և բայական հիմքերով: Միայն ածականական հիմքով ածականական կադապարն է, որ իմաստային առումով զուգադաշտ է. մնացած կադապարները մենադաշտ են:

(5) $N + \text{Suf} = A$ - նմանանիշ:

(6) $V + \text{Suf} = A$ - հատկակրանիշ:

(7) $A + \text{Suf} = A$ - հատկակրանիշ, հավելանիշ:

(12) $A + \text{Suf} = D$ - որականիշ:

(13) $V + \text{Suf} = D$ - վիճականիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային ընդհանրություն ունեն 6-րդ և 7-րդ համարների կադապարները, որոնք հատվում են հատկակրանշության դաշտում:

-ment

Ածականական, բայական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով բոլոր կադապարները մենադաշտ են. միայն 4-րդ համարի կադապարը համատեղում է երկու նրբիմաստ:

(1) $A + \text{Suf} = N$ - հատկակրանիշ:

(2) $V + \text{Suf} = N$ - ընթացանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - հիմնանիշ / ստորանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ չկան:

-ness

Ածականական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով երկու կադապարն էլ զուգադաշտ է:

(1) $A + \text{Suf} = N$ - վիճականիշ, որականիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - վերացանիշ, հավաքանիշ:

Իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ չկան:

-ock

Գոյական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Կադապարը մենադաշտ է:

(4) $N + \text{Suf} = N$ - նվազանիշ:

-oid

Գործառական առումով նույնական է նախորդ նշանակերտի հետ: Նույնպես ունի մենադաշտ կաղապար:

$$(4) N + Suf = N - \text{նմանանիշ:}$$

-oon

Բայական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով կաղապարներից յուրաքանչյուրը մենադաշտ է:

$$(2) V + Suf = N - \text{իրանիշ:}$$

$$(4) N + Suf = N - \text{շեղանիշ:}$$

Չկան իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ:

-ous

Գոյականական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Կաղապարը մենադաշտ է:

$$(5) N + Suf = A - \text{հատկակրանիշ:}$$

-ship

Գոյականական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով այս նշանակերտով ձևավորվող կաղապարը բազմադաշտ է:

$$(4) N + Suf = N - \text{վիճականիշ, անձնանիշ, վերացանիշ, հավաքանիշ:}$$

-some

Գոյականական, բայական և ածականական հիմքերով ածականակազմ նշանակերտ է: Այս նշանակերտով ձևավորվող կաղապարները իմաստային առումով մենադաշտ են:

$$(5) N + Suf = A - \text{վիճականիշ:}$$

$$(6) V + Suf = A - \text{հատկակրանիշ:}$$

$$(7) A + Suf = A - \text{որականիշ:}$$

Չկան իմաստային դաշտերի միջհարացուցային ընդհանրություններ:

-ster

Ածականական, բայական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով 1-ին և 4-րդ համարների կաղապարները մենադաշտ են, 2-րդ համարինը՝ զուգադաշտ:

$$(1) A + Suf = N - \text{անձնանիշ:}$$

(2) $V + Suf = N$ - անձնանիշ, գործորդանիշ:

(4) $N + Suf = N$ - անձնանիշ:

Երեք կաղապարների իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ կան, որոնք ակներև են անձնանշության դաշտում:

-th

Ածականական և բայական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: 1-ին կաղապարը իմաստային առումով մենադաշտ է, երկրորդը՝ բազմադաշտ:

(1) $A + Suf = N$ - որականիշ:

(2) $V + Suf = N$ - ընթացանիշ, վիճականիշ, որականիշ, վերացանիշ:

Միջհարացուցային ընդհանրությունը որականշության դաշտում է:

-ule

Գոյականական հիմքով գոյականակազմ նշանակերտ է: Մենադաշտ է:

(4) $N + Suf = N$ - նվազանիշ:

-um

Ածականական և գոյականական հիմքերով գոյականակազմ նշանակերտ է: Իմաստային առումով կաղապարներից յուրաքանչյուրը մենադաշտ է:

(1) $A + Suf = N$ - պարփականիշ:

(4) $N + Suf = N$ - հանգուցանիշ:

Չկան իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ:

-ure

Ածականական, բայական և գոյականական հիմքերով նշանակերտ է: Առաջին երկու կաղապարներն իմաստային առումով մենադաշտ են, վերջինը՝ զուգադաշտ:

(1) $A + Suf = N$ - հատկակրանիշ:

(2) $V + Suf = N$ - վիճականիշ:

(4) $N + Suf = N$ - վերացանիշ, ոլորտանիշ:

Չկան իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ:

-ward

Գոյականական և մակբայական հիմքերով մակբայակազմ նշանակերտ է:
Իմաստային առումով երկու կաղապարն էլ մենադաշտ է:

(11) $N + \text{Suf} = D$ - տեղանիշ:

(14) $D + \text{Suf} = D$ - տեղանիշ:

Միջհարացուցային ընդհանրությունը հատվում է տեղանշության դաշտում:

-wards

Մակբայական հիմքով մակբայակազմ նշանակերտ է: Կաղապարը մենադաշտ է:

(14) $D + \text{Suf} = D$ - տեղանիշ:

-ways

Գոյականական հիմքով մակբայակազմ նշանակերտ է: Կաղապարը մենադաշտ է:

(11) $N + \text{Suf} = D$ - վիճականիշ:

-wise

Ածականական հիմքով մակբայակազմ նշանակերտ է: Կաղապարը մենադաշտ է:

(12) $A + \text{Suf} = D$ - ձևանիշ:

-y

Գոյականակազմ և ածականակազմ քառակաղապար նշանակերտ է: Գոյականներ է կազմում ածականական, բայական և գոյականական հիմքերով և ածականներ՝ գոյականական հիմքով: 2-րդ և 4-րդ համարների կաղապարները զուգադաշտ են, իսկ 1-ին և 5-րդ համարներինը՝ մենադաշտ:

(1) $A + \text{Suf} = N$ - հատկակրանիշ:

(2) $V + \text{Suf} = N$ - ընթացանիշ, վերացանիշ:

(4) $N + \text{Suf} = N$ - անձնանիշ, փաղաքշանիշ:

(5) $N + \text{Suf} = A$ - հարաբերանիշ:

Հակառակ կաղապարների առատության՝ այս նշանակերտով ձևավորված իմաստային դաշտերի միջհարացուցային աղերսներ չկան:

2. Իմաստային դաշտերով պայմանավորված միջհարացուցային հարաբերություններ: Յարդ դիտարկում էինք նշանակերտների ձևավորած

իմաստային դաշտերը՝ միջկաղապարային հնարավորություններով և դրսևորումներով: Այժմ փորձենք պարզել, թե ինչպես են բաշխված նշանակերտներն իմաստային դաշտերի վրա: Այստեղ այլևս հարկ չենք համարում կաղապարներն ամբողջությամբ ներկայացնելու. թողնում ենք այդ կաղապարների՝ Suf-ի աջ և ձախ կողմերում նշված միայն խոսքամասային պայմանական անվանատառերը, որոնցից առաջինը նշում է հիմքը, երկրորդը՝ ձևավորված խոսքի մասը: Այսպես՝ VA-ն կնշանակի բայական հիմքով ածական, AA-ն՝ ածական հիմքով ածական և այլն: Ահա՛ պատկերը:

Փոխարկանիշ - able (VA), ate (NV):

Բնութագրանիշ - able (NA, VA), esque (NA):

Իրավանիշ - able (AA):

Անձնանիշ - able (AA), an (AN, NN), ant (NN), ard (AN), aster (NN), cide (NN), dom (NN), ee (VN), enne (NN), er (VN, NN, AN), ese (NN), ess (VN, NN), ette (NN), ist (AN, NN), let (NN), ling (AN, VN), ster (AN, VN, NN), y (NN):

Վերաբերանիշ - aceous (NA), an (NA), ate (NA), ic (NA), ish (NA), ive (NA):

Հարաբերանիշ - al (NA), ar (NA), ary (NA, VA), ic (NA), y (NA):

Դասանիշ - aceous (NA), ary (NN):

Վիճականիշ - acy (AN, VN, NN), ade (VN), age (AN, NN), ion (VN), dom (AN), hood (AN, NN), ia (AN), ing (VN), ism (NN), ity (AN), less (NA), ly (VD), ness (AN), ship (NN), some (NA), th (VN), ure (VN), ways (ND):

Որականիշ - acy (AN), ion (VN), ed (VA), hood (NN), ice (NN), ism (NN), ity (AN), ly (AD), ness (AN), some (AA), th (AN, VN):

Ընթացանիշ - acy (VN), ade (VN, NN), al (VN), ice (VN, NN), ine (VN), ing (VN), is (VN, NN), ment (VN), th (VN), y (VN):

Տիտղոսանիշ - acy (NN), ate (NN), dom (NN):

Պաշտոնանիշ - ate (NN):

Զբաղումնանիշ - er (NN), ist (NN):

Իրանիշ - ant (NN), ase (NN), een (NN), er (VN), ine (NN), ize (NV), oon (VN):

Տարրանիշ - ase (NN), ide (տարրաթվանիշ (NN)):

Նյութանիշ - age (AN, NN), ase (նյութանվանիշ (AN)), en (AN), ine (NN):

Արդյունանիշ - ade (NN):

Գործանիշ - age (VN):

Փաստանիշ - age (VN), dom (AN):

Գործորդանիշ - ant (VN, NN), er (VN), ster (VN):

Հավաքանիշ - age (NN), ana (NN), ate (NN), ful (NN), hood (NN), ness (NN), ship (NN):

Վերացանիշ - ana (NN), ance (NN), ion (AN, VN), dom (NN), hood (NN), ism (NN), ity (DN, NN), nees (NN), ship (NN), th (VN), itude (AN), ure (NN), y (VN):

Մասնագիտանիշ - an (NN):

Հատկակրանիշ - ful (NA, VA), ic (VA), ile (VA), ine (NA), ly (VA, AA), ment (AN), ous (NA), some (VA), ure (AN), y (AN):

Տեղանիշ - drome (NN), ize (NV), ward (ND, DD), wards (DD), er (VN):

Նվազանիշ - ule (NN), ee (NN), ette2 (NN), kin (NN), let (NN), ling (NN), ock (NN):

Նվաստանիշ - ard (AN), aster (NN), let (NN):

Բայասեռանիշ-ներգործանիշ - ate (NV, AV), cide (NN), en (NV), ify (NV), ize (AV):

Բայասեռանիշ-ներգործակրավորանիշ - ify (AV):

Բայասեռանիշ-անդրադարձանիշ - ify (VV):

Բայասեռանիշ-վիճակադարձ - en (AV), ize (AV):

Բաղկացանիշ - ate (NA), ed (NA), ic (NA):

Իգանիշ (սեռանիշ) - enne (NN), ess (NN), ettei (NN):

Ազգանիշ - ese (NN), ess (NN):

Նմանանիշ - esque (NA), ic (NA), ile (NA), ly (NA), oid (NN):

Ապրանքանիշ - ette2 (NN):

Գործվածքանիշ - een (NN):

Հասկացանիշ - eme (NN):

Մասնանիշ - en (NN):

Կենդանանիշ - er (VN), ling (AN, VN):

Բուսանիշ - ling (AN):

Բազմապատկանիշ - fold (NA, AA):

Լիանիշ - ful (AA):
Պետութենանիշ - i (NN):
Կառուցվածքանիշ - ic (NA):
Զգայանիշ - ice (NN):
Մարզանիշ - ics (NN):
Գիտանվանանիշ - ics (NN):
Ախտորոշանիշ - is (NN):
Մեղմանիշ - ish (AA):
Ուսմունքանիշ - ism (AN, NN):
Դրութանիշ - izm (AN):
Ոճանիշ - izm (AN):
Պատմափուլանիշ - izm (NN):
Պայմանանիշ - ity (AN):
Կիրառանիշ - ize (NV):
Զրկանիշ - less (NA):
Եղանականիշ՝ ժխտանիշ - less (VA):
Հուզանիշ - ling (NN):
Հավելանիշ - ly (AA):
Հիմնանիշ/ստորանիշ - ment (NN):
Շեղանիշ - oon (NN):
Պարփականիշ - um (AN):
Հանգուցանիշ - um (NN):
Ոլորտանիշ - ure (NN):
Զևանիշ - wise (AD):
Փաղաքանիշ - y (NN):

Մեր ուսումնասիրության հաջորդ քայլը ածանցային կաղապարների վիճակագրությունն է՝ թվային նվազման հաջորդականությամբ: Վիճակագրական պատկերը ներկայացված է 11-րդ աղյուսակով:

Աղյուսակ 11

Կաղապարների քանակային արտահայտությունը՝ նվազող հաջորդականությամբ

Կաղապարները և նրանց քանակային արտահայտությունը													
NN	VN	AN	NA	VA	AA	NV	AV	DD	AD	VD	ND	DN	VV
93	35	34	29	10	8	7	5	2	2	1	1	1	1

Աղյուսակից պարզորոշ երևում է, որ ժամանակակից անգլերենում անգերազանցելի հնարավորություն ունեն գոյականական նշանասերման ածանցային կաղապարները, ընդ որում դրանցից ինքնակերտ կաղապարը գերազանցում է բոլոր այլակերտները՝ միասին վերցված: Գոյականական հիմքով գոյականի կազմության թվային գերազանցությունը միայն ինքնակերտությամբ չպետք է պայմանավորել. մյուս կաղապարներում ևս, բացի մակբայական նշանասերումից, գերազանցում են այս նույն հիմքով կազմությունները. հմմտ. ածականական և բայական նշանասերման տվյալները. գոյականական հիմքով 29 ածական՝ բայական հիմքով 10 և ածականական հիմքով 8 ածականական կաղապարային իրացումների դիմաց, և գոյականական հիմքով 7 բայ՝ ածականական հիմքով 5 և բայական հիմքով 1 բայական կաղապարային իրացումների դիմաց: Նվազագույն հնարավորություն ունեն մակբայական, ածականական, բայական և գոյականական հիմքերով մակբայական կաղապարները (առաջին երկուսը՝ 2-ական, վերջին երկուսը՝ 1-ական իրացում). նվազագույն՝ 1 իրացում ունի նաև մակբայական հիմքով գոյականական նշանասերումը:

Ըստ աղյուսակի՝ անգլերենի բայական նշանասերման հնարավորությունը զիջում է ածականականին: Սակայն սա այսպես է ածանցակերտման դեպքում: Նշանասերման անհամեմատ մեծ հնարավորություն ունի բայը, ինչպես ցույց կտրվի համապատասխան տեղում, խոնարհման հիմքակազմության և ձևակազմության ոլորտներում:

Նկատել տանք ևս մի կարևոր իրողություն. միևնույն ածանցով (ինչ խոսք, ոչ բոլորով), ինչպես երևում է աղյուսակներից և ոչ աղյուսակային հարացույցներից, տարբեր խոսքի մասեր են կազմվում՝ առաջ բերելով համանունության և

բազմիմաստության լայն հնարավորություններ: Թեև սա իմաստաբանական վերլուծության կարևոր իրողություններից է, սակայն դրանց չենք անդրադառնա, որովհետև, ինչպես երևում է վերի շարադրանքից, մեր իմաստաբանական քննությունը այլ բեկում ու նպատակադրում ունի, և բացի այդ՝ դրանք լայնորեն լուսաբանված են մասնագիտական գրականության մեջ, որոնց ավելացնելու ոչինչ չունենք:

Կարևոր ենք համարում հիշեցնել, որ իմաստային խմբավորման մեջ անխուսափելի է որոշ սուբյեկտիվությունը. հետագայում այս խնդրին անդրադառնալիս իմաստային տիպերի որոշ փոփոխությունների հնարավորությունը չենք բացառում: Կարծում ենք՝ սա ընդունելի և թույլատրելի մտային տեղաշարժ է գիտական ստեղծագործության մեջ: Սակայն սուբյեկտիվ չեն այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում ենք այստեղ՝ հնարավոր խմբատիպեր առաջ քաշելով, իսկ դրանց մասնավոր իրացումներում սպրդող հնարավոր թերիները շտկելի են ժամանակի ընթացքում:

II գլխի ամփոփում

Այս գլուխն ամփոփելով՝ նկատենք, որ տասնյակներով բերված ածանցային իմաստները նույնպես խմբավորելի են և հեշտությամբ տեղաբաշխվում են վերացարկված հասկացական դասերում ու դրանց բոլոր ենթակարգերում: Այսպես՝ անձնանշությունն առարկայնության դասին է պատկանում, բնութագրանշությունը՝ հատկանշայնության, կիրառանշությունը՝ ընթացայնության, տեղանշությունը՝ մակադրահատկանշայնության դասին և այլն: Այս դասերը ևս համապատասխան հատումներ են ունենում՝ ըստ իմաստային ընդգրկման ծավալի. օրինակ՝ որականշությունը հատուկ է թե՛ առարկայնության, թե՛ հատկանշայնության, թե՛ մակադրահատկանշայնության դասին: Այստեղ, սակայն, կանգ ենք առնում, քանի որ յուրաքանչյուր իմաստի դիտարկումը համապատասխան կադապարին ու ածանցին հարաբերելով՝ ստիպված ենք լինելու լայնածավալ կրկնությունների դիմել, իսկ առանց հարաբերելու բոլոր իմաստները չորս խմբավորմամբ ներկայացնելը, որքան էլ կարևոր լինի ընդհանուր լեզվաբանական հայեցակետով, այնուամենայնիվ դուրս է մասնավոր լեզվաբանության հետաքրքրության շրջանակից:

Այսպիսով՝ նշանակերտների ձևավորած իմաստային խմբերի քննությունը՝ միջկադապարային հնարավորություններով և դրսևորումներով, թույլ է տալիս պարզել, թե ինչպես են բաշխված նշանակերտներն իմաստային դաշտերի վրա:

Դեռևս նշանակերտների և առհասարակ նշանների իմաստաբանական հետազոտությունը չունի այն ճշգրտությունը, ինչ որ գտնում ենք դրանց արտահայտությանը և կառուցվածքին նվիրված ուսումնասիրություններում: Չնայած դրան, հենց նշանի նշանակյալ և նշանակիչ բևեռների գոյությամբ պայմանավորված, պարտավոր ենք հասնել այդ բևեռների առանձնակի ուսումնասիրությունը միմյանց հարաբերելուն՝ նոր մեթոդներ որոնելով: Այս առումով լեզվանշանագիտությունը դեռևս փնտրտուքի մեջ է: Հասկանալի է, որ մեր իմաստաբանական վերացարկված դիտարկումներում մենք ևս խույս տալ չէինք կարող որոշ պայմանականություններից՝ սկսած նշանակերտների իմաստային անվանումներից, ավարտած դրանց տիպաբանական խմբավորմամբ:

Ուսումնասիրությունը նաև պարզում է, որ՝

ա. ժամանակակից անգլերենում անգերազանցելի հնարավորություն ունեն գոյականական նշանասերման ածանցային կադապարները, ընդ որում դրանցից ինքնակերտ կադապարը գերազանցում է բոլոր այլակերտները՝ միասին վերցված.

բ. գոյականական հիմքով գոյականի կազմության թվային գերազանցությունը միայն ինքնակերտությամբ չպետք է պայմանավորել. մյուս կադապարներում ևս, բացի մակբայական նշանասերումից, գերազանցում են այս նույն հիմքով կազմությունները.

գ. նվազագույն հնարավորություն ունեն մակբայական, ածականական, բայական և գոյականական հիմքերով մակբայական կադապարները.

դ. նվազագույն իրացում ունի նաև մակբայական հիմքով գոյականական նշանասերումը:

ԳԼՈՒԽ III

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱՌԱՁԵՎԵՐԻ ԵՎ ՎԵՐԲԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1 Բաղադրական և ձևակազմական հիմքերի նշանային արժեքը

Ա. Բաղադրական հիմքի ըմբռնումը: Վերջին տասնամյակներում լեզվաբանության մեջ հիմքի հասկացության ավելի լայն մոտեցումներ են հաստատվել: Ավանդական քերականության մեջ հիմքի ըմբռնումը սահմանափակվում էր միայն ձևաբանական օրինաչափությունները վեր հանելու որոնումներում: Անցյալ դարի երկրորդ կեսից սկսած՝ շրջանառության մեջ է դրվում բառակազմական հիմքի գաղափարը, որն ինքնատիպ բեկումներ ունեցավ հայ լեզվաբանության մեջ: Այսպես՝ Գ. Զահուկյանը, բառակազմական հիմք ասելով, նկատի ուներ բաղադրյալ բառի՝ վերջածանցին նախորդող կամ նախածանցին հաջորդող հատվածը [Զահուկյան 1974, 158]: Ավելին՝ ընդլայնելով հիմքի ըմբռնումը՝ նա համասեռության սկզբունքով խոսում է նաև բառակապակցության հիմքի մասին [Գ. Զահուկյան 1974, 159]: Հետագայում լեզվաբանը զարգացնում է բառակազմական հիմքի գաղափարը՝ առավել որոշակիացնելով արմատահիմքի, նախածանցավոր ու վերջածանցավոր հիմքերի, այլև բառակազմական վերլուծական հիմքերի գաղափարը [Զահուկյան 1989, 161–163]: Բառակազմական կամ բաղադրական հիմքի հետաքրքրական մոտեցումներ է ի հայտ բերում Է. Աղայանը. ըստ լեզվաբանի՝ համադրական բաղադրությունները, անկախ իրենց կազմում եղած իմաստաձևային բաղադրիչների քանակից, երկհիմք բաղկացություն ունեն. դրանք բառակազմական դերաբաշխությամբ լինում են սերող և բաղադրող. սերող է այն հիմքը, որին կարող է ավելանալ մի նոր հիմք. բաղադրող է այն հիմքը, որն ավելանում է սերող հիմքին՝ կազմելով նոր բաղադրություն [Աղայան 1984, 245–248]:

Փորձենք, ուրեմն, հայրենական լեզվաբանների տեսական մտքի ձեռքբերումներն իրացնել անգլերենի բառակազմական և ձևակազմական հիմքերը լուսաբանելիս:

Երկբաղադրիչ բարդությունների բնութագիրը: Օ. Մեշկովն իր հիշյալ գրքի «Բարդ բառերի կաղապարները» խորագրի տակ բերված բարդությունների կաղապարների մեջ, բացի այսպես կոչված հիմնական խոսքի մասերից⁵, որպես բաղադրիչներ է ներկայացնում նաև քանակական ու դասական թվականները, անձնական, առարկայանիշ ցուցական, որոշյալ ու անորոշ դերանունները, նախդիրը, մասնիկը, ինչպես նաև բայի ինֆինիտիվը, գերունդիումը, առաջին և երկրորդ դերբայները [Мешков 76, 213-240]: Ինչպես ածանցումների դեպքում, այստեղ ևս կատարում ենք համապատասխան նույնացումներ: Բերվածներից վերջին չորս բաղադրիչի նույնացումները որևէ դժվարություն չեն ներկայացնում. հիշատակված դերբայական ձևերը և գերունդիումը նույնացվում են բայի հետ (բայը՝ որպես բաղադրող հիմք, բարդությունների կազմում այլ կերպ չի էլ արտահայտվում): Դասական թվականները, իրենց հատկանշային բնույթին համապատասխան, բարդության նախադաս բաղադրիչ են, ուստի սրա և ածականի նույնացումը ևս դժվարություն չի հարուցում: Քանակական թվականներով կազմված բաղադրությունների ներքին շարահյուսական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև ածանցումների մեջ մենք դրանք հատկացրել ենք առարկայնության դասին, այստեղ, սակայն, շնորհիվ նախադաս դիրքի՝ դրանք բացահայտում են իրենց որոշչային գործառույթը, որն էլ թույլ է տալիս դասական թվական-բաղադրիչների նման դրանք տեղայնացնել հատկանշայնության դասի մեջ և նույնացնել ածականների հետ: Նախդրիվ բաղադրություններում նախդիր-բաղադրիչը շարադասությամբ է որոշարկում իր կարգային իմաստը. նախադաս դիրքում ածականական իմաստ ունի, հետադաս դիրքում՝ գոյականական. ըստ այդմ էլ կատարում ենք համապատասխան նույնացումներ:

Մեկնաբանության հիման վրա կարող ենք արձանագրել, որ բաղադրության յուրաքանչյուր դասի ամեն մի կարգային բաղադրիչ արժույթայնության չորս հնարավորություն ունի, որը համապատասխանում է 16 կաղապարի: Բոլոր այդ լեզվական կաղապարներն իրացված դրսևորումներ ունեն անգլերենում: Հասկանալի է, որ կաղապարներից չորսը ինքնակերտ է, այսինքն՝ տվյալ խոսքի մասի՝ որպես սերող հիմքի արժույթը նույն խոսքամասային պատկանելությամբ բաղադրող հիմքն է: Մնացյալ 12 կաղապարները այլակերտ են: Ստորև ներկայացնում ենք արդի

անգլերենի երկանդամ բարդության լեզվական կամ համակարգային ընդհանրական կաղապարների աղյուսակը (աղյուսակ 12):

Աղյուսակ 12

Երկանդամ բարդության լեզվական կաղապարները

Արժույթակրությունը	Ինքնակերտ արժույթներ	Այլակերտ արժույթներ		
գոյականի արժույթները	N + N	N + A	N + V	N + D
ածականի արժույթները	A + A	A + N	A + V	A + D
բայի արժույթները	V + V	V + N	V + A	V + D
մակբայի արժույթները	D + D	D + N	D + A	D + V

Ինքնակերտ արժույթներով կաղապարների բնութագիրը: Ինքնակերտ արժույթներով բաղադրիչներից կազմված N + N, A + A և D + D կաղապարները համարժեք են ոչ միայն իրենց արժույթային ինքնակերտության պայմանավորվածությամբ, այլև կազմավորման արդյունքով. բերված կաղապարներից յուրաքանչյուրը կարգային առումով նույնական էլք է ունենում, այսինքն՝ գոյական երկանդամով բարդությունը գոյական է, ածական երկանդամով բարդությունը՝ ածական, մակբայ երկանդամով բարդությունը՝ մակբայ: Կազմավորման էլքի իմաստով սրանց հակադրվում է V + V կաղապարը, որը, ունենալով արժույթային ինքնակերտություն, բայական երկանդամ համակցությամբ ձևավորվում է որպես այլակերտություն, այսինքն՝ վերջին կաղապարով ստեղծվող բարդությունը գոյական է:

- (1) **Գոյական երկանդամով ինքնակերտ կաղապար:** Լ. Բլումֆիլդը նշում է, որ այս կարգի բարդությունների մեջ «... կան երկու գոյականներով բաղադրություններ՝ door knob, horsefly, bedroom, salt-cellar, tomcat, որոնք չեն հանդիպում անգլերենի շարահյուսության մեջ» [Bloomfield 1949, 254]: Լ. Բլումֆիլդի հետևողությամբ Օ. Մեշկովը [N+N]-ը համարում է ապաշարահյուսական կաղապար [Мешков 1976, 218]: Իր

լիակատար ինքնակերտությամբ սա դեպի ներս ուղղված նշանային հարաբերություն ցույց տվող կամ, ըստ Օ. Մեշկովի, ներկենտրոն կաղապար է [Мешков 1976, 218]:

- (2) **Ածական երկանդամով ինքնակերտ կաղապար:** Ածական զուգանդամով ձևավորված ածականական բարդություն է, ուստի նախորդի նման լիակատար ինքնակերտություն ունենալով՝ [A + A]-ն ներկենտրոն նշանային հարաբերություն ցույց տվող կաղապար է (dark-blue):
- (3) **Մակբայ երկանդամով ինքնակերտ կաղապար:** Այս երկանդամով բաղադրված բարդությունը ևս լիակատար ինքնակերտություն ունի, հետևաբար նախորդ կաղապարների նման [D + D]-ն ևս ներկենտրոն նշանային հարաբերությամբ օժտված կաղապար է՝ elsewhere:
- (4) **Ինքնակերտ արժույթով բայական այլակերտ երկանդամ կաղապար:** Ինչպես ասվեց, և ինչպես բխում է այս կաղապարի խորագրից, սերող և բաղադրող բայական երկանդամ համակցությունից այլակերտ բարդություն է սերվում՝ գոյական: Այլակերտությունը հուշում է, որ, ի տարբերություն նախորդ կաղապարների, [V + V] կաղապարի դեպքում գործ ունենք դեպի դուրս ուղղված կամ արտակենտրոն նշանային հարաբերության հետ՝ hearsay: Ըստ Օ. Մեշկովի՝ սա նույնպես ապաշարահյուսական կաղապար է [Мешков 1976, 232] :
- (5) **Այլակերտ արժույթներով կաղապարների բնութագիրը: Գոյական՝ սերող և ածական՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [N + A]-ն ապաշարահյուսական կաղապար է: Այս նշանային կաղապարի բաղադրող հիմք են ծառայում հիմնականում -rich, -poor, -free, -tight, -resistant, -worthy, -proof բաղադրիչները: Բերենք համապատասխան օրինակներ այս կաղապարով՝ iron-rich, oxygen-poor, vibration-free, airtight, fire-resistant, fool-proof:

- (6) **Գոյական՝ սերող և բայ՝ բաղադրող հիմքով կաղապար:** [N + V] կաղապարի բայական հատվածը՝ բաղադրող հիմքը, իրացվում է գերունդիումով և 1-ին ու 2-րդ դերբայներով: Բերենք համապատասխան օրինակներ՝ handwriting (-writing – գերունդիում), top-selling (-selling – 1-ին դերբայ), coffee-stored (-stored – 2-րդ դերբայ):
- (7) **Գոյական՝ սերող և մակբայ՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [N + D] կաղապարի իրացման նմուշ կարող է ծառայել whites-only բարդությունը:
- (8) **Ածական՝ սերող և գոյական՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [A + N]-ը ներկենտրոն նշանային ուղղվածությամբ գոյականակերտ բարդություն է: Օ. Մեշկովը սա շարահյուսական կաղապար է համարում, քանի որ բարդության բաղադրական հիմքերի շարադասությունը համընկնում է բառակապակցական միավորների շարադասությանը [Мешков 1976, 222 - 223]: Բերենք օրինակներ՝ busybody, freshman, hotbed և այլն:
- (9) **Ածական՝ սերող և բայ՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [A + V] կաղապարն իրացվում է բաղադրող հիմքում առաջին և երկրորդ դերբայների արտահայտությամբ. այս դիրքում գերունդիում չի լինում: Այս կաղապարի՝ բաղադրող հիմքի կազմում առաջին դերբայով տարբերակի դեպքում ձևավորվում են high-flying տիպի ածականական բարդություններ, իսկ նույն դիրքում երկրորդ դերբայի առկայությամբ կազմվում են clean-cut տիպի ածականական բարդություններ: Կաղապարը մոտ է ներկենտրոն նշանային ուղղվածություն ունեցող ձևատիպարներին, քանի որ, ըստ Օ. Մեշկովի, 1-ին դերբայը՝ որպես բաղադրող հիմք, իր շատ տվյալներով հիշեցնում է ածականական գործառույթ [Мешков 1976. 235]:
- (10) **Ածական՝ սերող և մակբայ՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [A + D]-ն պարզ կաղապար է. բաղադրող հիմքում գերազանցապես

հանդես է գալիս -ever մակբայակերպ բաղադրիչը, օրինակ՝ greatest-ever: Այս կաղապարին պատկանող մեկ այլ օրինակ էլ է բերում Օ Մեշկովը՝ nearby [Мешков 1976. 238]:

- (11) **Բայ՝ սերող և գոյական՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [V + N]-ը շարահյուսական կաղապար է, քանի որ արդի անգլերենում հնարավոր է նույն շարադասությամբ շարութային կաղապար: Ներկենտրոն նշանային ուղղվածություն ունի, որովհետև ներկայացված կաղապարով տեղի է ունենում բաղադրող հիմքի կարգային իմաստին համապատասխանող (այսինքն՝ գոյականական) նշանասերում. օրինակ՝ cut-throat, pickpocket, turncoat և այլն:
- (12) **Բայ՝ սերող և ածական՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [V + A] կաղապարով speak-easy տիպի սակավաթիվ բարդություններ են առկա:
- (13) **Բայ՝ սերող և մակբայ՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [V + D] կաղապարով ձևավորվում են go-between տիպի բարդություններ:
- (14) **Մակբայ՝ սերող և գոյական՝ բաղադրող հիմքերով կաղապար:** [D + N] կաղապարն ապաշարահյուսական է, որովհետև նման շարադասությամբ և մանավանդ կապակցությամբ շարահյուսական կառույցներ չկան: Ինչ վերաբերում է կաղապարի նշանային ուղղվածությանը, ապա այն իբրև արդյունք բաղադրող հիմքին համապատասխանելու, այսինքն՝ գոյականական նշանասերում իրականացնելու դեպքում ներկենտրոն է, իսկ ածականական նշանասերման դեպքում, երբ չեն նույնանում բաղադրող հիմքն ու կաղապարային ձևավորվածության արդյունքը, արտակենտրոն է: Այս բարդությամբ կաղապարի սերող հիմքում ամենից կենսունակը after- մակբայական բաղադրիչն է: Բերենք օրինակներ դիտարկվող կաղապարով՝ afterclap, aftercrop, outpost, overcoat, underclothes և այլն:

(15) **Մակբայ' սերող և ածական' բաղադրող հիմքերով կաղապար:** [D + A] կաղապարով սերվում են ever-green կամ upright տիպի բարդություններ:

(16) **Մակբայ' սերող և բայ' բաղադրող հիմքերով կաղապար:** [D + V] կաղապարը շարահյուսական է, քանի որ հնարավոր է նույն շարահասությամբ շարահյուսական կապակցություն: Նշանային ներկենտրոն ուղղվածություն ունի, եթե սերման արդյունքի և բաղադրող հիմքի կարգային իմաստները նույնական են (բայ), արտակենտրոն է, եթե սերման արդյունքը գոյական է. օրինակ՝ overdo (ներկենտրոն), inlet (արտակենտրոն):

Ի մի բերելով երկանդամ բարդությունների կաղապարների հավաքածուն՝ այժմ կարող ենք դրանք ներկայացնել լեզվի տրամաբանական, հոգեբանական և նյութական (խոսքային) շերտերի հարաբերակցությամբ (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Երկանդամ բարդությունների լեզվական կաղապարները և դրանց հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները⁶

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. N + N	N + room	bedroom
2. A + A	A + blue	dark-blue
3. D + D	D+ where	elsewhere
4. V + V	V + say	hearsay
5. N + A	N + poor	oxygen-poor
6. N + V	N + writting	handwritting
7. N + D	N + only	whites-only
8. A + N	A + bed	hotbed
9. A + V	A + flying	high-flying
10. A + D	A + ever	greatest-ever

Աղյուսակ 13-ի շարունակությունը

11. V + N	V + throat	cut-throat
12. V + A	V + easy	speak-easy
13. V + D	V + between	go-between
14. D + N	D + clap	afterclap
15. D + A	D + green	ever-green
16. D + V	D + do	overdo

Բ. Ձևակազմական հիմքի բնութագիրը: Ժամանակակից անգլերենը, լինելով անջատական տիպի լեզու, անվանական խոսքի մասերի տիրույթում ձևակազմական սահմանափակ հնարավորություններ ունի: Գոյականի մեջ այդ հնարավորությունը դրսևորվում է նախդրիվ բառաձևերով, որ նշանակում է, թե դրանք վերլուծական կազմություն ունեն, անորոշ, որոշիչ և ստացական հոդերով, որոնցից առաջին երկուսը գոյականի հետ վերլուծական կազմություն են ներկայացնում, իսկ երրորդը՝ համադրական: Այդ կազմությունների մեջ հոդերն ու նախդիրները ցուցանշաններ են: Ածականները և մակբայները բաղդատական ու գերադրական աստիճաններում ունեն թե՛ համադրական, թե՛ վերլուծական դրսևորումներ: Սրանց ազդանշանները հե՛նց աստիճանակազմ ցուցիչներն են: Ձևակազմության տիրույթում հիմքակազմական բարդ պատկեր է ներկայացնում անգլերենի խոնարման համակարգը, որի քննությանն էլ անցնում ենք ստորև:

Ժամանակակից անգլերենի՝ բայահիմքերով պայմանավորված նշանային բաղադրությունների աստիճանական բնույթը: Անգլերենի հիմքակազմության առանձնահատկություններն ու օրինաչափությունները վեր հանող հետաքրքրական ուսումնասիրություններից է Մարկ Բլոխի «Անգլերենի տեսական քերականության դասընթացի» 10-րդ գլուխը [Blokh 1983, 85-102], որը, սակայն, կողմնակիորեն է օգնել մեզ՝ վստահության մղելով՝ անգլերենում տիպաբանական առումով դիմելու բայի հիմքակազմության առավել ընդհանրական խմբերի առանձնացմանը [Կե՛ս նաև Թոքմաջյան 1995, 65 – 99, 135-161]:

1. Ինչպես հայերենում, անգլերենում ևս բայական հիմքերի համար ամենից ընդհանրական ու հարմար տիպավորումը դրանք **համադրակազմ** և **վերլուծակազմ** խմբերով ներկայացնելն է⁷: Բոլոր համադրական ձևերը կազմվում են անորոշի (infinitive) հիմքից: Այս նույն հիմքից կազմվում են նաև վերլուծական ձևեր, իսկ մնացած վերլուծական ձևերը կազմվում են երկու այլ հիմքերից: Բացի անորոշի հիմքից կազմվող ձևերից՝ մնացած վերլուծական բայաձևերի հիմքում առաջին և երկրորդ դերբայներն են (the Participle I, the Participle II), ուստի, սրանց բովանդակային բեռնվածության համապատասխան, առաջին դերբայով վերլուծական հիմքն անվանում ենք **տևակազմ հիմք**, քանի որ սրանով և համապատասխան ձևորդներով (formant) է կազմավորված շարունակական ժամանակների հարացույցը, իսկ երկրորդ դերբայով հիմքը՝ **ավարտակազմ հիմք**, քանի որ սա էլ նեցուկ է վաղակատար ժամանակների հարացույցի համար:

2. *Անորոշի համադրակազմ հիմքից* ձևավորվում են՝

- ա) անորոշ ներկան (the Present Indefinite Tense)՝ զրո և ս նշույթներով (վերջինով կազմվում է եզակի 3-րդ դեմքը)՝ ask(s), answer(s),
- բ) երկրորդ ածական դերբայը (երրորդ ձևը)՝ asked, answered,
- գ) առաջին ածական դերբայը (չորրորդ ձևը)՝ asking, answering,
- դ) անորոշ պարզ անցյալը (the Past Indefinite Tense)՝ asked, answered,
- ե) բուն հրամայականը՝ զրո նշույթով (the Imperative)՝ ask, answer,
- զ) գերունդիումը (the Gerund)՝ asking, answering:

Անորոշ ներկան (բացի եզակի երրորդ դեմքից), բուն հրամայականը, ստորադասական ներկան և անորոշի հիմքը **հակադրության չեզոքացում** են հանդես բերում [չեզոքացման մասին *տե՛ս* է. Աղայան 1967, 56–68], որը վերանում է շարահյուսական ու ստորոգական մակարդակներում: Նույնպիսի չեզոքացում են հանդես բերում անորոշ անցյալը, երկրորդ դերբայը և ստորադասական անցյալը. այս չեզոքացումը ևս վերանում է նույն մակարդակներում: Հակադրության չեզոքացում կա նաև առաջին դերբայի և գերունդիումի միջև. այս դեպքում նույնպես չեզոքացումը վերանում է նշված մակարդակներում:

3. *Անորոշի վերլուծակազմ հիմքից* ձևավորվում են՝

- ա) անորոշ դերբայը՝ to ask, to answer,

բ) անորոշ ապառնիս (the Future Indefinite Tense)՝ (I/we) shall/will ask, (you/he/she/they) will answer,

գ) անցյալի ապառնիս (the Future Indefinite in the Past Tense)՝ (I/we) should/would ask, (they) would answer,

դ) անորոշ ներկայի և անորոշ անցյալի ժխտական (Negative) ու հարցական (Interrogative) ձևերը՝

(I/you/we/they) don't ask. (He/she) doesn't ask.

Do (I/you/we/they) ask? Does (he/she) ask?

(I/you/he/she/we/they) didn't ask. Did (I/you/he/she/we/they) ask?

ե) սաստկա-հայցական հրամայականը՝ do ask, do answer,

զ) արգելական հրամայականը՝ don't ask, don't answer,

է) հորդորական հրամայականը՝ let's ask, let's answer,

ը) ենթադրական եղանակի (the Suppositional Mood) անորոշը (= ենթադրական անորոշը)՝ (I/you/...they) should ask,

թ) պայմանական եղանակի (the Conditional Mood) անորոշը (= պայմանական անորոշը)՝ (I/we) should/would ask. (you/he/she/they) would ask:

Ի մի բերելով անորոշի վերլուծական հիմքի կազմաբանությունը՝ պարզում ենք, որ նշված հիմքից բաղադրված ձևերում հակադրության չեզոքացում են հանդես բերում սահմանական անցյալի ապառնի, ենթադրական ու պայմանական եղանակների բայաձևերը (հմմտ. **գ**, **է**, **ը** կետերը). չեզոքացումը վերանում է ասութային ու վերասութային մակարդակներում:

4. *Տևակազմ հիմքի* կազմաբանությունը սրանից բաղադրվող բայաձևերի մեջ հետևյալ առանձնահատկություններն է դրսևորում.

ա. Շարունակական ժամանակների կազմում այս հիմքը միշտ բաղադրյալ է, քանի որ այն՝ որպես առաջին դերբայ, արդեն անորոշի հիմքից -ing դերբայակերտով կազմավորված բայաձև է:

բ. Այս -ing-ով ձևավորված վերլուծակազմ հիմքը, որ միշտ բաղադրյալ է, ինքնին կարող է լինել համադրական և վերլուծական (ինչպես կոտեսնենք ստորև, այդպես է նաև ավարտակազմ հիմքի պարագայում):

գ. Տևակազմ հիմքը բաղադրյալ համադրական բայաձև է ներկայացնում՝

ա) ներկա և անցյալ շարունակական ժամանակների (the Present Continuous Tense, the Past Continuous Tense) դրական ու ժխտական խոնարհման և հարցական ձևերում՝ I am asking. I am not asking. Am I asking?

He/she is asking. He/she isn't asking. Is he/she asking?

You/we/they are asking. You/we/they aren't asking. Are you/we/they asking?

I/he/she was asking. I/he/she wasn't asking. Was I/he/she asking?

We/you/they were asking. We/you/they weren't asking. Were we/you/they asking?

բ) ստորադասական շարունակականում (the Subjunctive Continuous Tense)՝

I/you/...they were asking.

դ. Մնացած ձևերում գործ ունենք բաղադրյալ վերլուծական դրսևորումների հետ: Բաղադրյալ վերլուծական հիմքով են կազմվում՝

ա) ապառնի շարունակական ժամանակի (the Future Continuous Tense) դրական, ժխտական և հարցական ձևերը՝

I/we shall/will be asking. You/he/she/they will be asking.

I/we shall/will not be asking. You/he/she/they won't be asking.

Shall/will I/we be asking? Will you/he/she/they be asking?

բ) անցյալի ապառնի շարունակականը (the Future Continuous in the Past Tense)՝

I/we should/would be asking.

You/he/she/they would be asking.

գ) ներկա վաղակատար շարունակականը (the Present Perfect Continuous Tense)՝ դրական, ժխտական ու հարցական դրսևորումներով՝

I have been asking. I haven't been asking. Have I been asking?

դ) անցյալ վաղակատար շարունակականը (the Past Perfect Continuous Tense)՝ դրական, ժխտական ու հարցական ձևերով՝

I had been asking. I hadn't been asking. Had I been asking?

ե) ապառնի վաղակատար շարունակականը (the Future Perfect Continuous Tense)՝ դրական, ժխտական, հարցական ձևերով՝

I/we shall/will have been asking. You/he/she/they will have been asking.

I/we shall/will not have been asking. You/he/she/they willn't have been asking.

Shall/will I/we have been asking? Will you/he/she/they have been asking?

զ) անցյալի ապառնի վաղակատար շարունակականը (the Future Perfect Continuous-in-the-Past Tense)՝ He would have been asking.

է) ստորադասականի վաղակատար շարունակականը (Subjunctive Perfect Continuous Tense)՝

I had been asking.

ը) ենթադրականի շարունակականը (the Suppositional Continuous Tense)՝ I had been asking.

թ) պայմանականի շարունակականը (the Conditional Continuous Tense)՝ I should be asking:

Ի մի բերելով տևակազմ հիմքի կազմաբանությունը՝ պարզում ենք հետևյալը.

ա) Բաղադրյալ համադրական հիմքից կազմվող ձևերում հակադրության չեզոքացում են ունենում մի կողմից՝ անցյալ շարունակական ժամանակի հոգնակի, մյուս կողմից՝ ստորադասական եղանակի շարունակականի թե՛ եզակի, թե՛ հոգնակի բայաձևերը, ըստ որում՝ ստորադասականի շարունակականի եզակի ու սահմանականի անցյալ շարունակականի հոգնակի ձևերի չեզոքացումը վերանում է անմիջապես նախադասության կազմում՝ եզակի ու հոգնակի ենթակաների ցայտուն առկայությամբ, իսկ նույն բայաձևերի հոգնակի թվերի չեզոքացումը, փաստորեն, առավել բարձր՝ վերաստօթային մակարդակում է վերանում:

բ) Այս նույն հիմքից կազմվող ձևերում չեզոքացումն առկա է անցյալ վաղակատար շարունակականի և ստորադասականի վաղակատար շարունակականի դրական խոնարհման ձևերում (հմմտ. **դ** և **է** կետերը) և անցյալի ապառնի շարունակական, ենթադրականի շարունակական ու պայմանականի շարունակական ձևերում (հմմտ. **բ**, **ը**, **թ** կետերը). թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում չեզոքացումը վերանում է վերաստօթային մակարդակում:

գ) Բաղադրյալ վերլուծական հիմքերը լինում են **երկբաղադրիչ** և **եռաբաղադրիչ**. եռաբաղադրիչ հիմքերը, փաստորեն, **զուգալույծ** են. սրա հարաբերությամբ երկբաղադրիչ հիմքերը **մենալույծ** են: **Մենալույծ են մեկ վերլուծական ձև ներկայացնող հիմքերը**: Այդպիսի հիմքեր ունեն ապառնի շարունակական և անցյալի ապառնի շարունակական, ներկա վաղակատար

շարունակական և անցյալ վաղակատար շարունակական, ստորադասականի վաղակատար շարունակական, ենթադրականի շարունակական և պայմանականի շարունակական բայաձևերը: **Չուզալույծ են երկու վերլուծական ձև ներկայացնող հիմքերը:** Այդպիսի հիմքեր ունեն ապառնի վաղակատար շարունակական և անցյալի ապառնի վաղակատար շարունակական բայաձևերը:

դ) Պարզելու համար՝ վերլուծակազմ հիմքերից ո՛րն է վերլուծական և ո՛րը՝ համադրական, դիմում ենք ստուգողական մեթոդի օգնությամբ՝ համեմատելով համապատասխան բայական բաղադրությունները մի կողմից՝ դրական, մյուս կողմից՝ ժխտական ու հարցական կազմություններում: Դիցուք ունենք I am asking և You will be asking օրինակները. հարկ է պարզել, թե որոնք են բայի այն մասերը, որոնցից՝ որպես հիմքերի, կազմվում են դիմավոր բայաձևերը: Դրա համար ներկայացնում ենք թե՛ մեկի և թե՛ մյուսի ժխտական ու հարցական փոխակերպները.

(1) I am asking. - I am not asking. - Am I asking?

(2) You will be asking. - You will not be asking. - Will you be asking?

Դիտարին է նկատել, որ բայական հիմքն այն կայուն հատվածն է, որին նախորդում են փոխակերպիչները՝ ենթական, օժանդակ բայը և ժխտական նշույթը: Ըստ այդմ՝ (1) օրինակում հիմքն է՝ asking, (2) օրինակում՝ be asking. նշանակում է՝ 1-ինի վերլուծակազմ հիմքը համադրական է, 2-րդի վերլուծակազմ հիմքը՝ վերլուծական: Այս նույն եղանակով հնարավոր է պարզել, թե վերլուծական հիմքերից ո՛րն է մենալույծ, ո՛րը՝ զուգալույծ: Այսպես՝ համեմատելով You will be asking և You will have been asking օրինակները՝ պարզում ենք, որwill be asking օրինակում վերլուծական հիմքը մենալույծ է՝ /be + asking/, իսկwill have been asking օրինակում՝ զուգալույծ՝ [have + been] և [been + asking], որն ապացուցվում է հետևյալ փոխակերպումներով՝

You will be asking. - You won't be asking. - Will you be asking?

You will have been asking. - You won't have been asking. - Will you have been asking?

ե) Առավել ուշադիր զննելով հիմքակազմության՝ նախորդ (**գ** և **դ**) կետերում նկատած օրինաչափությունը՝ պարզում ենք, որ կրկնալույծ հիմքը դերբայական է այնքանով, որքանով առաջին դերբայն է առկա այդ հիմքի կազմում: Ըստ էության՝

սա ոչ թե դերբայական հիմք է, այլ **դերբայական ենթահիմքով դիմավոր-ժամանակային հիմք**, այսինքն՝ ապառնի վաղակատար շարունակականի և սրա անցյալի հիմքը **վաղակատար ներկա շարունակականի ձևն է**: Սա հուշում է, որ տևակազմ վերլուծական հիմքերի ևս երկու ներքին խմբավորում կարելի է անել, այն է՝ **դերբայական** և **դիմավոր**, որով ունենում ենք տարբեր մոտեցումներով տիպավորած խմբերի սահմանային զուգադիպություն. **դերբայական են մենալուծ հիմքերը, դիմավոր են զուգալուծները**:

5. *Ավարտակազմ հիմքը* ևս միշտ բաղադրյալ է, քանի որ այն նվազագույն բաղադրության մեջ իսկ ձևավորված բայ է, այն է՝ բայի երրորդ ձևը՝ երկրորդ դերբայը: Նախորդ հիմքի պես սա ևս կարող է լինել համադրական և վերլուծական՝ այն տարբերությամբ, որ սրա վերլուծական հիմքը միայն մենալուծ է և միշտ՝ դիմավոր:

Ավարտակազմ հիմքով ձևավորվում են՝

ա) ներկա վաղակատարը (the Present Perfect Tense)՝ դրական, ժխտական ու հարցական ձևերով. օրինակ՝

I have asked. He/she has asked.

I haven't asked. He/she hasn't asked.

Have I asked? Has he/she asked?

բ) անցյալ վաղակատարը (the Past Perfect Tense)՝ դրական, ժխտական ու հարցական ձևերով. օրինակ՝

You had asked. I hadn't asked. Had I asked?

գ) ապառնի վաղակատարը (the Future Perfect Tense)՝ դրական, ժխտական, հարցական ձևերով՝ I shall/will have asked. I shall/will not have asked. Shall/will I have asked?

դ) անցյալի ապառնի վաղակատարը (the Future Perfect in the Past Tense)՝

We should/would have asked.

ե) ստորադասականի վաղակատարը (the Subjunctive Perfect Tense)՝

I/you/they had asked.

զ) ենթադրականի վաղակատարը (the Suppositional Perfect Tense)՝

I/you/they should have asked.

է) պայմանականի վաղակատարը (the Conditional Perfect Tense)՝

I should/would have asked.

Ավարտակազմ հիմքերից կազմվող բայաձևերի մեջ, ըստ վերն արված դիտարկումների, չեզոքանում են սահմանական անցյալ վաղակատարի ու ստորադասականի վաղակատարի (տե՛ս ք և ք կետերը) և մասամբ ենթադրականի վաղակատարի ու պայմանականի վաղակատարի (տե՛ս **զ** և **է** կետերը) հակադրությունները:

6. *Ավարտակազմ հիմքերից կազմվող բայաձևերի հակադրության չեզոքացման* պատկերը ներկայացնելիս ստիպված ենք տալ նաև արդի անգլերենի բայի ձևակազմական համակարգի վերջին տասնամյակների տեղաշարժը՝ այդ լեզվի պատմական քերականության նորագույն տվյալների հաշվառմամբ: Բանն այն է, որ մինչև անցյալ դարի 80-ական թվականները բրիտանական անգլերենի սահմանական ապառնի, ապառնի շարունակական, ապառնի վաղակատար, անցյալի ապառնի վաղակատար, ապառնի վաղակատար շարունակական, անցյալի ապառնի վաղակատար շարունակական, պայմանական, պայմանականի շարունակական, պայմանականի վաղակատար շարունակական և պայմանականի անցյալի ապառնի վաղակատար շարունակական եղանակաժամանակային հարացույցների եզակի և հոգնակի առաջին դեմքերում դեռևս կանոնիկ էին համարվում համապատասխանաբար *shall* և *should* ապառնի և անցյալի ապառնի ցուցիչներով ձևերը. երկրորդ և երրորդ դեմքերի եզակի և հոգնակի թվերում հանդես էին գալիս *will* և *would* ցուցիչները: Նշված գործառությամբ վերոթվարկյալ եղանակաժամանակային ձևերի 1-ին դեմքը հստակ հակադրության մեջ էր 2-րդ և 3-րդ դեմքերի հետ: Այսօր, սակայն, համաբանության հետևանքով 1-ին դեմքում ևս *shall* և *should* ձևերին զուգահեռ գործածվում են *will* և *would* ցուցիչները՝ առաջ բերելով մի կողմից՝ առաջին, մյուս կողմից՝ երկրորդ ու երրորդ դեմքերի հակադրության չեզոքացում: Մինչև 20-րդ դարի 80-ականները, շնորհիվ այդ շրջանում գործառող նշված եղանակաժամանակային ձևերի առաջին դեմքի՝ մյուս դեմքերի նկատմամբ ունեցած հստակ տարբերության, հակադրության չեզոքացում կար պայմանական ու ենթադրական (*should ask – should ask*), պայմանականի շարունակական ու ենթադրականի շարունակական (*should be asking – should be*

asking), պայմանականի վաղակատար ու ենթադրականի վաղակատար (should have asked – should have asked), պայմանականի վաղակատար շարունակական ու ենթադրականի վաղակատար շարունակական (should have been asking – should have been asking) ժամանակների առաջին դեմքի ձևերի միջև: Մինչդեռ պատկերն այսօր փոխված է տրամագծորեն. 1) ներհարացուցային միավորների հակադրության չեզոքացումը հանգեցրել է բոլոր դեմքերի նույնացման. 2) այս նույնացումը հանգեցրել է միջհարացուցային միավորների չեզոքացման վերացման՝ գրեթե հասցնելով դրանց բացարձակ հակադրության. այսինքն՝ փակագծերում բերված օրինակները՝ իբրև չեզոքացման դրսևորումներ, այլևս պատմական իրողություն են. ներկայումս դրանք բոլոր դեմքերում հստակ հակադրության մեջ են (հմմտ. would ask – should ask, would be asking – should be asking, would have asked – should have asked, would have been asking – should have been asking):

Ձևակազմական հիմքերի դիտարկումն ավարտենք սրանց նշանային արժեքի վերհանմամբ: **Յուրաքանչյուր բայահիմք ազդանշան է համապատասխան ժամանակաձևի առկայության, և յուրաքանչյուր ժամանակային ձև տվյալ հիմքի գոյության ցուցանշան է:** Այսպես՝ տևակազմ հիմքը սրանով ձևավորվող տարաբնույթ շարունակական ժամանակների ազդանշանն է, ավարտակազմ հիմքը՝ մոտ կամ վաղ անցյալում ավարտված ժամանակի ազդանշանը: Համապատասխանաբար այս կամ այն ժամանակն իր ներսում անխուսափելիորեն գործող հիմքի ցուցանշանն է [Glinz 1971, 172-186]:

3. 2 Նշանային բաղադրությունները վերբառային մակարդակներում

Ա. Ասույթի և շարույթի նշանային հարաբերակցությունը: Պարզելու համար, թե ինչ հարաբերության մեջ են ասույթը և ասույթ բաղադրող շարույթները, դիտարկենք 1-ին գլխում այլ նկատառումներով քննված նախադասությունը՝ վերցված Մարկ Բլոխի հիշատակված գրքից:

The small lady listened to me attentively.

Նախադասության կառուցվածքը կարող ենք քննել տարբեր մոտեցումներով:

Անմիջական բաղադրիչների (ԱԲ) [Bloomfield 1949, 160–162] տեսակետից նախադասությունը, ըստ ընդունված կարգի, կարող ենք երկփեղկել անվանական և

բայական խմբերի, ապա՝ այլ երկփեղկումների՝ սահմանելով որոշակի աստիճանակարգություն և հասնելով շարահյուսական նվազագույն անդամին.

Առաջին աստիճան

1. the small lady
2. listened to me attentively

Երկրորդ աստիճան

1. listened to me
2. listened attentively

Երրորդ աստիճան

1. small
2. lady
3. listened
4. to me
5. attentively

Բերված նախադասության կաղապարը, նկատի ունենալով ներկաղապարային նշանների պարտադրականության հանգամանքը (կաղապարի բնորոշման հարաչափերն են պարտադրականությունը, քանակը, դիրքը [Ջահուկյան 1974, 11]), կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

1-ին տարբերակ՝ [The (small) lady listened (to me (attentively))]:

2-րդ տարբերակ՝ [(A +) N + V (+ N_v (+ D))]:

Ուղիղ փակագծերը նախադասության պարունակի նշաններն են, որոնք նշանակում են տրամաբանական մի տիրույթ, որի ներսում կատարվում է ստորոգային նշանասերում: Կոր փակագծերը նշաններն են իրենց ներսում եղած անդամների ոչ պարտադրականության. տվյալ դեպքում դրանք հուշում են, որ նախադասության ողնաշարը կպահպանվեր, եթե նրանում չլինեին որոշիչը (small – A), հանգման անուղղակի խնդիրը (to me – N_v) և ձևի պարագան (attentively – D): Իսկ կոր փակագծերից դուրս մնացած անդամները նշան են դրանց միջուկային բաղադրիչներ լինելու, այսինքն՝ պարտադրական անդամներ են, առանց որոնց նախադասություն չի լինի: N_v-ն մյուս գոյականից (N)՝ ենթակայից, տարբեր գոյական

է. Վ. ցուցանշանը հուշում է, որ դրա մոտի գոյականը բայական բաղադրիչի կազմում է [տե՛ս նաև Jespersen 1969, 71-77]:

Շարութաբանական տեսակերից բոլորովին այլ աստիճանակարգություն կունենանք, որովհետև անմիջական բաղադրիչների և առհասարակ շարահյուսական բազմաթիվ մեթոդների նպատակը հե՛նց վերլուծությունն է, մինչդեռ շարութաբանական քննության նպատակը վերլուծությունն ու համադրությունն է, որոնք ևս իրականացվում են որոշակի մակարդակավորմամբ: Առաջին աստիճանում արտածում ենք բոլոր երկանդամները, երկրորդ աստիճանում՝ եռանդամները, երրորդում՝ երկանդամների հատումով գոյացած մենանդամ շարույթները, ապա՝ քառանդամները, հնգանդամները և այլն, մինչև վերջնական վերահամադրում: Հաստատված է, որ առհասարակ նախադասության անդամների հարաբերության թիվը մեկով պակաս է նախադասության անդամների թվից, այսինքն՝ ո թվով անդամների առկայության դեպքում կունենանք անդամների $n - 1$ հարաբերություն [Атаян 1968, 125]: Ինչ վերաբերում է շարույթների աստիճանակարգությանը, ապա դրանց աստիճանների թիվը, չորրորդ մակարդակից սկսած, հավասար է տվյալ շարահյուսական կառույցի անդամների թվին: Սա պայմանավորված է հետևյալով: Առաջին աստիճանը կամ մակարդակը՝ իր մակարդակային համարով, շարույթի անդամների հետ չի կարող ունենալ հավասարություն, քանի որ սկզբնական նվազագույն շարույթը երկանդամ շարահյուսական կառույց է: Սրանից հետևում է, որ եռանդամ շարահյուսական կառույցով շարույթները տեղայնացված են երկրորդ մակարդակում: Երրորդում նույնպես հավասարությունը բացառված է այդ մակարդակի թվահամարի և շարույթ բաղադրող անդամների միջև, քանի որ երրորդ մակարդակում ենք բացահայտում երկանդամ շարույթների հատումով գոյացած մենանդամ շարույթը. հատումը հնարավոր է դառնում, քանի որ եռանդամ կառույցի կազմում կա երկու երկանդամ՝ մեկ ընդհանուր միավորով, և դա հենց երկանդամների հատման արդյունքն է: Ահա սրան հաջորդող չորրորդ մակարդակից է սկսվում շարութաբանական կառույցի անդամների և մակարդակների թվահամարների հավասարությունը:

The small lady listened to me attentively նախադասության դիտարկումն ըստ մակարդակների բացահայտում է հետևյալ պատկերը.

Առաջին մակարդակ՝ Երկանդամ կառույցով շարույթների հարացույցը

1. the small lady
2. (the) lady listened
3. listened to me
4. listened attentively

Երկրորդ մակարդակ՝ Եռանդամ կառույցով շարույթների հարացույցը

1. the small lady listened
2. (the) lady listened to me
3. (the) lady listened attentively
4. listened to me attentively

Երրորդ մակարդակ՝ մենանդամ կառուցազերծ շարույթների հարացույցը

1. lady
2. listened

Չորրորդ մակարդակ՝ քառանդամ կառույցով շարույթների հարացույցը

1. the small lady listened to me
2. the small lady listened attentively
3. (the) lady listened to me attentively

Հինգերորդ մակարդակ՝ հնգանդամ կառույցով շարույթը կամ լիաշարույթը [Գ.

Ջաահուկյան 1989 // ԲԵՀ, , հմ. 1]

The small lady listened to me attentively.

Դիտարկվող շարույթների՝ որպես ստորոգային գերնշանի կաղապարային աղյուսակը կունենա հետևյալ պատկերը (աղյուսակ 14).

Աղյուսակ 14

Ստորոգային գերնշանի կաղապարային աղյուսակը

[The (small) lady listened (to me (attentively))] [(A +) N + V (+ N _v (+ D))]				
1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	4-րդ մակարդակ	5-րդ մակարդակ

Աղյուսակ 14-ի շարունակությունը

A + N	A + N + V	N	A + N + V + N _v	A+N+V+N _v +D
N + V	N + V + N _v	V	A + N + V + D	0
V + N _v	N + V + D	V	N + V + N _v + D	0
V + D	V + N _v + D	V	0	0

Աղյուսակի վերաբերյալ հարկ ենք համարում որոշ պարզաբանումներ տալ:

Ա) Քանի որ լիաշարույթը մեկ հնգանդամ կառույց է, ապա աղյուսակի մեջ այն պետք է ներկայացվեր մեկ վանդակում. դա է պատճառը, որ 5-րդ մակարդակի 2-րդ, 3-րդ և 4-րդ վանդակները «գրոյացվել» են: Բ) «Ձրոյացվել» է նաև 4-րդ մակարդակի 4-րդ վանդակը, քանի որ դիտարկվող կառույցում շարահյուսական երեք քառանդամ բաղադրություն ունենք: Գ) Շարույթների հարացույցը նկարագրելիս 3-րդ մակարդակի շարադրանքում երկու մենանդամ շարույթ ենք արտածել: Բերված աղյուսակի երրորդ մակարդակում դրանք չորսն են: Այդ չորս մենանդամներն արտածված են չորս եռանդամ կառույցներից, և դրանցից յուրաքանչյուրին իրոք համապատասխանում է մեկական ընդհանուր անդամ (ընդհանուր կենտրոնական տարրով երկու կամ ավելի երկանդամ խմբերից բաղկացած կառուցվածքն է. Աթայանն անվանում է **փնջային խումբ** [Атаян 1968, 217]), այսինքն՝ մենանդամ շարույթ (նույն ընդհանուր անդամը շարակազմում ստանձնում է մենանդամ շարույթի դեր [Գիլզադեան 1996, 42-59: Giulzadian 2001, 169-173]): Սակայն նման դեպքերում կատարում ենք նույնացումներ, և ինչպես ակներև է աղյուսակի 3-րդ մակարդակի 2-րդ և 4-րդ վանդակներից, տարբեր համակցումների դիմաց ունենք միևնույն ընդհանուր անդամը՝ V (listened): Սա նշանակում է, որ իրականում երկու մենանդամ շարույթ ունենք՝ գոյականական և բայական արտահայտությամբ, որոնցից բայականը եռակի արտածման հնարավորություն է տալիս, միայն թե դա՝ միևնույն գերշարույթի կազմում [հմմտ. Chomsky 1965, 8-25]:

Որպես այս հատվածի ամփոփում նշենք, որ ածանցականից մինչև ստորոգային կամ ասութային նշանասերում առաջնորդվել ենք միևնույն սկզբունքով՝ չորս վերացարկված հասկացական դասի, դրանց կարգային համարժեքների և չորս

խոսքամասային հարաբերությունների համասեռության ու նույնականության մոտեցումներով: Նույն սկզբունքն է գործում նաև բարդ ստորադասական նախադասության ստորադաս բաղադրիչների տեսակները որոշելիս, որոնց, սակայն, ավելորդ ենք համարում անդրադառնալը միանգամայն պարզորոշ լինելու պատճառով: Նշենք միայն, որ այն, ինչ ընդունված է համարել որոշիչ ստորադաս բաղադրիչ, փաստորեն իր շարահյուսական գործառությամբ նույնանում է ածական հատկանշայնության դասի հատկանշային կարգի ածական խոսքի մասին, և տեղի է ունենում ստորադաս նախադասությամբ ածականական նշանասերում: Համապատասխանաբար ենթակա և խնդիր ստորադաս նախադասություններով կատարվում է գոյականական նշանասերում, պարագա ստորադասով՝ մակբայական նշանասերում: Ստորադաս նախադասություններում չկա բայ-ստորոգյալի պաշտոն, և դա բնական է. վերջինս ստորոգային նշանի միջուկն է. սա էլ հուշում է, որ ընթացայնության վերացարկված դասի և դրա տրամաբանական ու լեզվական համապատասխանությունների տեղայնացումը գլխավոր նախադասության մեջ է, այսինքն՝ բարդ ստորադասական նախադասության առարկայական կամ գոյականական, հատկանշային կամ ածականական, մակադրահատկանշային կամ մակբայական կարգերի «կայանը» ստորադաս նախադասության տրամաբանական տարածքն է, իսկ ընթացային կամ բայական կարգի համար համարժեք «կայան» է ծառայում գլխավոր նախադասության տիրույթը [հմմտ. Jespersen 1968, 285-314]:

Բ. Վերասույթի ոճական շերտավորված բնութագրության փորձ:

Լեզվաբանության մեջ երկար ժամանակ իշխում էր այն տեսակետը, թե լեզվական կառուցվածքի վերին եզրային մակարդակը *ստորոգայինն* է՝ *ասույթ* միավորով: Անշուշտ, գիտական մտքի աշխուժացման տեսակետից կարևոր դեր կատարեց Է. Բենվենիստի «Լեզվական վերլուծության մակարդակները» զեկուցումը՝ կարդացված լեզվաբանների միջազգային 9-րդ գիտաժողովում [Бенвенист 1965, 434-449], որը քննարկումների և նոր մոտեցումների լայն դուռ բացեց թե՛ ընդհանուր, թե՛ մասնավոր լեզվաբանական ուսումնասիրությունների համար: Ծավալված բանավեճը հիմնականում երեք ուղղությամբ էր դրսևորվում: Լեզվաբանների մի մասը դրականորեն էր արտահայտվում Է. Բենվենիստի՝ մակարդակների նորարարական տեսությանը և, ընդունելով նրա՝ ընդհանուր լեզվաբանական հայեցակետով

առանձնացված չորս մակարդակները, այս կամ այն մասնավոր լեզվաբանության տեսանկյունից, ելնելով տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունից, այդ իսկ լեզվին հատուկ մակարդակների քանակ էր արձանագրում: Մեր կարծիքով այդ կարգի լավագույն հետազոտություններից է Էդ. Ադայանի տեսությունը, որը հայերենի համար առանձնացնում է յոթ մակարդակ՝ հայերենի լեզվական «շենքի» վերջին (յոթերորդ) «հարկը» Բենվենիստի հետևողությամբ եզրափակելով ստորոգային մակարդակով [Ադայան 1967, 34-48]:

Երկրորդ ուղղության համաձայն՝ ասույթը, ի տարբերություն հնչույթի, ձևույթի, բառույթի, ոչ թե պատրաստի, այլ ձևավորվող միավոր է, հետևաբար այն խոսքի բաղադրատարր է և ոչ թե լեզվական միավոր, իսկ երրորդ ուղղության ներկայացուցիչները քննդատում էին Բենվենիստին՝ մակարդակային միավորներն ասույթով եզրափակելու համար, քանի որ վերջինս էլ վերասույթի (տեքստի) բաղադրիչն է [Radford 2004, 64-72]: Այս երկու ուղղության մոտեցումներին հարկ չենք համարում անդրադառնալ այստեղ, քանի որ դրանք մանրամասնորեն վեր են հանվել է. Աթայանի հայտնի աշխատություններից մեկում [Атаян 1968, 194-209]: Նշենք միայն, որ մեզ համար խորթ է ասույթն ընդգրկող մակարդակի «ստորոգային» անվանումը, որովհետև առաջնությունը տալիս ենք Շ. Բալլիի՝ ստորոգման խորքային ըմբռնմանը, որը հաճախ է անտեսվում լեզուն մինչև իսկ փիլիսոփայական մեկնակետով վեր հանող պրպտումներում, այն է՝ ամեն մի քերականական հարաբերության ներսում կա՝ ստորոգում [Балли 1955, 120]:

Այսպես՝ լեզվաբանության դռները երկար ժամանակ փակ էին տեքստի ուսումնասիրության համար, քանի որ այն լեզվի ստորակարգային մակարդակներում տեղայնացված չէր որպես լեզվական միավոր: Ուստի լեզվաբանական տեքստագիտությունը լեզվաբանության նորագույն փուլի ձեռքբերումներից է: Սա թերևս պայմանավորված է նրանով, որ տեքստը տարբեր գիտությունների հետաքրքրության շրջանակում է, որը մի կողմից՝ պարտադրում է լեզվաբանությանը սահմանազատել լեզվաբանական տեքստագիտությունը հարակից գիտակարգերից, մյուս կողմից՝ չանտեսել այն ձեռքբերումները, որոնք կան ընդհանուր բանասիրական, գրականագիտական, փիլիսոփայական, նշանագիտական և այլ ոլորտներում, հարկ եղած դեպքում «ներխուժել» այդ ոլորտներ՝ թե՛ ընդլայնելով ու

խորացնելով լեզվաբանության սահմանները, թե՛ տալով տեքստագիտական արտալեզվաբանական ձեռքբերումների լեզվաբանական հիմնավորումները: Այս առումով գնալով նորանոր հաջողություններ է արձանագրում արդի հայ լեզվաբանությունը՝ տեքստի դիտարկումն ընդհանուր լեզվաբանական հայեցակետերով բացահայտելու բնութագրական փորձերով, և դա՛ ոչ միայն տեքստի գոյաբանական շերտերի տեղայնացմամբ [Աթայան 1988], այլև տեքստային տարածության նորանոր հորիզոններ նշմարելու առավելությամբ {Աբրահամյան 2016, հմ հմ. 3, 4}:

Մեր աշխատանքի այս հատվածում ևս առաջնորդվում ենք Էդ. Աթայանի՝ լեզվական գոյամակարդակների ուսմունքի դրույթներով [Էդ. Աթայան 1988], ուստի, հասկանալիորեն, լեզվական կառուցվածքի մակարդակային միավոր ենք համարում թե՛ ասույթը, թե՛ վերասույթը՝ փորձելով վերջինիս վերացարկված «քողազերծում» կատարել՝ ըստ հնարավոր ոճական դրսևորումների:

Որքան էլ ստույգ է այն բնորոշումը, թե խոսքը լեզվի արտահայտությունն է, նույնքան էլ հավաստի է, որ հնարավոր ամենածավալուն խոսքն էլ չի կարող սպառել ողջ լեզվական համակարգը: Այնուամենայնիվ նկատի առնելով, որ լեզվի համապատասխան ոլորտների ոճական դասակարգումներ կատարելիս, ինչպես նաև տվյալ ստեղծագործության ոճական առանձնահատկությունները վեր հանելիս հետազոտողը սովորաբար քննության է առնում ծավալուն խոսքը, այստեղ կփորձենք տալ ոճի՝ Է. Աթայանի լեզվական գոյամակարդակների ներքին տրամաբանությունից բխող բնութագրություն՝ դիմելով լեզվի հասկացական առավելագույն միավորի՝ վերասույթի օգնությանը՝ չանտեսելով նրա՝ ասույթին, բառույթին, հնչույթին իրադրորեն համարժեք լինելու հնարավորությունը: Առերևույթ հակասական կարող է թվալ վերասույթը հասկացական միավոր համարելը, որովհետև այն, ըստ ընդունված սահմանման, իր տրամաբանական հարաբերակիցը պիտի ունենար դատողությամբ, և իրոք, վերասույթը՝ իր տրամաբանական բովանդակությամբ, (առնվազն) դատողություն է կամ դատողությունների համակցություն: Սակայն այս թվացյալ հակասությունը դիալեկտիկական խորք ունի, որը հնարավոր է մեկնաբանել Է. Աթայանի լեզվափիլիսոփայական հայեցակերպի օգնությամբ: Բանն այն է, որ ամեն մի ասույթ՝ որպես տրամաբանական

դատողության առաջնային հարաբերակից, ենթակա է բառայնացման, այլ կերպ՝ դատողության հասկացական փոխակերպման:

Հակառակ ուղղությամբ (տրամաբանականից դեպի լեզվաբանական) ընթանալիս կարող ենք ասել՝ քանի որ վերասույթի տրամաբանական հիմքը ևս դատողությունն է (իսկ վերջինս միշտ է ենթակա հասկացական փոխակերպման), ապա հնարավոր ամենից ծավալուն վերասույթը ևս ենթակա է նվազման, այսինքն՝ բառայնացման, որը տվյալ դեպքում զուտ արտաքննապես է նվազեցում. իրականում այս նվազեցումը խտացում է ենթադրում, որը հենց վերասույթային մակարդակում **ոճական հարաչափերով** է մեկնաբանվում. այս պարագայում նվազեցումը **ոճական խտացման** գործողությամբ է օժտված, որի արտահայտությունը **չեզոք ոճի** դեպքում պարզապես խոսքի **սեղմ ոճն** է, **վսեմ ոճի** դեպքում՝ **գերխիսի ոճը**՝ փիլիսոփայական կամ բանաստեղծական և կամ այս երկուսի փոխթափանցված բեկումով: Ծավալուն **վերասույթի բառայնացման** լավագույն ապացույցը պիտի համարել այս կամ այն (գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական և այլ) ոճի ընդարձակ ստեղծագործության վերնագրված կամ վերնագրելի լինելու իրողությունը:

Այժմ, հիմք ընդունելով էդ. Աթայանի՝ լեզվական գոյամակարդակների ուսմունքը, փորձենք ներկայացնել վերասույթը՝ ոճական պայմանավորվածությամբ, այդ իսկ գոյամակարդակներից յուրաքանչյուրի սահմաններում:

1) Համակարգային (լեզվական) վերասույթը լեզվական հնարավոր միջոցների առավելագույն ընդգրկմամբ տրամաբանական բովանդակություն ապահովող ասելիքի հնարավոր արտահայտությունն է (= արտահայտելիությունը)՝ ստեղծվելիք իրադրությանը համապատասխան **ոճավորելիությամբ**: Այս գոյամակարդակում ստորոգումն ու եղանակայնությունը ևս հասկանալիորեն առկա են որպես հնարավորություն կամ **տրված են** որպես ներունակություն, այլ կերպ՝ համակարգի տիրույթում դրանք «գործում են» որպես ստորոգելիություն ու եղանակավորելիություն: Որպես հասկացություն բովանդակող (առավելագույն) միավոր՝ վերասույթը մյուս նշանային միավորների նման լեզվական համակարգում օժտված է անվանողական դերով:

2) Շարակարգային (լեզվախոսքային) վերասույթը իրացվում է լեզվական միջոցների առավելագույն ընդգրկմամբ տրամաբանական բովանդակության՝

ասելիքի փոխանցմամբ և ապահովում է հաղորդելիքի նյութականացումը՝ հնչական կամ գրային դրսևորումներով: Սա տրամաբանականից նյութականի անցման ակնթարթային պահն է՝ տրամաբանականի ու նյութականի հոգեկան նուրբ միջնորմը. սա վերասույթի **ներքին ոճավորման** փուլն է, որ արտաքնանում կամ անցնում է արտաքին «հանդերձավորման» (հնչավորման կամ գրավորման)՝ հնարավոր իրադրության վերհրադրայնացմամբ: Ի տարբերություն համակարգային գոյամակարդակի հասկացականության՝ շարակարգային գոյամակարդակի վերասույթը պատկերացումային է՝ յուրօրինակ գերպատկերանշան, որ պրկված-պատրաստ է՝ հասկացության անվանողական դերն իրենով բեկելու առարկայական վերաբերության: Սա անհատականացման պահն է: Շարակարգային մակարդակը լեզվախոսքային ինքնատիպ **ստորոգում** է ստորոգման մյուս բևեռների՝ համակարգի ու գծակարգի միջև, և շարակարգային վերասույթը **ստորոգելի համակարգի** ու **ստորոգված-վերագրված գծակարգի** էացումը, նրանց **ստորոգիչն** է՝⁸ լեզվախոսքային-պատկերացումային համապատասխան **եղանակայնացմամբ**: Ի վերջո այս ամենի ներքին միացությամբ է ապահովվում այս մակարդակում վերը նշված ներքին ոճավորումը:

3) Գծակարգային (խոսքային) վերասույթն ասելիքի իրադրայնացման փուլով անցած, պատկերացմամբ բեկված անվանողականությունը մասնավորեցրած (առարկայական վերաբերությամբ օժտած), տվյալ հնչաշղթայով համապատասխան եղանակայնությամբ ու հնչերանգով և ստորոգչությամբ արդեն **ոճավորված**, տվյալ իրադրությամբ պայմանավորված խոսքի առավելագույն դրսևորումն է կամ տվյալ իրադրության առավելագույն խոսքը: Վերասույթն այս գոյամակարդակում ուշադրության արժանի իր առանձնահատկություններն ունի: Խոսքային վերասույթի կազմում ամեն մի հաջորդ ասույթ՝ որպես նորություն, նախորդի մակաբերյալն է (ռեմա)՝ հոգեբանական ստորոգյալը [Матезиус 1967, 239-245], և ամեն մի նախորդ ասույթ հաջորդի **ենթահիմքն** է⁹ (թեմա)՝ հոգեբանական ենթական: Գծակարգային վերասույթի վերջին բաղադրիչ-ասույթին նաև **վերջնաստորոգման** դեր է վերապահված. նրանով՝ իբրև **մակաբերյալի**, սպառվում է ոչ միայն մակաբերումների շարքը տվյալ վերասույթի մեջ, այլև մակաբերումն ավարտվում է

արտահայտված ամբողջ վերասույթի նկատմամբ: Սա նշանակում է, որ տվյալ վերասույթի բաղադրիչ ասույթների գլխավոր անդամներից էական դերը կատարում է վերջին ասույթի բայ-ստորոգյալը: Սրանով է վերահամադրվում մինչ այդ ողջ ասվածը, և ներդաշնակություն է ապահովվում ասվածի (խոսքի) ու ասելիքի (լեզվի) միջև: Սրանով հավասարակշվում են նաև **ոճավորելիքի, ոճավորման** և **ոճավորվածության** տրամաբանական, հոգեբանական ու նյութական շերտերը: Ավելին. վերջնաստորոգմամբ, անհատական ունակություններին համապատասխան, խոսողը ներդաշնակել է փորձում արտաքին (արտալեզվական) ու ներքին (ներլեզվական) աշխարհները, իր կարողություններին համապատասխան՝ հակադրելով նույնացնում է այդ աշխարհների ոճերը: Է. Աթայանի ուսմունքի թելադրանքով՝ համարձակվենք կատարել այսպիսի ընդհանրացում. **լեզվական աշխարհի ոճը արտալեզվական աշխարհի ոճի կամ, ուղղակի ասենք, արտաքին ոճավորված աշխարհի բեկումն է մեր գիտակցության մեջ:**

Այժմ փորձենք մեր նկատառումները հնարավորին չափ շոշափելի դարձնել՝ զննելով երկու հատված գեղարվեստական ստեղծագործությունից:

ա) Վերասույթի շերտավորված դիտարկում՝ ըստ Ջեյմս Ջոյսի «Arabia»-ի մի դրվագի: Տեքստի վերլուծության տարբեր եղանակներ կան: Վերջին շրջանի հայրենական լեզվաբանության ուշագրավ դիտարկումներից մեկը պետք է համարել տեքստի վերլուծության՝ **հակադրությունների դիալեկտիկական միասնությամբ պայմանավորված լեզվաբանաստեղծական մեթոդը**, որ առաջարկում է Ս. Գասպարյանն իր մենագրությամբ [Гаспарян 2008, 27–35]: Կարելի է ասել, որ մեր բանասիրական իրականության մեջ այդ մեթոդն իր գործնական կիրառությունն է գտել արդեն լայնորեն շրջանառվող «Գործառական ոճագիտություն» գրքում [Գասպարյան 2011, 80–96]: Ինչ խոսք, մեզ համար ուղղորդող դեր է ունեցել նաև Ռ. Յակոբսոնի դասական ուսումնասիրություններից մեկը [Jakobson 1975], ինչպես նաև Լ. Հոռնի և Գ. Ուորդի խոսույթի (Discourse) կառուցվածքի գործաբանական վերլուծությունը [Horn and Ward 2006, 151-402]: Տեղեկացնենք, որ տեքստի (տվյալ դեպքում ճիշտ կլիներ ասել՝ խոսույթի) դիտարկում կատարելիս մեզ համար մեկնակետային նշանակություն է ունեցել նաև Զ. Հարիսի «Խոսույթի վերլուծություն»

ուսումնասիրությունը [Harris 1952], թեև մեթոդական առումով դիմել ենք նաև այլ հնարների: Մեր նպատակը գոյամակարդակային շերտերը վեր հանելն է, ուստի դիտարկման եղանակն այդպես էլ անվանել ենք՝ **փեքստի գոյամակարդակային քննություն**: Ներկայացնենք, նախ, դիտարկման ենթակա տեքստը:

Every morning I lay on the floor in the front parlour watching her door. The blind was pulled down to within an inch of the sash so that I could not be seen. When she came out on the doorstep my heart leaped. I ran to the hall, seized my books and followed her. I kept her brown figure always in my eye and, when we came near the point at which our ways diverged, I quickened my pace and passed her. This happened morning after morning. I had never spoken to her, except for a few casual words, and yet her name was like a summons to all my foolish blood.

Her image accompanied me even in places the most hostile to romance. My eyes were often full of tears (I could not tell why) and at times a flood from my heart seemed to pour itself out into my bosom. I thought little of the future. I did not know whether I would ever speak to her or not or, if I spoke to her, how I could tell her of my confused adoration. But my body was like a harp and her words and gestures were like fingers running upon the wires.

One evening I went into the back drawing-room in which the priest had died. It was a dark rainy evening and there was no sound in the house. Through one of the broken panes I heard the rain impinge upon the earth, the fine incessant needles of water playing in the sodden beds. Some distant lamp or lighted window gleamed below me. I was thankful that I could see so little. All my senses seemed to desire to veil themselves and, feeling that I was about to slip from them, I pressed the palms of my hands together until they trembled, murmuring: ‘O love! O love!’ many times.

Պատրաստի տեքստը որոշակի գծակարգ է, արտասանական մակարդակում՝ **հնչաշղթա**, գրային մակարդակում՝ **գրաշղթա**: Բնականաբար, մեր դիտարկումը գրային վիճակին է վերաբերում: Հասնելու համար շարակարգի և համակարգի գոյամակարդակային վիճակներին՝ պետք է զննենք առկա գծակարգը: Նախքան զննությունը նշենք, որ վերասույթից փոքր նշանային միավորների դեպքում գործ ունենք հստակ կաղապարների հետ. գծակարգում այս կամ այն ծավալի

միավորների ու դրանց հարաբերության առկայությունը կարող է հուշել դրանց համակարգային կաղապարի բնույթը: Տեքստի պարագայում, սակայն, վիճակը բոլորովին այլ է, և վերջինիս լեզվական կաղապարը վերականգնելու համար լրացուցիչ աստիճանավորումների անհրաժեշտություն ունենք, որովհետև ոչ մի գիտություն, նույնիսկ գիտությունների համատեղված մեթոդաբանություն ի վիճակի չէ, այսպես ասած, մեկ քայլով բացահայտելու, թե ինչ ընդգրկուն կաղապար է «պահ մտած» մարդու ուղեղում, որի համաձայն՝ ստեղծվում է այս կամ այն տեքստը, առավել ևս այդ կենտ քայլով հնարավոր չէ ըմբռնել ու մեկնաբանել այն իրադրությունը, որի ընթացքում կազմավորվում է հատկապես այն տեքստը, որը՝ որպես պատրաստի միավոր, հայտնվում է թղթին կամ էկրանին և կամ դրսևորվում որպես մեկ տրամաբանական ամբողջություն ներկայացնող արտասանվածք [Cobley 2011, 441-447]:

Պարզելու համար վերգծակարգային գոյամակարդակների էությունը՝ տեքստի դիտարկումն սկսենք բովանդակության պլանից՝ նշանակյալից, անցում կատարելով դեպի արտահայտության պլան՝ նշանակիչ: Սակայն հետազոտության եղանակի միասնականությունը պահպանելու համար այստեղ ևս աչքի առաջ պետք է ունենանք վերացարկված հասկացական դասերը և դրանց հարաբերակից հասկացական կարգերն ու կարգային ձևատիպարները: Այսպես՝ դատելով տեքստի բովանդակությունից՝ կարող ենք կատարել բովանդակային նախնական արտածումը, այն է՝ *մի պատրանի սիրահարված է*: Սա նշանակում է, որ բովանդակային դիտարկման սկզբնական աստիճանում ունենք հետևյալ կաղապարը՝

1-ին աստիճան՝ N + V:

Ինքնին հասկանալի է, որ *սիրո առարկա* գոյություն ունի, ուստի բովանդակային դիտարկման հաջորդ աստիճանը կարտահայտվի հետևյալ կաղապարով՝

2-րդ աստիճան՝ N + V + N_v:

Քանի որ առաջին անգամ է այդ զգացողությունն ապրում, պատանին *անմեղ* է և *անփորձ*, ուստի նրա այդ հատկությունը դիտում ենք որպես իրեն բնորոշող ընդհանրական հատկանիշ և տալիս դրա քերականական համարժեքությունը՝

ածականական դրսևորմամբ, որի ավելացմամբ հաջորդ աստիճանը կարտահայտվի հետևյալ կաղապարով՝

3-րդ աստիճան՝ $A + N + V + N_V$:

Վերջապես տեքստի բովանդակությունը հուշում է, որ սիրահարվածության ընթացքը բուռն է կամ սաստիկ, այսինքն՝ սիրահարված է *սաստիկ*, ուստի այդ հատկությունը մակադրական բնույթ ունի, որի քերականական համարժեքությունը կդրսևորվի մակբայով. նշանակում է՝ բովանդակային դիտարկման չորրորդ աստիճանը կարտահայտվի հետևյալ կաղապարով՝

4-րդ աստիճան՝ $A + N + V + N_V + D$:

Այս կաղապարը, որ մեկ նախադասության «հավասարաչափություն» ունի, արտացոլում է խնդրո առարկա տեքստի սեղմ բովանդակությունը, և այն, դժվար չէ նկատել, լիովին նույնական է վերը բերած ասույթի կաղապարի հետ: Կամայական տեքստ, ըստ նրա բովանդակության, կարելի է փոխակերպելով հանգեցնել ասույթի կաղապարի նույնացման [Austin 1962, 75-84]: Ավելին. հաջորդ քայլը կարող է լինել մակերեսային ստորոգական կառուցվածքի անվանականացումը: Ինչ խոսք, կարելի է վիճարկել այս կարգի ազատ վերաբերմունքի գիտականության աստիճանը՝ կամայականության մտավախությամբ: Սակայն նախ՝ սա տեքստի քննություն է, որը բանասիրական հենք ունի, երկրորդ՝ տեքստի գրականագիտական քննությունն անհամեմատ ազատ է, որի նույնիսկ չափումները հաճախ որոշարկված չեն, երրորդ՝ մեր մոտեցումը «կամայական» է այնքանով, որքանով տեքստի հեղինակը համապատասխան վերնագիր է տալիս նրան, որն այլ բան չէ, եթե ոչ ողջ տեքստի վերացարկված ընկալում և անվանականացում, չորրորդ՝ այնուամենայնիվ մեր դիտարկումը լեզվաբանական է, քանի որ կաղապարման մեթոդով ենք առաջնորդվում, ինչքանով որ հնարավոր է կաղապարել տեքստը կամ արտածել նրա կաղապարը, հինգերորդ՝ տեքստի բովանդակային ոլորտին առավել մոտ մնալու համար կարող ենք նաև նրան համարժեք անվանականացման փոխակերպում ապահովել, որն էլ հենց կլինի նրա մակերեսային պայմանական կամ, որ տվյալ դեպքում նույնն է, լեզվաբանական վերնագիրը, այն է՝ **Անմեղ պատանու բուռն սերը**, որն էլ կդիտենք բովանդակային քննության հաջորդ աստիճանը՝ փոխակերպական հետևյալ կաղապարով՝

5-րդ աստիճան՝ $[A + N + V + Nv + D] \Rightarrow [A + N + A_1 + N_1]$:

Տեքստի ընդհանրական կաղապարի վերհանումը կարևոր է նրանով, որ ապահովում է նրա համակարգային հենքի ընկալման մոտավոր ճշգրտությունը: Սա հարացուցային կաղապար է այնքանով, որքանով տեքստը հնարավոր է դիտարկել որպես լեզվական գերհասկացություն՝ հարակից գերհասկացությունների հնարավոր բազմության մեջ: Տեքստը համակարգային է հե՛նց իր կայացածության փաստով. լեզվական փաստ է այն իր իսկ գոյությամբ, լեզվի մասնակի դրսևորում է, **մասնակի լեզու՝** տվյալ հանրության (մեր օրինակում՝ անգլախոս հանրության) համընդհանուր գերնշանի կազմում: Ի վերջո հատկապես ծավալուն տեքստը տպավորվում է մեր հիշողության մեջ ո՛չ ամբողջությամբ, այլ ընդհանրական ընկալմամբ, ներքին անվանականացման ուժով, և այդ անվանականացումն այլ բան չէ, եթե ոչ տեքստային հարացույց:

Այժմ փորձենք պարզել, թե ինչ ընթացքով է իրականացվել լեզվական համակարգային կաղապարի խոսքային արտահայտությունը, այլ կերպ՝ փորձենք վեր հանել լեզվախոսքային շարակարգի (կամ լեզվական հորինվածքի հոգեկան) շերտերը: Այս դեպքում ևս առաջնորդվելու ենք աստիճանակարգության սկզբունքով: Մեր ունեցած տեքստը բազմաթիվ նախադասությունների բազմություն է: Յուրաքանչյուր նախադասություն որոշակի ստորոգական կառուցվածք է: Դիտարկվող տեքստը որոշակի իրադրություն և տրամադրություն արտահայտող բաղկացություն է, որը հնարավորություն է տալիս դիտարկողին՝ նկատելու լեզվախոսքային գործունեության հյուսվածությունը: Տեքստակազմ նախադասությունների զգալի մասում ստորոգումն իրացված է առաջին դեմքով, որը հարաբերվում է երրորդ դեմքին, իսկ երբեմն էլ հակառակ հարաբերությունն է արտահայտվում: Առաջին աստիճանում, ուրեմն, դուրս գրենք ստորոգական միջուկները՝ հարաբերիչ բևեռներով, որոնք կհամարենք տեքստի առանցքային ցուցանշաններ: Սա նշանակում է, որ ստորոգական միջուկ ասվածը բառացի չենք հասկանում. հարկ եղած դեպքում հարացույցի անքակտելի բաղադրիչ ենք համարում մինչև իսկ այն պարագայական արտահայտությունները, որոնք օգնում են հարաբերիչների հարաբերության ճանաչմանը:

1-ին աստիճան՝

I lay watching her door
The blind was pulled down that I could not be seen
When she came out my heart leaped
I ran seized my books and followed her
I kept her brown figure always in my eye
we came our ways diverged
I quickened my pace and passed her
This happened morning
I had never spoken to her
her name was like a summons to all my foolish blood
Her image accompanied me
My eyes were often full of tears
I could not tell why
at times a flood from my heart seemed to pour itself out into my bosom
I thought little of the future.
I did not know
I would ever speak to her or not or
if I spoke to her
how I could tell her
of my confused adoration
But my body was like a harp
her words and gestures were like fingers running upon the wires

Այստեղ դադարեցնում ենք հարացույցի ամբողջացումն այն պատճառով, որ երրորդ պարբերության մեջ կողմնակի նկարագրություն է, որն արտաքուստ կապ չունի սիրահարի ներաշխարհի հետ: Դա երևում է նաև միջդիմային հարաբերությունների փաստացի բացակայությունից: Սակայն նկարագրությունն այնպիսին է, որ մռայլ ու անծրևոտ տեսարանը լրացուցիչ և անբացատրելի սաստկացում է առաջացնում սիրահարի ներաշխարհում՝ ընդհուպ մինչև *O love! O love* բազմանվագ վանկարկումը:

Հարացուցային միավորներն ունեն այս կամ այն թվով լրացական արտահայտություններ և ընդմիջարկումներ, որոնցով ամբողջանում է թե՛ հարացույցը, թե՛ այն հոգեվիճակը, որոնցով հիմնավորվում է սիրահար սրտի զգացական ողջ պաշարի առկայությունը: Այսպես՝ մեր հարացույցի առաջին անդամն է I lay watching her door առանցքային արտահայտությունը: Սակայն երբ այն լրացնում ենք Ջոյսի՝ այստեղ սղած անդամներով, ահա թե ինչ պատկեր ենք ունենում՝ Every morning I lay on the floor in the front parlour watching her door: Այսպես էլ, ահա, վերականգնելով հեղինակային մնացյալ նախադասությունները, զուտ տրամաբանական կմախքը լցնում ենք «միսուարյունով», և պարզ է դառնում, թե ինչու պիտի պատանին իջեցներ վարագույրներն այնքան, որ ինքը չերևար, և միայն մի նեղ ճեղքից անթարթ հայացքն ուղղեր աղջկա տան ուղղությամբ, թե ինչպես էր աչքի առաջ պահում սիրած էակի կերպարանքը, ինչպես էր սիրտը թրթռում, երբ դուռը բացվում, և այդ էակը դուրս էր գալիս... Լցված է պատանին աղջկա կերպարանքով այնքան, որ նրա պատկերն իրեն ուղեկցում է անգամ ամենաանհարմար վայրերում... Տեքստահյուսմանը առաջնայնորեն նպաստում են հատկապես առաջին և երրորդ դեմքերի անձնական դերանունները: Ասես ամբողջ տեքստը պարփակված լինի այդ դերանուններով, և իրական ու երևակայական գործողությունները կատարվելիս լինեն միջդերանվանական կամ միջդիմային տարածության ներսում: Ամեն մի նախորդ նախադասություն տրամաբանական ու հոգեբանական հիմք է հաջորդի համար, և հենց դրանով այն հոգեբանական ենթահիմքն է մակաբերյալի՝ հոգեբանական ստորոգյալի: Վերջին նախադասությունը՝ All my senses seemed to desire to veil themselves and, feeling that I was about to slip from them, I pressed the palms of my hands together until they trembled, murmuring: ‘O love! O love!’ many times, մակաբերյալ է ոչ միայն դրան նախորդող հատվածի, այն է՝ Some distant lamp or lighted window gleamed below me. I was thankful that I could see so little, այլև ամբողջ տեքստի համար, և այդ տեքստն է, որ պիտի ավարտված լինի բազմիցս կրկնվող O love! O love արտահայտությամբ, և տեքստը հենց սրանով պիտի ունենա իր վերջնաստորոգումը: Եվ ահա այս հոգեբանական-անցումային պահով է, որ գծային շղթայի է վերածվում հասկացությունների ու պատկերացումների այն տարափը, որ հեղեղի պես հորդում է

պատանի սիրահարի սրտից: Տվյալ դեպքում այս հորձանքն է, որ որպես հեղինակային նկարագրություն «դաջվել է» ջոյսյան «կտավի» վրա՝ անգլերենի համակարգի մի բեկոր վերարձարժեղով իբրև այդ լեզվին հատուկ ծավալուն հարացույց: Հարացուցային տեքստի գծայնացումը ընթերցելու պահից իսկ ուղեկցվում է նախորդ ստորոգման անվանականացման և հաջորդի ստորոգավորման մտընթացով: Ընթերցելու պահին անգամ նախորդ ընթերցվածքը փոխակերպվում-անվանականանում է, մտապահվում է արդեն որպես պատրաստի հարացույց:

Բայց դեռ չչտապենք՝ ընդհանրացումներ անելու. կատարենք ևս մեկ տեքստագիտական քննություն:

բ) Վերասույթի շերտավորված դիտարկում՝ ըստ Ջին Էդվարդսի «Երեք արքաների պատմությունը» ստեղծագործության տասնվեցերորդ դրվագի: Ինչպես նկատեցինք վերը, որքան առարկայորեն հեշտ են թվում մինչև վերասացական մակարդակի միավորների կաղապարումն ու շերտավորումը, նույնքան դժվար է այդ նույն գործողությունները կատարել ամենավերին՝ վերասացական մակարդակի միավորի՝ տեքստի նկատմամբ՝ պայմանավորված նրա թե՛ ծավալով, թե՛ բազմապլանայնությամբ [Harri, Ljungberg and Dines Johansen 2009]: Նույն դժվարությունն առկա է և այս օրինակում: Դիտարկման նյութը Ջին Էդվարդսի սուրբգրային վերահյուսված վավերագրությունն է, որն էլ հենց լեզվաբանական քննության ենք առել է. Աթայանի վերհանած լեզվական գոյամակարդակների հենքով:

Դիտարկելիք անգլերեն բնագրի ընտրությունը: Ջին Էդվարդսի «Երեք արքաների պատմությունը» ստեղծագործությունը աստվածաշնչյան թեմայի քնարական թատերայնացված վերապատումն է՝ շարադրված, իրոք, բանաստեղծական շնչով և խոհական իմաստավորմամբ: 27 դրվագից է բաղկացած այս ստեղծագործությունը, որն ունի նաև նախաբան և (թեկուզ չարձանագրված) փոքրիկ վերջաբան: Գործող կերպարները ոչ միայն սուրբգրային հայտնի թագավորներն են՝ Սավուղը, Դավիթը և Աբիսողոմը, ինչպես նաև հատկապես Դավթին ուղեկից ընկերները, պալատականները, այլև հեղինակը և ընթերցողը, որին ժամանակ առ ժամանակ դիմում է հեղինակը: Վերջին հանգամանքով

պայմանավորված՝ լրացուցիչ կենդանություն է հաղորդվում ստեղծագործությանը, մանավանդ որ այն նախատեսված է բեմականացման համար: Նշենք, որ դրվագները, տրամաբանական և հոգեբանական շաղկապվածությամբ հանդերձ, ունեն հարաբերական ինքնուրույնություն, ուստի ընտրության առումով քննության կարող էր առնվել դրանցից յուրաքանչյուրը՝ առանց խտրության [Eco Umberto, 1994, 182-200, Greimas 1988]: Եվ այնուամենայնիվ մեր ընտրությունը կանգ առավ 16-րդ դրվագի վրա, որովհետև դա յուրօրինակ միջամիտի դեր ունի մի կողմից՝ հեղինակի բերանով Դավթի խորհրդածությունների, մյուս կողմից՝ հեղինակի՝ ընթերցողին նախապատրաստող և երբեմն էլ ուղղորդող հարցադրումներով արված նախնական ընդհանրացումների առումով: Ներկայացնենք, արդ, 16-րդ դրվագը.

– You still haven't answered my question. The man I sit under: I think he is a King Saul. How can I know with certainty?

– It is not given to us to know. And remember, even Sauls are often the Lord's anointed.

– You see, there are always people – everywhere, in every age, and in every group – who will stand and tell you: "That man is after the order of King Saul." While another, just as sure, will rise to declare, "No, he is the Lord's anointed after the order of David." No one can *really* know which of the two is correct. And if you happen to be in the balcony looking down at those men screaming at one another, you may wonder to which order *they* belong.

– Remember, you leader may be a David.

– That's impossible!

– Is it? Most of us know at least two men in the lineage of David who have been damned and crucified by other men. By men who were absolutely certain the ones they were crucifying were *not* Davids.

And if you don't know of two such cases, for sure you know of one.

Men who go after the Sauls among us often crucify the Davids among us.

Who, then, can know who is a David and who is a Saul?

God knows. But he won't tell.

Are you so certain your king is a Saul and not a David that you are willing to take the position of God and go to war against your Saul? If so, then thank God you did not live in the days of crucifixion.

What, then, can you do? Very little. Perhaps nothing.

However, the passing of time (and the behavior of your leader while that time passes) reveals a great deal about your leader.

And the passing of time, and the way you react to that leader – be he David or Saul – reveals a great deal about *you*.

Gene Edwards, *A Tale of Three Kings: a study in brokenness*, Copyright © 1980, 1992 by Gene Edwards. All rights reserved. Tyndale House Publishers, Inc. Wheaton, Illinois.

(Gene Edwards, Tale of Three Kings: Sixteen)

Դիտարկվող դրվագի համակարգային բնութագիրը: Համակարգային գոյամակարդակը, ինչպես պարզեցինք, ըստ էության, հարացույցների տիրույթն է: Պարզեցինք նաև, որ դյուրին է մինչվերասացական մակարդակներում հարացույցներ հայտնաբերելը: Վերասույթի դեպքում դրա հայտնաբերումն անհամեմատ դժվար է, որովհետև տեքստի առաջնային բնութագրիչը նրա գծայնությունն է: Մասնավորելով հարցը «Երեք արքաների պատմությունը» ստեղծագործության վրա՝ 16-րդ դրվագը կարող ենք քննել և՛ վերդրվագային, և՛ ներդրվագային հայեցակետերով: Վերը ցույց տրվեց, որ տեքստը՝ որպես այդպիսին, իրողությունների որոշ հաջորդականությամբ նկարագրություն է, ասել է՝ գծային բնույթ ունի, ուստի խոսքային գծակարգի գոյամակարդակին է պատկանում: Սակայն արդեն նախորդ օրինակի զննությունը ցույց տվեց, որ այն նաև համակարգային իրողություն է: Դրա հիմնավորման առաջնային բնութագրիչը, որը ոչ միայն լեզվաբանական է, այդ նույն տեքստի վերահամակարգման հնարավորությունն է: Զուտ լեզվաբանորեն՝ տեքստը պիտի բացահայտվի իբրև հարացույց: Անդրադառնալով վերը բերված 16-րդ դրվագին՝ պարզում ենք, որ այն համանման դրվագներից մեկն է միայն: Ուստի տեքստը որոշակի հարացուցային դրվագների ամբողջություն է: Սա տեքստի վերդրվագային դիտարկում է՝ համանման բոլոր տեքստերի զուգադրությամբ: Դառնալով նույն 16-րդ դրվագին՝ հայտնաբերում

ենք, որ այն ևս մանրադրվագների համակցություն է: Մանրադրվագների առանձնացման խստագույն չափանիշներ չկան և չեն կարող լինել: Ինչպես տեքստն է լեզվական հորինվածքի ամենից ազատ միավորը, այնպես էլ նրա նկատմամբ կատարվելիք դիտարկումը կարող է ազատ լինել՝ միայն թե իմաստային հիմնավորվածությամբ, անպայման տրամաբանական հարաչափերով: Ուշադրությամբ զննելով 16-րդ դրվագը՝ պարզում ենք, որ այն երկբևեռ իմաստային հագեցում է, որի միջբևեռային սահմանն այդ բևեռները միացնող **God knows. But he won't tell** («Աստված գիտի, բայց չի ասի») իմաստային կամարն է: Երկու բևեռն էլ անիմանալին իմանալու անհագ ցանկություն բովանդակող տրամաբանական ոլորտ է, որ տվայտանքի մեջ է պահում անպատասխան հարցումներով ողողված հոգիներին: Միայն թե եթե առաջին բևեռում կամ ոլորտում անվերջ թվացող անորոշություն է, կամարահաջորդ բևեռը ինքնաճանաչողության հնարավորություն է թողնում տվայտողին՝ որին նա կարող է հասնել ըստ այն բանի, թե ինչպիսին է ընկալել նրան, ով թագավոր է ներկայանում: Այսինքն՝ ինքնաճանաչողության հիմքն այլաճանաչողությունն է. **And the passing of time, and the way you react to that leader – be he David or Saul – reveals a great deal about you:**

Մեր դիտարկմամբ 16-րդ դրվագը եռանդամ հարացույց է: Այլ մոտեցմամբ հնարավոր է ավելի շատ մանրադրվագների ներկայացում [Tejera 1995]: Կարևորը, սակայն, թիվը չէ, այլ առկա տեքստի հարացուցավորման տրամաբանականությունը, այն հիմնավոր ներկայացնելու անհրաժեշտությունը, որովհետև համակարգում տրված հնարավորությամբ է պայմանավորված թե՛ բերված (կամ այլ) հարացույցների խոսքային հոսքը, դրա գծային ներկայացումը, թե՛ նախքան գծայնացման հասնելը այն հոգեկան իրադրությունը, որն էլ համակարգային հնարավորությամբ վերջնաճշտում է խոսքում՝ մտքերի, նախադասություններում՝ բառերի շարադասությունը:

Դիտարկվող դրվագի գծակարգային բնութագիրը: Ինչպես նշվեց, տեքստի շարադասումը՝ որպես հնարավորություն, տրված է համակարգով: Հեղինակի՝ մեզ թելադրած ենթադրվագ-հարացույցները հենց այն հաջորդականությամբ են խոսքային հոսքի վերածվել, որով ազդում են մեր ընկալումների վրա: Առաջին իսկ հարցադրումից սկսած՝ «– **You still haven't answered my question. The man I sit**

*under: I think he is a King Saul. How can I know with certainty?», սահմանակետի God knows. But he won't tell միջնակամարով շարունակվող և ինքնաճանաչողության մղող **And the passing of time, and the way you react to that leader – be he David or Saul – reveals a great deal about you** տվայտիչ «վերջնագրով» ավարտած՝ գծակարգը համակարգային հարացուցայնությամբ է պայմանավորված, ուղղակի արդյունային նպատակն է այդ համակարգի:*

Դիտարկվող դրվագի շարակարգային բնութագիրը: Պարզեցինք, որ լեզվախոսքային շարակարգը լեզվի հորինվածքի հոգեբանական շերտն է: Որպես այդպիսին՝ այն, ի տարբերություն համակարգի, չի կադապարվում, և, ի տարբերություն գծակարգի, հատուկավորման չի ենթարկվում: Սա լեզուն խոսքին կամրջող օղակն է՝ իրադրային անցակետը, որն էլ, առաքողի (տվյալ դեպքում՝ հեղինակի) հոգեվիճակով պայմանավորված, «թելադրում-հուշում» է, թե համակարգային մտածողությունն ի՛նչ հաջորդականությամբ պիտի դրսևորվի խոսքում: Լինելով ամենից անորսալի պահը՝ շարակարգը բովանդակությունն արտահայտությանը հարաբերող անփոխարինելի տիրույթն է: Սրա միջնորդությամբ է, որ տեքստային նշանակյալը ձեռք է բերում իր նշանակիչը՝ այս երեք շերտի հետ ամբողջանալով իբրև լեզվական նշան: Սրանով է, որ այդ նշանը իր իսկ ներսում ընդգրկուն ստորոգական բաղադրության է վերածվում, ամբողջ տեքստի միասնականությունն ամրակայում իբրև արդյունք գերհամադրական ստորոգման [Աթայան 1981, 222]:

III գլխի ամփոփում

Այսպիսով՝ ձևակազմական և բառակազմական նշանային բաղադրությունների քննությունը հայ լեզվաբանության մեջ մշակված բաղադրական հիմքերի սկզբունքով [Աղայան 1984, 245-251] հնարավոր է դարձնում բառակազմական կաղապարների բաշխումը ինքնակերտ և այլակերտ տիպերի: Ըստ այդմ՝ երկանդամ բարդություններում ինքնակերտ կաղապարները գործում են գրեթե բոլոր հասկացական կարգերով, միայն թե եթե գոյական + գոյական, ածական + ածական, մակբայ + մակբայ նույնական համակցություններից ինքնակերտ կաղապարներ են ձևավորվում, ապա բայ + բայ կաղապարների համակցությամբ ձևավորվում է միայն այլակերտ կաղապար՝ գոյական: Այլակերտ կաղապարներն իրացված են հետևյալ բաշխվածությամբ՝ ա) գոյականակազմության մեջ երկրորդ բաղադրիչ են լինում ածական, բայ, մակբայ հիմքերը, բ) ածականակազմության մեջ՝ գոյական, բայ, մակբայ հիմքերը, գ) բայակազմության մեջ՝ գոյական, ածական, մակբայ հիմքերը, դ) մակբայակազմության մեջ՝ գոյական, ածական, բայ հիմքերը:

Ձևակազմության մեջ մեծ է բայական հիմքերի կարևորությունը: Դրանք ժամանակակից անգլերենում ըստ կազմության բաժանվում են համադրակազմ և վերլուծակազմ խմբերի: Բոլոր համադրակազմ հիմքերը ձևավորվում են անորոշի (ինֆինիտիվ) հիմքից, որից կազմվում են նաև վերլուծական ձևեր: Վերլուծական հիմքեր են կազմվում նաև առաջին և երկրորդ դերբայներով, որոնք գոյություն չունեն համադրակազմ ձևերում: Վերլուծակազմ հիմքերը միշտ բաղադրյալ են և ինքնին լինում են համադրական կամ վերլուծական:

Բաղադրյալ վերլուծական հիմքերը լինում են երկբաղադրիչ և եռաբաղադրիչ: Երկբաղադրիչ հիմքերը մենալույծ են, եռաբաղադրիչ հիմքերը՝ զուգալույծ:

Ընդհանրություն ունենալով հանդերձ՝ չեն նույնանում շարահյուսական կառուցվածքի դիտարկման շարահյուսական և շարութաբանական եղանակները: Շարահյուսական եղանակի նպատակը կառուցվածքի վերլուծությունն է, շարութաբանականինը՝ վերլուծությունն ու համադրությունը [Գյուլգաստյան 2005, 23]:

Ինչպես պարզեցինք, արդարացված և արդյունավետ է վերասույթի գոյամակարդակային դիտարկումը, որը հաստատվում է թե՛ Ջեյմս Ջոյսի, թե՛ Ջին

Էդվարդսի տեքստային համապատասխան դրվագներով: Սա էլ հուշում է, որ մեզ հաջողվեց նշանային բաղադրությունների վերբառային մակարդակային դրսևորումների քննությամբ վեր հանել դրանց արտահայտության և գործառության յուրահատկությունները շարութային, ասութային և վերասութային տիրույթներում: Այս երեք մակարդակում որոշակի աստիճանականության սահմանումը նպաստում է նյութի քննության միասնականությանը: Բլումֆիլդի՝ ամերիկյան լեզվաբանության մեջ մշակած անմիջական բաղադրիչների մեթոդի ընձեռած հնարավորությունը թույլ է տալիս տարբեր մակարդակների նշանային իրողությունները, մեր ուսումնասիրության դեպքում՝ արդի անգլերենի նշանային բաղադրությունները՝ բաղադրյալ բառից ու բառաձևից մինչև տեքստային մակարդակ, քննել միևնույն սկզբունքով, այսինքն՝ մի կողմից՝ պարզել վերասութային մակարդակում գերհամադրական ստորոգման և ողջ տեքստի ապաստորոգացման ու անվանացման հնարավորությունը, մյուս կողմից՝ լեզվախոսքային հարաբերությունների ծիրում ներկայացնել պատրաստի գեղարվեստական ատաղձը: Իսկ սկզբունքը, տվյալ դեպքում, վերացարկված հասկացական դասերի, հասկացական կարգերի և կարգային կաղապարների միևնույն ու միասնական մոտեցումներով կառուցումն է նշանային բոլոր բաղադրյալ միավորների համար՝ բեկված լեզու-խոսք-լեզվախոսք եռանդամության տրամաբանական, նյութական և հոգեբանական հարաչափերով:

Այս կարգի շերտավորված դիտարկումը բնավ շերտերի մեխանիկական առանձնացում չէ: Արդյունավետությունն ամենից շատ նրանով է պայմանավորված, որ յուրաքանչյուր գոյաշերտի զննությանը որոշակիորեն մասնակից են լինում մյուս երկուսը, որին նպաստում է, ինչպես նկատեցինք, տեքստի իմաստային կապակցությունն ամբողջացնող գերհամադրական ստորոգումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի մի բերելով սույն աշխատանքում արված դիտարկումները՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

1) Նշանային բաղադրությունները լեզվական երկպլան բաղադրյալ միավորներ են, որոնք շատ կողմերով գործառական համասեռություն են հանդես բերում: Այդ համասեռությամբ նրանք, լինելով տարբեր մակարդակների կառույցներ, ենթակա են նույնաբնույթ կաղապարման:

2) Կաղապարման հիմքում ընկած են մեր կողմից առանձնացված վերացարկված հասկացական դասերը՝ իրենց հասկացական կարգերով և այդ կարգերին բնորոշ չորս նյութական խոսքի մասերի քառակի հարաբերություններով, որոնցից յուրաքանչյուրի համար մեկական հարաբերությունն ինքնակերտ է, երեքականը՝ այլակերտ: Ըստ այդմ՝ հնարավոր է խոսքի մասերի 16 փոխակերպափոխանցումային հարաբերակցություն, որը համապատասխանում է նաև արդի անգլերենի կարգային բնութագրությանը:

3) Նշանային բաղադրությունների բնույթը հուշում է, որ դրանք, պայմանավորված իրենց երկպլանայնությամբ, դիտարկելի են լեզու/խոսք հարաբերությունների ոլորտում: Եթե մասնավոր լեզվաբանության մեջ առավելապես ընդունված է նշաններն ու նշանային բաղադրությունները քննել երկատման սկզբունքով, ապա արդի անգլերենի նշանային բաղադրությունների դիտարկումը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ քննության եռատված սկզբունքը լեզվական հորինվածքի ամբողջական ներկայացման առավել մեծ հնարավորություն է տալիս: Սրանով վերստին փաստում ենք արդի հայ լեզվաբանության առաջատար դիրքն այս ոլորտում, որի դրույթները հնարավորություն են տալիս, բացի լեզու և խոսք բևեռներից, նշանային բաղադրյալ կազմությունները ներկայացնելու նաև դրանք միմյանց կամրջող լեզվախոսքային գործունեության կամ հոգեբանական շերտի հաշվառմամբ:

4) Բառակազմական կաղապարները նշանային բաղադրիչների լիակատար ընդգրկման հնարավորություն են տալիս նշանասերման հայեցակետով: Ըստ նշանասերման ուղղվածության՝ անգլերենի ածանցումներն ու բարդությունները բնորոշվում են այլակերտության և ինքնակերտության թևերով:

5) Անգլերենագիտության մեջ մշակված ածանցման ու բառաբարդման կաղապարները վերակաղապարելի են հայ լեզվաբանության մեջ մշակված կաղապարային տեսությամբ, մասնավորապես Է. Աղայանի և Գ. Զահուկյանի ձևաբանական և բառակազմական հիմքերի՝ իրար լրացնող հայեցակարգերով, որոնք լիովին կիրառելի են նաև անգլերենի նկատմամբ:

6) Իմաստաբանական վերլուծությունն առավել ճշգրտության հասցնելու համար անհրաժեշտություն է ածանցային հետազոտության հաջորդական արտածման մեթոդը, առանց որի գործադրման ածանցների իմաստային դաշտի ոչ միայն թերի, այլև աղճատված պատկեր կունենանք:

7) Ինչպես բաղադրական հիմքերի դիտարկման եղանակն է տարածելի շարահյուսական կառուցվածքի վրա, այնպես էլ խոսքի մասերի իմաստային և շարահյուսական ու գործառական դասակարգումը, ինչպես նաև արժույթայնության և շարահյուսական միավորների համակցության օրինաչափություններն են հիմք տալիս համանման բացահայտումներ կատարելու բառակազմական ոլորտում:

8) Ուսումնասիրությունը, նվիրված լինելով անգլերենի նշանային բաղադրություններին, հուշում է, որ այն չի կարող սահմանափակված լինել ավանդական լեզվաբանության մեջ տարածված զուտ արտահայտության պլանի դիտարկմամբ: Նշանի բնույթից ելնելով՝ բացի նրա երկկողմ քննությունից՝ անհրաժեշտություն է նրա բովանդակային բազմաշերտ դիտարկումը: Հետազոտության այս եղանակները ընդհանրական են, և դրանցով քննության կարելի է առնել տարբեր լեզուների համանման երևույթները:

9) Խոսքի մասերի ներկարգային ու միջկարգային փոխակերպում-փախանցումները ոչ միայն շարահյուսական, ձևաբանական ու բառակազմական մակարդակներին են բնորոշ, այլև վերաստության մակարդակին: Հակադարձ փոխակերպմամբ անվանականացման ենթակա են բոլոր մակերեսային ստորոգական կառուցվածքները, այդ թվում՝ տեքստն ամբողջությամբ:

10) Լեզվական հորինվածքը միասնական կազմություն է, և նրա բաղադրիչ նշաններն էլ միասնական դրսևորումներ են ունենում՝ պահպանելով իրենց յուրահատկությունները: Ամբողջ լեզվական հորինվածքը մի նշան է, որի նշանակյալը

լեզվական բովանդակությունն է, նշանակիչը՝ խոսքային արտահայտությունը, իսկ դրանք իրար կապող օղակը նշանակումն է:

Թե՛ նշանային բաղադրությունները, թե՛ նվազագույն նշաններն իրենցում բովանդակում են ամբողջ լեզվական հորինվածքի կաղապարը. դրանք այդ հորինվածքի մանրակաղապարներն են:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. (Էջ 12) Isomorphism-ի հայերեն «համաստեղություն» համարժեքը ստեղծել է Է. Աղայանը [տե՛ս Աղայան 1967, 381]:
2. (Էջ 14) Երկրորդ աղյուսակի «The small lady listened to me attentively» օրինակը վերցրել ենք Մ. Բլոխից [M. Blokh 1983, 270-272]-ից՝ սակայն այդ նախադասությունը հեղինակից բոլորովին տարբեր կերպ ենք քննել՝ իսկ նույն աղյուսակի «There is a man at the door» օրինակն առել ենք Հ. Թոքմաջյանի աշխատությունից [Հ© Թոքմաջյան 1995, 213]Ք
3. (Էջ 24) **հնքնակերպ** (autogene) և **այլակերպ** (allogene) հայերեն համարժեք տերմինների հեղինակը է© Աղայանն է [Աղայան 1967, 380-381]:
4. (Էջ 24) Խոսքի մասերի անվանումների պայմանական նշանակումը հեղինակինն է՝ ըստ որի՝ N = գոյական՝ V = բայ՝ A = ածական՝ D = մակբայ [Blokh 1983, 46]Ք
5. (Էջ 88) Շարահյուսական դասակարգման սկզբունքով, ինչպես նշվել է, չորս խոսքի մաս է առանձնացվում՝ բայ, գոյական, ածական, մակբայ [Теньер 1988, 74-78. Атаян 1968, 176. Blokh 1983, 46]:
6. (Էջ 94) Այսպես կոչված, երեք և ավել բաղադրիչներով բարդություններին հարկ չենք համարում անդրադառնալ հետևյալ պատճառներով. 1) բազմաբաղադրիչ համարված բարդություններն ըստ էության այդպիսիք չեն, քանի որ նրանցում ևս ընդամենը երկուական կարգային (հասկացական) անդամներ կան, իսկ մնացյալ բաղադրիչները լիարժեք չեն, որովհետև կամ հոդեր են, կամ շաղկապներ, կամ էլ առդիրներ. 2) անգամ եթե լինեին լիարժեք անդամներով բազմաբաղադրիչ բարդություններ, դրանց ևս առանձնաբար չէինք անդրադառնա, որովհետև բաղադրությունների ուսմունքի համաձայն՝ անկախ բաղադրիչների քանակից՝ բաղադրությունը միշտ երկհիմք է. 3) նշանագիտական տեսանկյունից երկհիմք են ոչ միայն բառակազմական ու ձևակազմական, այլ նաև շարութային, ասութային և վերասութային բաղադրությունները:

7. (էջ 95) Գրական արևելահայերենի և անգլերենի բայական հիմքերի տիպաբանական ուսումնասիրություն ենք կատարել Դ. Գյուլզադյանի հեղինակակցությամբ [տե՛ս Գյուլզադյան 2009, 138-154]:
8. (էջ 111) Ստորոգիչը «է» բայն է՝ հանգույցը, որ կապում է հատկանիշը ենթակային [Գյուլզադյան 2005, 20]:
9. (էջ 112) «Թեմա» և «ռեմա» տերմինների հայերեն համարժեքներն ստեղծել է Գ. Զահուկյանը՝ առաջինն անվանելով **ենթահիմք**, երկրորդը՝ **մակաբերյալ** [տե՛ս Զահուկյան 1990]:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Ե., «Միտք» հրատարակչություն, 1965, 700 էջ:
2. Աբրահամյան Ա. Ս., *Բառի նշանագիտական բնութագրություն* // : «Լեզու, խոսք, իրականություն (գոյաբանական և իմացաբանական հայեցակետեր)»։ Միջազգային գիտաժողով (նվիրված լեզվաբան-փիլիսոփա, ակադեմիկոս Էդուարդ Աթայանի ծննդյան 85-ամյակին), ԱԶ «Արման Ասմանգուլյան», Երևան, 2017, էջ 23-32:
3. Աբրահամյան Ա. Ս., *Բովանդակության և արտահայտության հակադրման հարաբերականությունը լեզվում* // Բանբեր Երևանի համալսարանի (ԲԵՀ), Երևան, 1988, էջ 34-44:
4. Աբրահամյան Ա. Ս., *Նշանակյալի և նշանակիչի կրկնակի ներդաշնակումը լեզվում* // «Նշան, համակարգ, հաղորդակցում» (հոդվածների ժողովածու՝ նվիրված Էդվարդ Աթայանի հիշատակին), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 20-26:
5. Աբրահամյան Ա. Ս., *Ցուցանշանից խորհրդանշանին անցումը լեզվում* // ԲԵՀ, 2017, էջ 32-39:
6. Աբրահամյան Ա. Ս., *Տեքստային տարածության հորիզոնները* // ՎԷՄ (համահայկական հանդես), 2016, հմ. 3 (55), էջ 119-129:
7. Աբրահամյան Ա. Ս., *Տեքստի տարբերակները և Ռասելի պարադոքսը* // ՎԷՄ (համահայկական հանդես), 2016, հմ. 4 (56), էջ 117-129:
8. Աթայան Է., *Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը*, Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981, 392 էջ:
9. Աթայան Է., *Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը* // ԲԵՀ, 1988, հմ. 2, էջ 37-45:
10. Աղայան Է., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984, 372 էջ:

11. Աղայան Է., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1967, 404 էջ:
12. Գասպարյան Ա., Մուրադյան Գ., Գասպարյան Ն., *Գործառական ոճագիտություն*, Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2011, 234 էջ:
13. Գիլզադեան Դ., *Միացական յարաբերությունը որպես շարոյթի բնորոշման հիմնական չափանիշ* // SLT, Festschrift Prof. Dr. Dora Sakayan zum 65 Geburtstag, Montreal, «Caravan Books», 1996, էջ 42-59: 242
14. Գյուլզադյան Դ., Դանիելյան Ա., *Բայական հիմքերի տիպաբանություն՝ հանդիպադրությամբ արդի գրական արևելահայերենի և անգլերենի* // Գիտական հոդվածներ (բանասիրություն), Վանաձոր, 2009, էջ 138-154:
15. Գյուլզատյան Դ., *Էդուարդ Աթայանը, նրա ժամանակը, գործունեությունը և լեզվաբանական տրամախոսությունը* // «Լեզու, խոսք, իրականություն (գոյաբանական և իմացաբանական հայեցակերպեր)». Միջազգային գիտաժողով (նվիրված լեզվաբան-փիլիսոփա, ակադեմիկոս Էդուարդ Աթայանի ծննդյան 85-ամյակին), ԱԶ «Արման Ասմանգուլյան», Երևան, 2017, էջ 7-20:
16. Գյուլզատյան Դ., *Լեզվական նշանի տարածաչափական և հարթաչափական մեկնակետերը* // ԲԵՀ, 2017, էջ 24-31:
17. Գյուլզատյան Դ., *Նշանոլորտի սահմանը և բաղկացությունը. լեզվիմաստասիրական հայեցակերպ* // «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 27-39:
18. Գյուլզատյան Դ., *Շարոյթի ըմբռնումը լեզվաբանության մեջ* (սեղմագիր), Երևան, 2005, 26 էջ:
19. Թորմաջյան Հ., *Ժամանակակից անգլերենի քերականություն*, Ե., «Փյունիկ» հրատարակչություն, 1995, 248 էջ:
20. Մուսայելյան Թ., *Ստորոգում, խոսքի մասեր, փոխանցում* // «Նշան, համակարգ, հաղորդակցում» (հոդվածների ժողովածու՝ նվիրված Էդվարդ Աթայանի հիշատակին), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 197-206:

21. «Նշան, համակարգ, հաղորդակցում» (հոդվածների ժողովածու՝ նվիրված Էդվարդ Աթայանի հիշատակին), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 484 էջ:
22. Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1974, 588 էջ:
23. Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և քառակազմություն*, Ե., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1989, 320 էջ:
24. Ջահուկյան Գ., *Շարույթը որպես լեզվական միավոր // «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» (հանդես)*, 1990, հմ. 2:
25. Սոսյուր Ֆ. դը, *Ընդհանուր լեզվաբանության դասընթաց*, Ե., «Սարգիս Խաչենց». «Փրինթինֆո», 2008, 372 էջ:
26. Քարտաշյան Ա., *Մաթեմատիկա*, Ե., «Լույս» հրատարակչություն, 1983, 432 էջ:
27. Achim E. and Trabant J., *History of semiotics*. Amsterdam: J. Benjamins, 1983, 386 p.
28. Achim E., Eschbach-Szabo V. and Willenberg G., *Bibliography of Semiotics*, 1975-1985, Amsterdam: J. Benjamins Pub. Co, 1986, 948 p.
29. Austin J. L., *How to do things with words*. Oxford University Press, 1962, 166 p.
30. Blokh M., *A Course in Theoretical English Grammar*, Moscow, «Visshaya Shkola», 1983, 384 p.
31. Blokh M., Semionova T., Timofeyeva S., *Theoretical English Grammar (Seminars)*, Moscow, «Visshaya Shkola», 2004, 471 p.
32. Bloomfield L., *Language*, New York, 1949, 580 p.
33. Bolinger D., *Meaning and form*. London, 1977, pp. 38-54.
34. Bühler K., *Sprachtheorie*, Jena, 1934, 532 p.
35. Chomsky N., *Aspects of the Theory of Syntax*, Cambridge (Mass.), M.I.T. Press, 1965, pp. 8-25.

36. Cobley P., *Semiotics continues to astonish: Thomas A. Sebeok and the doctrine of signs*. Berlin: De Gruyter Mouton, 2011, 526 p.
37. Copeland J., *New Directions in Linguistics and Semiotics*, Houston, Tex: Rice University Studies, 1984, 270 p.
38. Damourette J. et Pichon E., *Essai de grammaire de la langue française : des mots à la pensée*. Vol. I, P., 1911.
39. Deely J. N. *Basics of Semiotics*, Bloomington: Indiana University Press, 1990, 164 p.
40. Deledalle G., *Charles S. Peirce's Philosophy of Signs: Essays in Comparative Semiotics*, Bloomington, Indiana University Press, 2000, 200 p.
41. Deledalle G., *Semiotics and Pragmatics: Proceedings of the Perpignan Symposium*. Amsterdam: J. Benjamins, 1989, 468 p.
42. Dietrich Th. and Andler A., *Structure and Theme in English Grammar*, The University of Michigan Press, 2002, 652 p.
43. Eco Umberto, *The Role of the Reader: Explorations in the Semiotics of Texts*. Bloomington, Indiana University Press, 1994, 226 p.
44. Giulzadian D., *Syntagma as a Linguistic Level of Existence, as a Phonetic and Syntactic Unit // «Semiotics and Language Teaching: Theoretical Principles and Practical Applications»*, 2001, pp.169-173.
45. Glinz H., *Deutcht Grammatik*. I (Satz – Verbum – Modus - Tempus), Frankfurt a. M., 1971, pp. 172-186.
46. Goldberg A., *Constructions, Lexical Semantics and the Correspondence Principle // The Syntax of Aspect*, OUP, 2005, pp. 215-254.
47. Greimas, Algirdas Julien and Guy de Maupassant. *Maupassant: The Semiotics of Text : Practical Exercises*. Amsterdam: J. Benjamins Pub. Co, 1988, 292 p.
48. Hamel S., *Semiotics: Theory and Applications*. New York: Nova Science Publishers, 2011, 272 p.
49. Harris Z., *Discourse Analysis // Language*, Vol. 28, 1952, pp. 1-28.
50. Hawkes T., *Structuralism & Semiotics*, Berkeley: University of California Press, 1977, 192 p.

51. Horn L., Ward G., *The handbook of pragmatics*, Oxford, «Blackwell» pub., 2006, 844 p.
52. Innis R., *Semiotics: An Introductory Anthology*, Bloomington: Indiana University Press, 1985, 332 p.
53. Jackson B., *Studies in the Semiotics of Biblical Law*, Sheffield, England: Sheffield Academic Press, 2000, 332 p.
54. Jakobson R., *Linguistics and Poetics // Style in Language* / ed. by Th. A. Sebeok. Massachusetts Cambridge, 1975, pp. 350-377.
55. Jespersen O., *Analytic Syntax*, The University of Chicago Press, 1969, 160 p.
56. Jespersen O., *The Philosophy of Grammar*, London, 1968, 360 p.
57. Liszka J., *The Semiotic of Myth: A Critical Study of the Symbol*, Bloomington: Indiana University Press, 1989, 244 p.
58. Martin R., *Semiotics and Linguistic Structure: A Primer of Philosophic Logic*. Albany: State University of New York Press, 1978, 372 p.
59. Max F., Ketner K. and Kloesel, *Ch. Peirce, Semeiotic and Pragmatism: Essays*, Bloomington: Indiana University Press, 1986, 474 p.
60. North W., *Handbook of Semiotics*, Bloomington: Indiana University Press, 1990, 576 p.
61. Parret H., *Semiotics and Pragmatics: An Evaluative Comparison of Conceptual Frameworks*. Amsterdam: J. Benjamins, 1983, 148 p.
62. Peirce Ch., *Issues of Pragmatism*, Harvard University Press, 1931-1958, Dover Publications, INC, 1955, 320 p.
63. Peirce Ch., *Principles of Philosophy and Elements of Logic*, Vol. II, Cambridge: January, 1932, 350 p.
64. Radford A., *English Syntax: Introduction*, Cambridge University Press, 2004, 384 p.
65. Rauch I., *Semiotic Insights: The Data Do the Talking*. Toronto, Ont: University of Toronto Press, 1999, 328 p.
66. Saussure F. de, *Course in general linguistics*, 1915, 124 p.

67. Sebeok Th., *Signs: An Introduction to Semiotics*. Toronto, Ont: University of Toronto Press, 2001, 194 p.
68. «Semiotics and Language Teaching: Theoretical Principles and Practical Applications», «Caravan Books», Ann Arbor, Michigan, U.S.A., 2001, 244 p.
69. Silverman K., *The Subject of Semiotics*. New York: Oxford University Press, 1983, 304 p.
70. Tejera, V., *Literature, Criticism and the Theory of Signs*. Amsterdam: John Benjamins Publishing Company, 1995, 166 p.
71. Tobin Y. *The Prague School and Its Legacy: In Linguistics, Literature, Semiotics, Folklore and the Arts*. Amsterdam: J. Benjamins, 1988, 318 p.
72. Torkild Th. and Sorensen B. (Eds.), *Charles Sanders Peirce in His Own Words: 100 Years of Semiotics, Communication and Cognition*. Boston: De Gruyter Mouton, 2014, 632 p.
73. Veivo H., Ljungberg Ch. and Johansen J., *Redefining Literary Semiotics*. Newcastle upon Tyne: Cambridge Scholars, 2009, pp. 109-133.
74. Yule G., *Pragmatics. Oxford Introduction to Language Study*, London, Oxford University Press, 1990, 140 p.
75. Walter M., *The Shape of the Signifier: 1967 to the End of History.*, 2004, 264 p.
76. Zima P., *Semiotics and Dialectics: Ideology and the Text*. Amsterdam: J. Benjamins, 1981, 574 p.
77. Абрамян Л., *Гносеологические проблемы теории знаков*, Ереван, Изд-во АН Армянской ССР, 1965, 256 с.
78. Абрамян Н., *Условность и знаковость // «Նշան, համակարգ, հաղորդակցում» (հողվածների ժողովածու՝ նվիրված Էդվարդ Աթայանի հիշատակին)*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 33-44:
79. Аветян Э., *Природа лингвистического знака*, Ереван, Изд-во «Митк», 1968, 224 с.
80. Аветян Э., *Семиотика и лингвистика*, Ереван, Изд-во Ереванского университета, 1989, 288 с.

81. Аветян Э., *Смысл и значение*, Ереван, Изд-во Ереванского университета, 1979, 412 с.
82. Атаян Э., *Аспекты организации и функционирования языковой сферы*, Ереван, Изд-во Ереванского университета, 1976, 192 с.
83. Атаян Э., *Предмет и основные понятия структурального синтаксиса*, Ереван, «Митк», 1968, 280 с.
84. Атаян Э. Р., *Язык и внеязыковая действительность*, Ереван, Изд-во Ереванского университета, 1987, 384 с.
85. Балли Ш., *Общая лингвистика и вопросы французского языка*, М., «Прогресс», 1955, 416 с.
86. Бенвенист Э., *Общая лингвистика*, М., Изд-во «Прогресс», 1974, 448 с.
87. Бенвенист Э., *Уровни лингвистического анализа // «Новое в лингвистике»*, М., «Прогресс», IV, 1965, 592 с.
88. Вартазарян С., *От знака к образу*, Изд-во АН Арм. ССР, 1973, 198 с.
89. Гаспарян С., *Лингвопоэтика образного сравнения*, Изд. 2-е, Лусакн, Ереван, 2008, 180 с.
90. Гаспарян С., *Фигура сравнения в функциональном освещении*, Ереван, 2000, 324 с.
91. Дорошевский В., *Элементы лексикологии и семиотики*, «Прогресс», М., 1973, 288 с.
92. Лаллерман Ж., *Полугруппы и комбинаторные приложения*, М., «Мир», 1985, 440 с.
93. Лосев А., *Знак, символ, миф*, М., Изд-во Московского университета, 1982, 480 с.
94. Мамудян М., *Лингвистика*, «Прогресс», 1985, 200 с.
95. Матезиус В., *О так называемом актуальном членении предложения // Пражский лингвистический кружок: Сборник статей*. М., Прогресс, 1967, с. 239-245.
96. Мешков О., *Словообразование современного английского языка*, «Наука», 1976, 248 с.

97. Моррис Ч., *Основания теории знаков*, Перевод с английского В. П. Мурат // Семиотика, Составление, вступительная статья и общая редакция Ю. С. Степанова, М., «Радуга», 1983, 638 с.
98. Панов М., *Русский язык* // Языки народов СССР, I, М., 1966, 544 с.
99. Пиоттух К., *Система префиксации в современном английском языке*, Канд. дисс., М., 1971.
100. Пирс Ч., *Логические основания теории знаков. Начала прагматизма*, Том II, 2000, 352 с.
101. Степанов Ю., *Семиотика*, М., Изд-во «Наука», 1971, 168 с.
102. Теньер, *Основы структурного синтаксиса*, М., «Прогресс», 1988, 656 с.
103. Фреге Готтлоб, *Логика и логическая семантика* // Сборник трудов, М., «Аспект Пресс», 2000, 512 с.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աղայան Է. , *Արդի հայերենի բացառիկական բառարան*, Երևան, «Հայաստան» հրատ. , 1976, 1616 էջ:
2. *Անգլերեն-հայերեն բառարան*: Խմբագրությամբ Հ. Ասմանգուլյանի և Մ. Հովհաննիսյանի: Շուրջ 30000 բառ, «Հայաստան» հրատ. , Երևան, 1984, 1144 էջ:
3. Նազարյան Ա., *Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան*, Երևան, «Ապոլոն» հրատ. , 1993, 656 էջ:
4. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., *Լեզվաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, Երեւան, 1975, 316 էջ:
5. Պետրոսյան Հ., *Հայերենագիտական բառարան*, Երևան, «Հայաստան», հրատ., 1987, 686 էջ:
6. Greimas, Algirdas Julien, and Joseph Courté's. *Semiotics and Language: An Analytical Dictionary*. Bloomington: Indiana University Press, 1982, 410 p.
7. Hornby A., *Oxford advanced learner's dictionary*, Oxford:Oxford University Press, 5th edition, ed. J.Crowther, 1995, 1428 p.

8. Hornby A., *Oxford advanced learner's dictionary*, Oxford:Oxford University Press, 7th edition, ch. ed. S. Wehmeier, 2005, 1780 p.
9. Matthews P. H., *The Concise Oxford Dictionary of Linguistics*, Oxford University Press, 2014, 480 p.
10. Trask R., *A dictionary of grammatical terms in linguistics*, London and New York: Routledge, 1993, 335 p.
11. Ахманова О., *Словарь лингвистических терминов* / О.С. Ахманова. 2-е изд., М., УРСС : Едиториал УРСС, 2004. 572 с.
12. *Лингвистический энциклопедический словарь* / гл. ред. В. Н. Ярцева, М., Сов. энциклопедия, 1990, 688 с.
13. Мюллер В., *Англо-русский словарь*, «Русский язык», М., 1990, 844 с.

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

<http://www.dissers.ru/1/14253-1-bbk-yuz-7ssha-5-udk-pirs-principi-nachala-pragmatizma-perevod-angliyskogo-predislo-vie-v-v-spb-lab.php> (Начала прагматизма): Հասանելի էր 2017-ի դեկտեմբերի 11-ին:

<http://www.arteria.am/hy/1311521321> (Ֆ. դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացի նշանակությունը. I մաս): Հասանելի էր 2017-ի դեկտեմբերի 12-ին:

<http://www.arteria.am/hy/yev1312663973> (Ֆ. դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացի նշանակությունը. II մաս): Հասանելի էր 2018-ի հունվարի 20-ին:

<http://home.wlu.edu/~levys/courses/anth252f2006/saussure.pdf> Saussure F. de, *Course in general linguistics*, 1915, 124 p. Հասանելի էր 2017-ի մարտի 25-ին:

<http://www.philology.ru/linguistics1/jakobson-75.htm> Р. Якобсон, *Лингвистика и поэтика* (Структурализм: "за" и "против". - М., 1975). Հասանելի էր 2017-ի դեկտեմբերի 11-ին:

Bornkessel-Schlesewsky, Ina, and Matthias Schlewsky. *Processing Syntax and Morphology: A Neurocognitive Perspective*. Oxford: Oxford University Press, 2009. <<http://www.dawsonera.com/depp/reader/protected/external/AbstractView/S9780191568138>>.

Հասանելի էր 2016-ի մարտի 6-ին:

Pesetsky, David Michael. *Russian Case Morphology and the Syntactic Categories*. 2013. <<http://ebookcentral.proquest.com/lib/concordiaab-ebooks/detail.action?docID=3339720>>.

Հասանելի էր 2015-ի դեկտեմբերին 4-ին:

Van Valin, Robert D. *An Introduction to Syntax*. Cambridge, UK: Cambridge University Press, 2001. <<http://dx.doi.org/10.1017/CBO9781139164320>>. Հասանելի էր 2016-ի մարտի 12-ին:

Carstairs-McCarthy, Andrew. *The Evolution of Morphology*. Oxford: Oxford University Press, 2010. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=472223>>. Հասանելի էր 2017-ի մարտի 4-ին:

Bybee, Joan L. *Morphology: A Study of the Relation between Meaning and Form*. Amsterdam: John Benjamins, 1985. <<http://site.ebrary.com/id/10589250>>. Հասանելի էր 2018-ի մարտի 4-ին:

Bondarko, A. V. *Functional Grammar: A Field Approach*. Amsterdam/Philadelphia: John Benjamins Pub. Co, 1991. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=799779>>. Հասանելի էր 2018-ի մարտի 4-ին:

Haiman, John, and Pamela Munro. *Switch Reference and Universal Grammar: Proceedings of a Symposium on Switch Reference and Universal Grammar, Winnipeg, May 1981*. Amsterdam: John Benjamins Pub. Co, 1983. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=784356>>. Հասանելի էր 2014-ի մարտի 25-ին:

Lieb, Hans-Heinrich. *Prospects for a New Structuralism*. Amsterdam: John Benjamins Pub. Co, 1992. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=793565>>. Հասանելի էր 2018-ի մարտի 4-ին:

Butler, Christopher. *Structure and function: a guide to three major structural-functional theories. Part 1, Part 1*. Amsterdam: John Benjamins, 2003. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=623151>>. Հասանելի էր 2018-ի մարտի 4-ին:

Butler, Christopher. *Structure and function: a guide to three major structural-functional theories. Part 2, Part 2*. Amsterdam: John Benjamins, 2003. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=623152>>. Հասանելի էր 2016-ի հուլիսի 25-ին:

Nørgaard-Sørensen, Jens, Lene Schøsler, and Lars Heltoft. *Connecting Grammaticalisation*. Amsterdam: John Benjamins Publishing Company, 2011. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=815995>>. Հասանելի էր 2017-ի մարտի 10-ին:

Takagaki, Toshihiro. *Corpus-Based Approaches to Sentence Structures*. Amsterdam: APhiladelphia, 2005. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=622389>>.

Հասանելի էր 2018-ի հոկտեմբերի 13-ին:

Nolda, Andreas, and Oliver Teuber. *Syntax and Morphology Multidimensional*. Berlin: De Gruyter Mouton, 2011. <<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=771233>>.

Հասանելի էր 2018-ի սեպտեմբեր 9-ին:

Frajzyngier, Zygmunt, and Erin Shay. *Explaining Language Structure Through Systems Interaction*. Amsterdam: John Benjamins Pub. Co, 2003.

<<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=622545>>. Հասանելի էր 2017-ի մայիսի 8-ին:

Manaster-Ramer, Alexis. *Mathematics of Language*. Amsterdam: J. Benjamins Pub. Co, 1987. <<http://site.ebrary.com/id/10526898>>.

Հասանելի էր 2017-ի փետրվարի 3-ին:
Stekauer, Pavol. *Meaning Predictability in Word Formation: Novel, Context-Free Naming Units*. Amsterdam: J. Benjamins Pub, 2005.

<<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=622823>>. Հասանելի էր 2018-ի օգոստոսի 4-ին:

Puglielli, Annarita, Mara Frascarelli, and Walter Bisang. *Linguistic Analysis: From Data to Theory*. Berlin: De Gruyter Mouton, 2011.

<<http://public.eblib.com/choice/publicfullrecord.aspx?p=690594>>. Հասանելի էր 2015-ի ապրիլի 1-ին: